

3. Мессенбург
Дир - Директор Канц
университета

891.99

п. 34

16 NOV 2011

Յ. ԽԱՏԱՄԵԱՆ



ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԻԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ի ՆՊԱՍՏ, ՄԵԿ ԲՕՐ ՀԱՅԻ
ԿԱՐՕՏ, ՄԵԿ ՔԱԲԻԿԻ ՄՈՒՐ,
ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐՈՒՆ

ԳԻՆ 70 Ք.

881.99

Խ-34

և

1915

Нахичевань на-Дону
Пар. тип. С. Я. АВАКОВА

Ա Զ Դ

«Նոր-Նախիջևանի պատկերներ» վերնագրի տակ հարկ համարեցի առանձին գրքոյկով ի լոյս ընծայել այն փոքրիկ աշխատութիւններս, որոնք տպուած էին «Լոյս» և «Մեր Զայնը» պարբերականներում:

Գրքոյկիս վաճառումից գոյացած ամբողջ արգիւնքը յատկացնում եմ ի նպաստ արնաքամ և բնակեր հայրենակիցներին, որոնք փախստական անուան տակ ստիպուած են աստանդական թափառել:

Անկիւն մը չունին՝ իրենց սարսափահար և սովաւորանջ դաւաճներին պատսպարելու. զուրկ են զգեստեղէնից, որ իրենց մերկութիւնը ծածկեն: Մնացել են երեսի վրայ, մէկ փոր հացի կարօտ, մէկ կոպէկի մուր:

Մուրացկան չեն նորա, որ մուրան. մարդկային վայրագ դազանութեան անմեղ զոհերն են նորա, մեր սիրելի արենակիցները:

Մեզանից ամէն մեկս, որ ապրում ենք ապահով վիճակի մէջ և հեռու ենք այդ սարսափներից, պարտք ունինք օգնութեան ձեռք կարկառելու նրանց, ամօքելու նոցա ցաւերը, որ, այն, և՛ մեր ցաւերն են:

ՆՈՐ-ՏԱՐԻՆ

Կալանառու — տոս, տոս,
Կալանառուը եկիլ է,
Դուռին հասեր կայնիլ է:

Միաքս ինկաւ իմ ժանկութեան օրերս: Կալանառուի օրը — Նոր-Տարին — մեզի, աղսց համար, ինչ ուրախութեան օր էր:

Մէկ օր առաջ մերոնք կը պաշլայէին կաթա, սամսա խորթելու: Աս օրը սաղաթանէն մինչև իր-կուն, անդադրում, կալանառուին մէկը կերթար, մէկալը կուգար: Մենք ալ նացա մէկին՝ կաթա ընկուղ, մէկալին՝ կաղին, քեզէ սուլսուղ կը պաժնէինք ու ինքերս ալ չի դադրած կուտէինք:

Անկից իրկուն կար, թոփ կլայինք մեծայիս քովը, սէքիին վրան, խոնճուղի հէրիաթը պատմել կուտայինք:

Իտա ժամանակը մէմալ նայիս, մամաս նես կը մոնէր, փալասքազիով մեռլը ձեռքը բռնած. — կը պաշլայէինք ձեռքէ ձեռք քաշելէն դգալով զարնել ու մեռլը ձերմկցնել: Անկից պոհրած կաղինը կձեռլաւ միշ կանէինք. կտորածները մամաս մեզի կուտար, սաղերնալ մեռլին մէջը կըցգէինք: Վար կաղանդ: Մէկ քիչմէնալ պապաս կուգար՝ դիմաց կվաղէինք, խաբմիշ կանէինք ձեռքի կապոցքները, կըպաշլայէինք:

պատէ պատ վազել, ցատկտել, խնտալ-խաղալ մինչև թալնալներուս:

Անկէց մեծաս կտանէր մեզի կպառկեցունէր: Քիչմը դռնակին մէջն ալ լվառլամիշ կլայինք:

— Չարութիւն մի անիք, տղաքս, — կասէր մեծաս, — քուն էլիք, չէնէ խոնճողովը պապայիտ պերած պախշինքը իրկունը կուգայ, կտանէ...

Մինք ալ կաքլէինք քունի կերթայինք:

Մէկալում օրը, սապալսթան կանոխ, լուսացած չի լուսացած, տեղերէս կելլէինք, ամենիս քովը նոր հալաւներ դրած կլար, կհագվէինք, սիրաերս տող՝ խոնառումներէս: Կերթայինք էնկ առաջ՝ մեծայիս ձեռքը կըպագնէինք, անկէց մամայիս: Նայալ մեզի վալը կտանէր, մէմէկ դիզալ կաղանա կուտար, անկից ճեպերս կիլինքցունէր՝ կաղին, չամիշ ու տահա պաներ:

Ամա առով մենք մայաներս չիգայինք. խելքերս, միտքերս պապայիտ պերած պաներուն հետ էր, անքան որ չի համարձակէինք նարա սէմթը երթալու. հապա նորէն կըվազէինք կերթայինք մեծայիս, նայալ հաղիւր արած կլար մեզի համար մէմէկ հատ կարմիր խնծոր, վրան արծաթ բեթաչիք խոթած, կուտար ձեռքերս, «գնացիք. պապայիտ ցուցուցէք կասէր»:

Մենք ալ խել պէս մէկզմէկի կտկտելէն, զարնելէն կերթայինք պապայիտ:

— Ի՞նչ է, տղաքս, արեցիք նայինք, կասէր, կպագնէր ճակատներէս, ամենիս մէմէկ հատ պախշիշ կուտար, — որիս խումաճիկ, որիս փորթմանէ... Նայեցէք չի պատուիր, կասէր, կշիէր զլոխներս. հայտա գնացէք, խաղացէք, կասէր...

Աս օրը մեր օրիկն էր:

ԼՈՒԻԹՈՒՄ

Հայ կիտի անցած-գնացած տղայութեանս ժամանակները. քանի որ ես սողիմնը՝ հիշ մոռնալու չիմ: Ան ինչպէս խոնառում կլայինք, կաղանդի, խութումի տօնի օրերը, մանաւանդ խութումի իրիկունը:

Մեծաս մեզի ամենիս ժամէն մէմէքատ մոմ կը պերէր. դիմաց կվազէինք, կառնէինք. որս՝ չինիին վրան կըկպցնէր, որս՝ կվառէր. ստովին քովը ժուռ կելլէինք:

Մամաս նես կըմանէր, փաթլամիշ ըլալու պան չիկայ, կասէր, տահա պապատ ալ ժամէն եկած չէ, կուպաթին ալ հաղիւր չէ:

Անկից՝ պապաս ներս կմտնէր. խոտ շամաթային արալիւր, մենք ալ խաղաղաթլլի պէս ետ կը բաշուէինք, տեղերս կելլէինք:

— Նստէք, նստէք, պալաներս, կասէր, մէմէքատալ նա մոմ կուտար:

Մէկ քիչմէն ալ կուպաթին հաղիւր եղած, պուհերը ելլէին, սըբութին-սըբոցի պէս փառաւորեալ կերպիւ Մաշինքա ճիճաներս ստովին վրան կըտնէր, ինքն ալ արունքրտինք պաթած, չիկտիմ, կ'ասէր, — կը հաւնիք, 40 թելէնէ. ամա քիչ մը աշխմիշ էզայ, տակը հում չիլայ աճէպ: Անկից բախլավա, բախլավա կը կառէր, չինիի վրայ կը շարէր, ամենիս տիմացը կը դնէր:

Միտքս է, ես կուպատի խիստ քիչ կ'ուտէի, կորկոտին կ'սպասէի, ան ալ մեծաս տիմացս խիստ քիչ կը տնէր, դիշերը աղէկ չէ, կ'ասէր:

Մէկալում օրը, տօնի առջի օրն էր: Տերտէրնէրը կուգային ճուր օրհնելու: Մեծաս կռնակներէս կտելէն խաշ համբուրելու կը տանէր. նաքանալ մեզի

մէմէկատ նշխարք կ'ուտային, Մէկքիչմէն՝ տայիներս, սոյերս կուգային, տահա ուրիշ մարդիքալ վերջը, շառխիճի Սրութինան—ծեր, երկան ճերմակ միւրիքով, հայր Աբրահամին լմանած մարդ էր։ Չալածէն պան չի հասկնայինք, հին խաղեր կը կանչէր, «Սանազալար», «գարթիր Մայրամ», «Աշխ Քէրիպին երգը»։ Թոփ էղած կը կանչէինք, ծան շամաթայ չի հանելէն, անկից ստակ կ'ուտայինք։

— Մեծ ըլաք պալաներս, կտսէր, պապաներուս մամաներուս մնացական, օրհնելէն-օրհնելէն զուրս կելէր։

Հապա կուծուկուծուն, կարմիր թուշերով, մամի կզակով, աչքերը ֆառլ-ֆառլ ցոլալէն, ինքնալ խնտուէն, պէլիէ՛ որ քիչ մը քաշած կլար. ամեն տարի կուգար, գէնիհաթը ան խաղցունելէր. մէքտտ եաշչիքի վրայ 2 իկուշքայէ, պուրդէ անցուցած, չուվանով վար-վեր կը քաշէր, անուշք ալ վեր-վեր կիյնէին, մենք ալ կը ճարդվէինք խնտալէն. երթալէն վերջն ալ անգաղբուս կը ցատքըտէինք. ատ ամենը մեզի համար մեծ ուրախունթիւն էր, մեծերնալ մեր վրան կը նայէին, կը շէննային, կ'ուրախանային։

Մէկ խօսքով անհող, ուրախ խաղալ խնտալէն օրերս կանցնէր. պապաներս ու մամաներս մեզի կը սիրէին, երես կուտային։ Աշխարհքը ես սալթը խաղալ-խնտալ գիտէի։

Չարունակ ատպէս, տարի-տարի ետեւէ կանցնէր. մենք ֆառլին չերթայինք, բայց ամեն պան մեկեր իրեն վերջը ունի։ Քուրս մեծցաւ, կարգեցին, հեռու տեղ գնաց. մեծ աղբարներս՝ մէկ հատը մարդու քով մտիլ էր, մէկալն ալ՝ Լազարեան ճեմարան սորվելու գնացիլ էր։ Նս ամենափոքրը 8 ես 9 տարու էի, տահա վարժատուն ալ չերթայի։ Մէկ

տարի մը, առաւօտու, գալանտոսի ծաներէն գարթեցայ, առաջվան պէս տեղէս չի թալայ, չելլայ, չի վազեցի, բենճէրէին մէջը սէյրանելու չի նստայ, սուս-փուս պառկած տեղս մտիկ արի... չի ուրախացայ, և ինքս-ալ գարմացայ ատպէս էղածին։ Առջի անգամը միտքի պաթեցայ, միտքս ընկան աղբարներս, քուրս, մեծաս, որնոր ամեն տարի տօնի օրերը կուգար մեզի կը գարթեցունէր, թուշերէս կը պաքնէր, նոր հալափներս կը պերէր կը հաքցունէր, — տասը ամիս է, մեռած էր։ Մամաս ալ հոս չէր, հեռու քաղաքէր, չիկալմ Մոսքով ես Սառքովտ, օբերացիի տարիլ էին. պապտալ ան ուրախ մարդը չէր։ Մաշինքա ճիճաներսալ, որնոր ետեներէս կը խենար, հինգատ պալաշաթայ վրան մնացիլ էր, որդին մեռնելէն վերջը նացա քովը կը կենար։

Կաղանտ ալ անող չի կար, մամ ալ պերող չիկար, պալաշիշալ։

Նս մէս-մենակէի տունին մէջը ծան, մարդու շունչ չիքար չըթ չանէր...

— Կալանտոս, տոս, տոս, տոս, զուրսը կը կանչէին, նացա պան տուող չի կար։

Եթիւ-եթիւ ես նեսը կուլայի, ինծի լսող չի կար...

— Դուռին ծանը ելլաւ. խաղախ պանուրը նես մտաւ...

— Барчукъ, вставайте, пара чай пить!

Անհավէս տեղէս ելայ. Անհավէս հագուեցայ, չայն ալ չի խմեցի։

Անկից իմացայ, որ պապաս տելեկում ստացիլէ. մամաս տօներէն վերջը պիտ գայ. կենէ սըլեցայ, կենէ կոխա կախեցի։

Մամայիս գնացածէն վերի է պապայիս երեսը տեսած չէի. խութումին օրն էր. կը նայիմ պապաս

սահաթը 12-ի ատեն ներս մտաւ, ձեռքն ալ նոմայ գիրքերով. — «Առ, էկլէմիշ էլիր, մէջը քառթիւններ կան. էկած տարիալ վարժատուն էրթաս նը, կարթալու պէտք կըլայ քեզի»:

Մինչև իրիկուն ատով ժամանակ անցուցի ու պապաս ալ կը կարթար, կը պատմէր:

Մէկքիւն մէն ալ պապայիս հետ ժամ կ'նոցինք. սուրբ Նիկողոս մեր ժամն էր:

Ժամը իպպիլինք մարդէր, օմուզ-օմուզի կայնած ասեղ ցըելու տեղ չիկար:

Ալայ խանդիւնները, ճառերը, շանատնները վրան իլինք մոմերով, կերոններով լուս ճառակ կը վառէին:

Տէրաւէրները կը կարթային, տիրացուները կեր-գէին. մարդիկ կը մտնէին, կ'էլէին, մոմ կը վառէին, աղօթք կանէին: Ես օրթանները մնացիւէի, պապայիս փէշէն պոնած: Կենէ մեծաս, մամաս միտքս ընկան. առաջները նացա հետ կերթայի. քիչ մնաց պիտ լայի:

Ատ ատենը ամենը պաշլայեցին ժամէն ելլելու. մենքալ ելլանք:

Տուն գնացած ժամանակներս, պապաս գլոխը կախած, միտքի պաթած, առջևէս կերթար, եսալ ետէն, կընայիմ իսկ և իսկ մեր Մաշինքա ճիճային տունին քովէն կանցնինք. ճանչցայ: Յաճ, ֆոքը միւրի տուն էր. վաղեցի փենճերէյէն նայեցայ: Ասօրուան պէս միտքս է. մէքատ չիրախի սոյ պան պըլդ-պըլդ կը վառէր. չորս-հինգատ ալ մանտը տղաք պոպիկ, պատռած հալաւներով. մէկը հացի կըտոր կըկոծէր, մէկալներնալ ձեռքէն կը քաշէին. տրապեզի պէս մէկ պան մը կար, վրան պարսպ:

Մինչև տուն հասանքնը, նոմայ տուններու քովէ անցանք. լուսաւորուած, օրթան սառլ դրած՝ ուտե-լիքներով, մէջը նոմայ մարդիք, տղաք: Կէնէ սիրաս

կնտեցաւ: Հասանք տուն. մեր տուննալ լուս էր, սառլ ալ դրած, մարդ չիկար, պապարապ էր: Պապաս հանից մոմերը, — վառէ պալաս, ասաց: Ո՞ր մոմն իս: Սիրտիս կունտը պոզազիս հասիլ էր. լացս պոնել չի կըցայ: Պապաս սուտ չի տեսնող եղաւ, փակուեցաւ, գնաց վալը սրբի գիմացը, կանթեղը վառից, ան-կից երկար-պարակ աղօթք արաւ, վիրա կը չոքէր, կենէ կ'էլէր. ես ալ լացի, լացի, դադըեցայ, սիրտիս աղուն էլլաւ, հանդարտեցայ: Պապաս եկաւ նորէն ստոլին քովը նստաւ, աչքերը վար արած, պէլլի էր, որ լացիլ էր:

— Ինչո՞ւ չիս վառիլ մոմը, պալաս, վառէ, վար ցըէ...

— Մաշինքա ճիճային տունը հապա վառուած չէ՞ ու, ասի յանկարծ...

— Ի՞նչ Մաշինքա ճիճա, հարցուց.

— Մեր Մաշինքա ճիճային. նացա ստոլին վրան մոմ ալ չիկար, ուտելու պանալ, ես էկած ատենս նացա փենճերէյէն տեսայ:

— Խօրթ նայէ, աղէկ որ ասիր. ես ախռ նացա ուտելիք պիտ խըկէի. միտքէս ելլիլ է. դուն նարա տունը գիալիս:

— Պապա, ես կը տանիմ, ասի:

— 2է հողիս, բիշերով ինչպէ՞ս կըլայ: Պաշլա-յեցի խնդրուել:

— Կեցիլը անպէս է նը, ասաց, իմ պոզազէսալ պան վար չերթալ...

Դիշ մը միտք արաւ անկից տեղէն ելլաւ կայնեցաւ:

— Ես ալ հետդ կերթամ ամպէսէնէ, ասաց:

Համան լծել տուից ծի արապան, ամեն ստոլին վրայի ուտելիքները սեքեթին մէջը դրինք, նստանք

արապան, կառլ-կառլ գնացինք: Դախ-դախ դուռը
զարկինք. Մաշինքա ճիճան գիմացներս ելաւ - բարե
Մաշինքա, միսաֆիր կնթունիս, ասաց պապա: Կնի-
մարդը մէկէն մէկ սեպեմիշ էղաւ, պուզ կտրեցաւ:

Մտանք նեա, բերինք սերեթը, ինչ կայ չիկա՝
հանեցինք, արապեղին վրան շարեցինք. տղաքը էնկ
առաջ պուհուլամիշ էղան, ետքը ինծի ճանչցան նը,
մօտկցան. նստանք արապեղին չորս քովը, մոմերը
վառեցինք, ամենքս ալ ճոխորեցանք, շտահներսալ
պացուեցաւ, աղէկ սոյէն կէրանք, տահա նոմայ պանալ
մնաց:

Քիչմը տահա տղոցը հետ խաղացի, վերջը պա-
պա - Ժամանակ է տղաս -- ասաց. հապուեցանք ել-
լանք. Մաշինքա ճիճանալ օրհնելէն, օրհնելէն ճամ-
փից:

Սաղ ճամփան պապայիս հետ կալաճի անելէն
եկիլ իմ: Տուն եկանք:

— Այ լալստ, ասաց պապա, տուն ինծի խրատ
տուիր, տուն ինծի վարցը անել սովրեցուցիր, Երաւո!

Անկից գնացինք պառկելու: Առաջները պառկա-
ծովս աչքիս տիմացը սեւի պաներ կերկային, ան-
կից ատ պաները կըմեծնային օպայի պէս, մեծ աղ-
ւաներով, կրտոջներով, կըակէ աչքերով սատանայի
սոյ պան. ես մէկէն-մէկ կը վախնայի, լեղատառտու
կը կանչէի, մեծաս կը վազէր, քովս կուքար:

— Կենէ կոխուեցա՞ր, պապա, կասէր:

Ատոր համար ինծի «հայր մերկինք» սորվեցու-
ցիլ էր. անկից ալ խաչ հանիլ: Աղօթք կանէի, խաչ
կը հանէի, քուն կկայի:

Մեծաս, մեռաւ, մամաս ալ հոս չէր, միտքըս
չիյնէր աղօթք անելու, կը մոռնայի:

Աս քիշեր միտքս ընկաւ. ծարէ ծար «հայր մեր-

կինքը» սաի, երեսասլ խաչ հանեցի, պառկեցայ քունի
կնացի:

Մէմալ նայիս էրածիս մէջ, ինչ տեսայ չիկաիմ,
սյլմպէյիմ, խեի պէս քունս կլոխս վեր թռայ, սախո-
սախո տողալէն, մէկ ծանի մամա-մամա, կը կանչիմ:

Կը նայիմ, պապա՝ մէկ ծեռքը չիւրախ, մէկ
ծեռքն ալ թուղթ պոնած տիմացս կայնիլ է:

— Սուս էղիր տղաս, սուս, հանգարովէ:

Ճորով-մորով այլնմիշ էղայ...

— Տեսա՞ր պապա, ծեռքիսը թելեկուտ է. ասոր
սապախտան, մէկ իրէք սահաթէն մամաստ պիտի դայ.
քեզի մալիմ էղիլ է, պառկէ զաւախս. տահա կանոխ
է. մամայիտ հետ սապախտան կը տեսնուիս. ես վաք-
զալ տիմաց երթում: Պապաս գնաց. ես ալ խնտուճէս
կլոխս եօռղանին տակը խոթեցի. նորէն խոռնտուճէս
պաշլայեցի լալու, անկից քունի կնացիլ իմ:

Սապախտան տաք-տաք թուշիս մէկմը կպաւ,
աչքս պացի, կը նայիմ, ինչ կը նայիս—մամաս, իմ
սիրական մամաս թուշէս կը պաքնէ:

Տօնի առջի օրն էր, կէնէ էկան տուներս տէր-
տէրներ, բեմէնճիններ, շառլաճիներ: Ես ուրախ էի,
խիստ ուրախ. բայց ուրախութիւնս տղի անխելք ու-
րախութիւն չէր: Տօն էր այդ օրը, ինձի համար, մօրս
զալուստը:

Ատկից վերի քառսուն տարի անցաւ. ես այժմ
50 տարեկան մարդ իմ, մամասալ, պապասալ մեռիլին:

Ամբողջ տարին չափալ-չափալ գործի հետ կը-
ծեծկուինք, անքան միտք անելու խասեվէթի գործեր
ունիմ, որ հալխին խասեվէթը անելու, անբախտու-
թիւնը տեսնելու Ժամանակ չունիմ:

Ամմա ամեն տարի, երբ խուլթուճի օրը կուգա-

ներ, ես նորէն կը դառնամ դարձեալ ան ութը տա-
րեկան տղան. միտքս կլինի մամառ, տատա, Մա-
շինքա ճիճան իրեն թոռներովը: Ես... ես սրտանց,
տղի պէս էքիւ-էքիւ կուլամ և ծեռքէս էկածին չափ
մարդու աղէկութիւն կանխմ:

Բայց ոչ լացածս, ոչ աղէկ գործ արածս մար-
դու չիմ իմացունուլ:

Տղայ չիմ,—ամօթ է լալը. աղա ըլալ չուզիմ.
պէտք չէ ուրիշին իմանալը:

ՏԵՐ ՄԵՂԱ

Արձակումի շաբաթն էր:

— Չինայելով, որ Զատիկը ներս էր, տուտ
երևելի հաւա էր:

Յերեկը՝ կերակուրնալ պալքօնը հասած կերանք,
իրկվան չախալ պախչան խմեցինք:

— Տուտէն ներս գալու չիխմէյիր:

— Իրկվան գէմ էր, չայէն վերջը, մերունք —
կնիմարդս, աղջիկներս, հագվեցան քալելու էլլան,
ժամալ կերդանք ասին:

— Ես մեյնակ մնացի:

— Ձերքիս վրան թէքմիշ եղած պախչան հատիլ
էի—խորկցիլ էի, միտք կանէյի, գործերուս, ապուս
վրայ: Փառք Աստուծու, գործերս աղեկ էին, տղաքս
ալ սիրտորս էին. աղջիկներս պարկեշտ, մանչերս
խոնարհ—պախտաւոր էի:

— Կամաց, կամաց տուտ մթնեցաւ, մութ-կա-
պուտ երկինքին էրեսը, մեռնիմ ստեղծողիս, հագա-
րաւոր աստղերը կը պըլպըլային:

Վերէն ճրվըլ-ճրվըլ ծաներ կը լսվէր, ատ կուռնկ-
ներն էին, ես կը տառնային տաք երկիրներէն իրենց
ծնած տեղը—հայրենիքը:

Հեռուէն ալ, եալիի սեմթերէն, թէքնէ խուռ-
պաղաները ճօշմիշ էղիլ էին: Թէմիզ ամառ էր:

— Տաք քամինալ, ելփեղէնով արածի պէս,
Փշ-Փշ էրեսիս կը փշէր:

— Ես քուռնի կնացիլ էի:

— Մեմալ հայիս մեկէն մէկ դարթեցա. ային-
միշ էղա:

— Կնայիմ հատուիճ, հատուիճ թէք չանք կը դար-
նին, Լուսաւորիչինն էր:

— Էլլա — կայնեցա տեղէս. խաչակնքեցի էրեսս:

— Մէկ քիչմէնալ, ամեն ժամի ճիֆը չանկերը
պաշլայեցին ճնկաւասամիշ անեւ. ատ իրկունը Տեր Մե-
ղա էր:

— Մահլան քանի կնաց տիրիւմիշ էղաւ. արա-
պայի ծան, ոտքի փաթուտի, կալաճիի ծան վիրա կա-
վէնար—հալսը ժամ կերթային Տեր մեղա լսելու:

Ես մահլային տուտը կայնած սէյիր կանէի. անց-
նելէն, անցնելէն կամաց-կամաց մարդիքը ցանցոցան,
սոխալը պարպվեցաւ, ժամի չանկերնալ դարնել դա-
դեցան, սուտունք ինջաւ:

— Իմ սիրտաւ խիստ ուղաց էրթալ, ամա տունը
մարթ չիկար, պելլի է որ՝ մերունք ալ Տեր մեղա
կնացիլ էին:

Մտա ազպար:

— Էրթամ պառկիմ տօի. կնայիմ լուսնինկան
պալապան չովինի պէս—վերջի քառորդն էր—կարմիր
տեղին կուռներով—կածկունած, պախչայիս ծառերուն
մէջէն մէյտան էլլիլէ, ու չորս քովը լուս պարի լուս
—լուսացուցիլ է:

Կենէ չիխմշեցի ներս էրթալու. կնացի էլլած տեղս նստաւ:

Միտքս ընկաւ, ասօրվան պէս աչքիս տիմացը էկաւ, ինչպէս ասիկից շատ տարիներ առաջ, Նէնէս— մամայիս մեծ մաման, պուշ կզակով, խմա արած պուշ էրեսով պառաւ էր:

— Հայտա պալաս՝ քեզի Տեր մեղա տանիմ, առայ:

Պոնից ծեռքէս, մութ, բօնթուռ, թօմառոտ սոխախնէրէն, էլլէլ, ինչնէլէն, կնացինք Սուրբ Թորոս: Սուրբ Թորոսը մեր ժամը չէր, տառա տէր-Գէորգին ասած կառկին ամենը կը հաւնէին, շատերը հոն կերթային: Ասեղ ձգելու տեղ չիքար. ժամը, կըտկալեցանք, մտանք ներս: Նէնէս վիրա վար վէր կար, կը չոքէր, աղօթք կանէր—լացածի պէս ծաներ կը հանէր. ես ալ 6 տարեկան կլայի զայր տա, ծիք փէշէն պռնած—քովը կը կայնէի:

Միտքս է՝ մէմէկ, մէմէկ կերոնները անցուցածները, ժամին մթնածը, անկից ես կլսիս Նէնէյիս ծունկին վրան կը տնէի, քունի կերթայի:

Ուրիշ պան չիմ յիշել:

Բայց վերջերը, ամեն տարի երթալէն, երթալէն պաշտայեցի հասկնալ. հաւեսով ծարէ ծար կտակը մտիկ կանէի, Քրիստոս տէրոջ տանջածներուն համար սիրտս քէշ կանէյի—կուլայի. փոխերը՝ պերանք կը երգէի:

Էնկ սիրած պանս էր Տեր մեղային օրը ժամ երթալը: Մէկ տարիմալ մեր մահլայի աղոց հետ կնացի. նաքա խախք էղան. մութին ժամանակը ժամը կուռտ կանէյին, ծարը տերցան կապած տարա նարա կլսուն կը քաշէին, մատերուն ծարը թուր կանէյին

— մարդու կը քսէին, կը վազվառէյին: Նաքա արին անելիքը, իմ կլտիս պատեցու, պապայիս անկաճը ընկիլ էր՝ ես ալ հետերը էղածս: Մէկ օրմ ալ պան չասած, զաւալըիս, առին մալչիք տուին Կեօռլիեմսիկի Ալեքսան աղային խանութը:

Ծանա չելլաւ—մարդիմ-շունիմ—կուղիմ էրթալ, չուղիմ—հարցունող չեղաւ—կնացինք:

Ամեն տարի Տեր մեղային իրկունը կուքարնը, խութսուզս, հոն ասօյքալին տակը պառկած, միտքս կիյնէր—էքիւ-էքիւ կուլայի:

— Մարդ, մարդ, մէկմը թէս կը քաշէ, խեցիլիս լինչ է. իսա արած պանտ պանի կլմանի՞, լացածս լինչ է հապա,

— Ինչպէ՞ս լաց, ո՞վ լացիլ է:

Մէկեր մի ասիլքի—նստած տեղս քունի կնացիլիմ, էրածիս մէջն է էղիլ է լացածս:

Աս ասածս տաք տարի առաջվան պան է, անկից, վերջը կլսուս չեկած պաները չիմնաց, պատմելու ըլամը թէմիդ հեքեաթ է: Ամա ինչ կլտներտ հոտեցունում. միայն ասքանը կասիմ:

— Կովական աղաքս, թահմին արածիս պէս չեւան, հեմ ալայ խապահաթը կնիմարդուան էր. վայան մեր հայ կնիմարդիքը, ալայ էրիկներուն եօխ անողը նաքային: Անքան էրես տուից որ աղոցը, նաքայալ, ալայ-մալայ թէփէներս էլլան:

Աս պէտք է՝ ստակ տուր, ան պէտք է՝ ստակ տուր: Քանի մեծցան, մեծ ցաւ էղան կլսուս, կէթինկէրի զնացին: Ինչ կը հաղորթվէյին, ինչ կը խոստովանէյին: Տեր մեղա, եկեացէ ժամ էրթալ ատպէտ պաներու վրայ մսիւր կանէին, էյ ինչ և իցէ. ստակիս վայ-վայ մամա կանչել կուտային:

Մեմալ իմ անպախդութիւնս ան է, որ ինծի տմենը խիստ զէնկին կիտէին:

Մոսկովցիները, պանքերը, վիրա կուտային, եսալ կառնէի:

Մտայ մտածիս խտտար: Ատ մէկ սեմթէն:

Մէկալ սեմթէն ալ՝ սօյ-սօփ, սիրելի բարեկամ, որը փօխ կառնէր, որը բաաբխըսոյով ստակ կուզե-նար — կարողասիրաէի — չէ ասել չիլընայի — կու-տայի:

Տարին կը վերջանար հետապ անելու կելէի, պան չի հասկնայի. արունս կլոխս կը զարնէր, ծար չէլ-լէի, չօթքին, տեֆտերները ֆուլթմիշ կանէի:

Մէկ օրմալ, ատպէս հետապի նստա. կնայիմ, կօթը-պոչէն անցիլ է. պանը պան չէր. մայսա պլլէ մէջ խաղացիլ էր:

Մարդու պան չասած, կադտուկ սօյէն կառվե-ցա: Ես ատպէս կիտէի, անխէ սող քաղաքը տուվ էլլիէր:

Ես քլպլիրիս չուտեցուցի, էլլա քաղաքէն:

Ամա նորէն գործ անել չիպաշարեցի, հազիրէն խարճելէն տակը ցրեցի ունիմ չուտիմիս. պէրէքէթ վերսին տունս կնկանս անուռնօմէր: Սաղ էր: Մենքալ արթիս էրիկ կնիկ ծերացիլ էինք, քաղաքներուս, տու-ներուս-տեղերուս, հայի ժամերուն կարոտիլ էինք:

Մեկորմալ էրիկ կնիկ տանջմիշ էզանք, ախաց-քին վերջի շաբաթն էր, էլանք Նախշվան կրվեցանք:

Էկանք համա՝ պատերը վրաներս կելէին: Մէյ-նակ էինք:

Ախշիկներս կարգվիլ էին, մէկը՝ ուստի գնացիլ էր, մէկալն ալ տուսէցիլ, մէկ հատ օրդիս ուստ մա-

տիսքայի վրա կարգվիլ էր, ուրտելի էզածնալ չիդ-տէի, մէքատէնալ՝ ինչ կիր ինչ կիրակոս ունէինք:

Մէկ հատ յոյսերս Կոնշս էր զակուանից կըսոր-վենար. ով կիտնա, նայալ նեմքայի եա ֆուանցու-ժանքայի վրա կարգվինը. ախ, ախ, շատ տիժար պան է, մարդ ծերութիւլ զաւակի խնտում չի տեսնէնը:

— Կենէ Արձակումի հինգշաբթին էր:

Աս անգամին Ձատիկը տուրս էր. հաւան չկու-նվելիք հաւա էր, արե արեգակ, երիշտա արօտները կանանչած, ապրիմ-չսպրիմները հոս-հոն մէյտտն էլ-լած — խուշերը, մէկ պուճախին վրայէն մէկալին վրան թռչելէն, կը գրուցէին:

Բայց մենք, էրիկ կնիկ, նեսը խաբաթմիշ էզած նստիլէյինք սիրտերս կոտուած էր, պանի վրայ նայե-լու աչք չունէինք. ես թէզպէն քաշելէն մէկ պատէն մէկալ պատը կը քալէի: Կնիմարդս ալ աչքը վեր չանելէն ֆալ կպանար:

Օրը անցաւ, դուրսը մթնեցաւ, Լուսաւորչի չան-կը կենէ հատուիճ-հատուիճ պաշլայից զարնել, ան ծա-նովը, ան էզկիօվը, ինչպէս ասկից 10 տարի-շատ տարիներ առաջ, իւրդմիշ ըլալէն, տողալէն:

— Վաղուցվան մոռցված պաները աչքիս առչելը էկան — Նէնէյէս թէք. ատ զարար չունէր: Բայց երբ միտքս ընկան իմ չորստա զաւակներս, որ ասօրվան օրը մեղիմէն հեռու էին. ինչ կանէին, ինչ պանի մէջէին — խապեր չունէինք, տառհալադ բացս պոնեցի:

Մօակցա կնիմարդուս, արի Տեր մեղայ էրթանք, ասի. — Նա պատասխան չի տուից, պելլի է որ կու-լար. ես անպետէնը կերթամ, ասի, էլլա տուս, ճանկի-ճանկի չանկերը կը զարնէյին սոխախը պարտալ, ժամ

էրթող չիքար: Իսկ ուս ժամին քովէն կէշմիշ էզաւ ծովի տողոունի պէս հազարաւոր մարդիք, կարմիր կանանչ ֆինեռները վառած, ժամէն տուն կը տառնային:

— Հասաւ հասարիւշ. մտաւ նէս, թէմիդ, լուս, տաք, առաջվանէն աղէկ:

Ժամը պարապ — էրկու ճիւղ մէկ թէք կնիմարդ, մէկ քանիստ տղաք, մէկ հատ ճանշվոր թիւիարքով մարդ չի տեսա:

Օտար քաղաք էկածի պէս պան էի. կասէյնալ հայերուն պանը վերջացած պան է տէին մեկեր խորթ է էղիլ է:

Սիրաս կոռուած տուն էլլա:

Տունի մօտեցա. կնայիմ փենճերէյէն լուս կեւրեա: Ատ ինչ սոյ պան է... ներս մտա՝ ինչ կնայիս. աչքիս կերեա կասիմ, չիմ հաւատալ... օրդիս, սիրական օրդիս, չուշաս, որին հինգ տարի է չիտեսածս. պլսճան կտոխճ տիմացս կայնիլ է:

Փաթթվեցանք, պարվորեցանք, լացինք, անկից հանաւարեցանք. նստանք — կալաճի, կալաճի, մինչև սահաթը էրկուս: Նա արթըն ինժինեռ խալսիլ էր. Շատ ապրիս պալաս ասի — ծերութիս ինճի խնտացուցիր:

Թըխ. թըխ տուռը դարկին. առ ինչ է հապա:

Պանվորը ներս մտաւ — телеграмма — Պաքուէն էր — տուռեցի փէսէս, вдемъ съ семействомъ կը գրէ. ասալ էրկուսում խունտումներս էզաւ:

Ձառկին օրը էկան՝ փեսաս, աղջիկս, էրկվատալ թուռերս:

Տուներս հարկ ու հարսնիք էզաւ. մեմալ նայիս բոշտալիոնը էրկվատ քառչքա պերից — մէկը աղջիկէս էր մէկալնալ օրդումէս:

Խունտումներէս շաշմիշ արածի պէս պան էյինք: Տառսըր ամենին, որ տապէս պախտաւոր ըլան, ինչպէս մենք պախտաւոր էինք Բրիտտոսի յարուլթեան օրը


ՄԱՐԻՅԱՆ

(Վարդէվորէք)

Գրածս հին պան է:

Մարիցան գէնկին մարդու աղջիկ էր: Ան ժամանակուայ աղջիկներուն մէջ նա մէկ հատ էր, էնկ իրվանին, էնկ մէյտանին: Խտուլէզ, Վարդեւոր, զիաֆէթ — նա ամէն տեղ կը գտնուէր: Նարա հալավը, նարա խաղացուածքը, նարա խօսածը — աչքի կիյնէր, ինքն ալ չիգնուէրիք տեսօք, ոտքէն մինչև գլուխը դրած պատկեր: Աչքը-ունքը խալէմով դրած, պուռշ-պուռշ մագերը ֆսած, էրկան, էրկու կաղ պոյը, էտեր կախուած, պոյ-պոսը ֆիտանի պէս, մէջքը պարակ, կուրծքերը հրեշտակային — կենճ աղոց խելքը թէփէներէն կը տանէին: Նա երբ մարգրիտէ խուլանը մէջքը ծիք կապած, օսկիներով ֆէսեալ գլխուն վրան բիշ մը ծուռկէկ տրած քալելու կելէրնը, անցնող տառցողները վրան նայելէն չէր կշտանային, շատերը կը սպասէին ետ տառցածին, որ մէմալ վրան նային: Կըտուիճ մնացած չէր, որ նարա խնամի չի խրկէր: Տիպոնճի, տէր-տէր, պապային տուռն-էրթիքը վար կուտային էրթալ քալէն: Նա լսել չուզէր: Ես կարգվելու չիմ կասէր:

Առաջվան ժամանակը, աղջիկները շինտլվան պէս, ամէն ինչ պախտաւոր ցըուած չէյին: Տարին ամենիս անկունստէս կելէյին որ Խտուլէզ,



Վարդևոր, խնակեճեսի, հարսնիք, անալ կարգվող ըլաբնը: Քանի տարին մեքնալ, խալիպին կոլովայու- թինին ժամանակը, սենաթուռի ետ կուպեոնաթըռի մեծ պալ կլար, անալ կոլի կտոր մարդիք ծան կը- տրվէր: Ամա ինչպէս խուստուսով կը սպասէին առ օրերուն ինչպէս օրմը առաջ կը պաշլայէին հաղիր- վորերու, մանաւանդ վարդևորին, զէնկին, ունչպեր ոտքերէն մինչև գլուխը նոր հալաւ կանէին: Նոր հա- լաւ կասիմը՝ թանկնոց մէկ պանմը չիկիտնաք, մուս- լունտիլէն փաթի, փոխափոշքի—ճէմը. 100 մանէթ- նոց շէաբ.— 50 մ. քառսէթ առալէս պաներ չիքային: Ամա կէնէ, ինչքան ալ ըլանը Վարդևորի օրերը մօ- տկնարնը, կնիկները էրիկներուն էփիէյի պէզմիշ կանէյին: Շիտակը ասել պէտք է, ինչ կը վասակէին էրիկները՝ որը՝ 1000 որը՝ 2000 ը. սերմիայով մար- դիք էին. հէպէթ աիթար էր նաքա համար ամէն նոր խարճ:

Մէկ տարիմը Նախշիմանի մէջ, խիստ պէլլիսըզ, տելվեթէ ընկած մարդիք, մէկէն ի մէկ մէյտան էկան, պատճառը .. որին կասէին մոսկովցիին ստակ կերա- ծէն է, որին,—թալեռը քավքազ չէրքէզներէն մանե- թի տեղ կնածներէն է, աւելի չար լեզուներնալ սքոռուպահաթիին այուլին անունը կուտային:

Առ հասարակ առ տարին շատ առատ տարի էր, վերջապէս ով չուշտ նա կուշտ, անցած կնացած պա- ներ ին. խօսքերս առոր վրան չէր, իմացարմը՝ պա- զար—ռեստ կալաճի կանէին՝ որ ֆէլանը ուիսաք կնիլ է, մէկալը քալեասքա, կենճ կուրիճներնալ խոշիլ ծիներ հաղիր արիլին—Վարդևորչէք: Անպէս որ Վար- դևորին աղէկ պիտ պատուովէյին առ ամառ, ստակը չիմեղքնալէն պիտ խարճէին:

Անպէս ալ էղաւ՝ տահա մէկ ամիս առաջ, թան-

կէն թանկ պախչային մէջը չառուի տեղերը պոնվե- ցան ձեռքէն ձեռք քաշէլէն:

Վերջապէս Վարթևորին օրերը էկաւ. շաբաթօր սապախդմանէն սուրբ խաչի պախչան էկան իլինը- ցան՝ պանուր, խզմէթըար, խանուլի փոխաշէիք տղաք, պաշլայվեցաւ չառու. խորթելու շամաթան՝ որը տի- րեք կը տնկէր, որը թաշը կը կամէր.— իրկվան թա- խըմ արին, խալսեցան,—պաշլայեցին արապա-արապա պերած մեպլինները, խալինները շարել-փոել: Անկից խալսեցներէն վերջը մութ պախչային մէջը ճիրիտ խաղալ: Ատոր համար ալ նաքայալ հալէսով կուգա- յին, առ ալ նաքա պախգն էր:

Մեկալուամ օրը, կիրակի, սապախտովանէն, քա- ղաքէն պոնած մինչև սուրբ խաչի պախչան, կէշմիշ էղածի պէս, սող քաղաքը աղքատ, զէնկին, արապա- ճի, սախաճի, կենճ, ծեր, պուլուլով տղայ, որը՝ փա- տէ տոսիով, որը՝ խանաթլը. պաշլայեցին էտե էտե էրթալու: Քալեքաներով աղաները պէպէսլէմիշ էղած նստած կերթային, քանի ծիները մէկզմէկէ կանցնէ- իննը-կըշփանային: Չաւալը ֆուխարէ մարդիքնալ սէ- յիր անելէն, տատէմօնէ էրթալէն իրենց քօռթոփալ ծիովը-էկէմիշ կլային:

Ժամի համուղները-ժամ կը մտնէին, անկից ա- մենալ կինջնէին պախչան: Սահաթը էրկուսի-իրեքի ուտել խմել կը պաշլայվէր:

Աղաները իրենց չառուներուն մէջը, օրթայ մար- դիք ծառերուն տակը, կանանչ արօտին վրան խալի փռած, պարճեր շարած, ֆուխարէ մարդիքալ՝ ժամին աղպարը, արապաներուն արիշները վերցուցած, վրան մէկ պանմը փռած, արևի տաքէն, ազատ, ոտքերը էրկնցուցած, օղլուշախնալ չորս քովը փոված, բաւա- կան, հարկաւ հասնիք-ուրախութիւն կանէին,

Անկից՝ քիչ մը ետ առնելներէն վերջը, արեւ մարմոնելու ժամանակ, նորէն կաշաշայվէր խալապալը-խը.—կէնճերը կելլէին քալելու, աղջիկները ֆօլթա կանէին, կտրիճները սրայով կայնած, իրենց նշանված կը հետուէին:

Մէկ քանի քէռթիկ զենկինի շիք տղաք, աչքերը չորս քովը Մարիցային կը վնտուէին, նաւա կուզէին տեսնել: Մանաւանդ լսիլէին, որ Մարիցան առ տարի շեւաբով պիտոյա. առ ամենին պերանն էր—մամաները առջևէ պամպասել պաշայիլ էին. բայց նա չերեցաւ:

Մարիցային պապային չատըռը մոտթին էնկ ծաւն էր, պախչան մտածովա, սաղին: Առաջ առ տեղը առջի տեղը կը համրվէր: Մարիցային պապան ծեր խզզանջ մարդ էր, բայց աղբարը զակոսանիցներ պաներ քալած, մօտնի մարդ էր—ինքն ալ ստակ կը վաստկէր, ամէն նոր պան նարամէն կսկսէր, քրօջը շեւաբն ալ նա պերիլ էր. չատըռին մէջը կարմիր կանանչ ֆանառներ կախիլ էր, իրկունը ֆէյեռվէռք ապուլ պիտ տար: Մարիցանալ մէկ պատճառ—հարիւրաւոր մարդ տացա չատըռին տիմաց ճամալ սէյիր արածի պէս թով կլային:

Առ օրը Մարիցայինց չատըռին մէջ էրկվատ նոր մարդ կային, մէկը պապային Աթաբխանցի բարեկամին օրդին՝ խիստ զէնկին, մէկալը աղբօրը բարեկամը՝ Մոսկոֆէն նոր հրաւիրված վարժապետը—ուսիվեռսէթ վարժված:

Երկուսն ալ կերակուրի ծան տրված էին: Ուրիշ մարդիք ալ կային նախշվանի աղաներէն. ստօլին վրան չեղած պանը չիկար, շամբանէն—սիկառէն թէք: Կերան խմեցին, զլոխները էլլաւ: Վարժապետը սող

ժամանակը կը խօսէր—ամենը մտիկ կանէին նարա—անկից սկսից առաջարկել կենացներ, տան տէրոջը, տան տիկնոջը-հիւրերուն—ամենին քէֆերը էկաւ. բայց երբ նա առաջարկից հայ աղջիկներու կենացը և բաժակը ձեռքը առած մօտկցաւ Մարիցային—ձեր կենացը, ասաց, պապային փէռը ման էկաւ, քիթը պերանը ծռմոխից—կալաճին փակից:

Ինչո՞ւ Մարիցան, առ իվանի աղջիկը, որին ճանբան կսպասէին հարիւրաւոր կտրիճներ, չէլլաւ չի քալից իրեն նոր շեւաբովը, որն որ նարա պէթէր կուգար. հայլիցին մէջը տասը անգամ հազիլ էր նա-յիլ էր: Ի՞նչ պատահիլ էր նարա հետ սօր: Պատահածը աս էր՝ մէկը—Աթաբխանցին, (Մարիցան անբան խելօք էր, որ նա հասկցիլ էր—թեքէլի չէ նարա պապին աղին առջևէն էտէն ման էկածը—պէլի է որ կուզէյին Մարիցային նարա տալ) իսկ երկուսումը վարժապետը:—Նա նարա հաւնածը մէկ ամիս կլար, ան օրվանէն, երբ նաքա պատահեցան—բառախոտի մէջ, որն որ առջի անգամը Տօնին վրան քալել պաշայից, նախշվանէն Հին-Քիրման գնաց էկաւ:—Նարա պարեկամացուց վարժապետին հետ—Մարիցային աղբարը: Սաղ օրը սապախտանէն մինջև իրկուն մէկտեղ էին: Մարիցային համար—առ ամենը նոր պաներ էին բառախոտով քալել ձուրին վրան, կենճ սորված մարդու հետ սաղ օրը նստել էլլել, խօսել: Նա առ օրվանէն քունը կորուցիլ էր, բայց նեսթիէն մէկ աղէկ նոր պան կըզգար—մէմէկ ատեն շատ կը խնտար, մէմէկ ատենալ կը տխրէր, որ առաջ հիշ չիգտէր: Վերջապէս բոլոր յոյսը մեմալ Վարդուորին ռոտտ քալն էր, գիտէր վարժապետին իրենց գալուն:

Բայց ի՞նչ օգուտ. սաղ օրը անցաւ, նա չի հա-

մարձակեցաւ նորա հետ կալածի անելու. էնկ վեր-
ջնալ իմացաւ պարպային հազ չարածը:

Վարժապետը մէկքիչմէն, երբ տեսաւ, որ խմող-
ները չափերը փախուցին — հեռացաւ, բայց Մարի-
ցային աչքին մէջը նա անպէս նայեցաւ որ մէկզմէ-
կու հասկցան, որ պէտք է, անկարելի է, մէկ էրկու
բառ պիտ ասին մէկզմէկու:

Չորս քովը շունը տէրոջը չէր ճաշնար:

Մարիցայինալ աստ պէտք էր: Նա սլովէն տուտ
էլլաւ չառնոին էտեի տուռէն, ճանկիւկէն, բերթըվե-
լէն խամշլխներուն մէջէն էլլաւ էտեի ալլէյը, կլոթը
տաք-կըտի, սիրտը թը՛ռ-թը՛ռ:

Ինչո՞ւ կերթար, որտե՞ղ կերթար, նա ինքնալ
չիգտէր:

Մէմալ նայիս, հեռուէն մէկ շուքի պէս պան մը
էրեցաւ — շուքը մօտկըցաւ... Մարիցան կանգ արաւ...
նա էր, վարժապետն էր:

— Մարիցա, դժն իս... ինչպէ՞ս չի վախեցար...

— Չիգտիմ, ինչ կըլայ ինծի, ասաց Մարիցան...
և էրկուսը մէկզմէկու փաթթված գտնուեցան... և
մութ ալլէյին մէջը համբոյրի արձագանք լսուեցաւ:

Հեռուէն նորէն շուքեր էրեցան. Մարիցան ֆառ-
ղին գնաց ով էղածները, սիւթմիշ էղաւ վարժապե-
տին ձեռքէն, մտաւ կէնէ խամշլխին մէջ ու տրի-
լիսնը կըտիր... վարժապետը փաթթված գտնուեցաւ
աղլի քէոթիկ կտուիճներովը.

Ա՛... ան, վարժապետ, ասին, դաղը բարի, աղէկ
բան է սորվեցուցածդ: Չարկին խեղճին ցիլինառին,
վար ձգեցին, իրեն ալ կուգէին ծեծել... իտա մինու-
թին փշոֆի ծան էլլաւ, քեռթիկ կտուիճները փա-
խան, վարժապետն ալ խալսեցաւ ձեռքերէն:

Սաղ գիշերը հալիսը բեֆ ֆանէին, հոս գուռնա,
հոն քլառնեթ, շառխի, խաղի-տաղի ծան:

Մարիցային շատուին բոջնալ Աղապալին փառ-
թին կը կոտոտվէր, — խանաղալար, կէչ հաւա, տահա
Խըրմի ուրիշ հաւաներ. ինքնալ Աղապալին սլովու-
պոլումի կուգար, կաշիէն կելլէր խաղ կանչած ժա-
մանակը-շապաշ պոլ առնիմ տէյին. Մարիցային պա-
պան, աչքերը հարած, քացալս խմած կատուի կլմա-
նէր, շողունքները վազելէն, վիրա կը փաթթվէր
Աժարխանցի կտրիճին: Ես քեզի կը սիրիմ, իմ սիր-
տոքս աղայ իս, կասէր:

Կամաց-կամաց պախչան հանդարտեցաւ. լուսու
սեմթ ամենն ալ քունի կնացին, միայն անքուն ան-
ցուցին վարժապետը և Մարիցան:

Վարդեմորին էրկուշաբթին Մարիցային Աժար-
խանի կտրիճին հետ խօսքը արին: Մարիցան պերանը
չիպացից, խօսք չասաց. իրկվան փեսին խոլթուխէն
մտած, ինքնալ շլեաբը հագած, ամենին խնտալէն,
պաբե տալէն կը քալէր: Վրայէն նա խիստ տեսօք էր
բայց նէսթիյէն քաշածը ինքը կիտէր:

Մեր կէնճ քէոթիք տղաքը, երբոր տեսան պուզ
կտուեցան, պաղեցան, էրէս-էրէսի նայեցան — էրէկ
վարժապետը, ասօր Աժարխանի տղան... ինչ սօյ
պան է, պան չիհասկցան. վարիսա եախշ ինք, ասին
խիստ քեսթ ընկան. զօներէն կնացին արապաճիի պէս
խմեցին, էրկվաս տավուլ պատուեցին, մէջը շապաշով
իլինքցուցին:

Իսկ վարժապետը աստ փորձանքէն վերջը ամիս-
ներ հիւանդ էր:

Ամա մէկին սըռը չիմացուեցաւ:

ՊԱՐԿԵՆՏԱՆՔԻՆ ԿԻՐԱԿԻՆ

Միտքըս է ասօրվան պէս, ինչպէս մենք, աղայ
ժամանակներս, պարկենտանքին օրերը ճամալ կըլա-
յինք շաքարի թուղթէ քելահը կոխներս հագած,
երեսներս մուր եա պօռ քսած, թէոս արած հալա-
ւով, ծակ չովինէ տավա չալելէն՝ հօփ-հօփ վեր-վեր
կըյնէինք, պապասալ վրաներս կը նայէր, կը խըն-
տար, կը շէննար, պէլլի է, որ իրեն կենճութեան
ժամանակները միտքը կըյնէր: Պարկենտանքին կիրա-
կին շթէ աս խաղը կը կանչէր:

Պարկենտանքին կիրակին
Սեքսեթառին բեռակին,
Քեմիչէն ձեռքը թիրաքին
Համը նայեցան քաղաքին:
Աս քաղաքը՝ ծով կիտիւ,
Խայրինիւրով կը քալիս,
Էքի չանա, տերա էկիւղ,
Խախօլ Վասիլ ուշիւղ,
Տոանպացուկի տիմօնճի,
Թայֆալարը հաղըճի,
Սաղ քաղաքը պտուտ էկան,
Մասխարա եղած տուն էկան:

— —

Ասոր պատմութիւնն ալ աս է:
Մէկ տարիմը, Պապուկ աղային կօլովա էղած
ժամանակները, երբ տահա Նախշըվանը փեովելէկ
ունէր, հայի օրէնքները, հայի մայտորաթ, մէջը ա-
ռաջի դատաւորները, աղաները, ամենքը հայ էին,
մէքամ ճէմը սեքսեթառը խաղախ էր, կուպեռնիյէն
կը խըրկէին—հանած-վարածին մէկը կըլար — ամա մեր
աղաները մեծ պատիւ կուտային, տուները կը տա-
նէին, կը պերէին, փոխ ստակ կուտային, վերեսեա

պարի. «սեքսեթառներս ծառայէ», կասէին, անխէ
լըենք տիմացը խեղճ կըկըտէին—լաքէյ: Շինտխալ
շատ առաջ կընացած չինքալ տա դիաց՝ արալօտըչ-
նիլի ձեռք կանուներ, չլէն փռավենիին, հային բա-
րևը անձախ կաննինք: Էնճամը, մէկ տարի մը, ասած
սեքսեթառս, պարկենտանքին կիրակին, մեր աղա-
աղայարներուն իրեն տունը ծան կուտայ բեռովի:
Իրենցմէն առած փոխ ստակովը կը հարկէ՝ կինի,
փունճ, ամեն պանը պօլ-պօլ: Մեր աղաները սօյլմ
սօյէն կուտին, կըլարմին, կըքօռանան, շունը տէրոյը
չի ճանչնալ: Իտա արալըխը սեքսեթառը նես կը
մըտնէ քափիթանի հալավ հագած՝ երկու իրեք հոգի
ալ մաթոռսի հալավով. «նու կասպատա, կասէ, քառ-
նավալ հաչինաթեցը, ետեմթէ»:

Տուները կը պացվին, մեր աղաները քօթօփալ
տուս կելլին:

Ի՞նչ կը նայիս՝ էրկու չանայի վրայ մեծ խայրիս
դրած, օրինաւոր կէմիլի պէս՝ երբեններով, Ֆլակնե-
րով, երկու ճիֆթալ եզ լծած: Թիրաքիին փառթինալ
մէջը նստած ան ժամանակվայ էնկ մօտնըյ մառշը
կըչալէ «Дочь второго полка», չի լըսված, չը տե-
նիված պան մեր քաղաքին մէջը:

Էնճամը ինչ էրկընցունում, աղլի սեքսեթառը
մեր աղաներուն երեսը մէմէկ հատ մաքա կանցու-
նէ, խայրիին մէջը կը նստեցունէ, չալելէն-չալելէն
ճամվայ կըհանէ:

Սաղ քաղաքը կը քալին:

Հալիսը ժուռ կելլէ:

Առապէս պան ո՞վ տեսիլ էր: Կը պաշային սիւրի-
յով էտններէն էրթալ: Անկից, կամաց-կամաց, մեր
աղաներուն՝ որին ճըլղվայ, որին պօղաղ, որին պետեն

մուշտակներէն ֆառղին կերթան ու էղածները, շամաթան կը մեծնայ, կը պաշտային թօսաթիւի առնել, խնտալ, սըզընթմիշ անել:

Քափիթանը՝ սուր մարդ, ֆիթիլը կտունէ, համան, չափը չանցած, եղերուն կլտիսը ման կը պերէ, տիտպապան դէպի տուն:

Ամա, մէկալուսմ օրը, սաղ քաղաք տուվ կելլէ ու էղածները: Պապուկ աղային անկաճնալ կիյնի:

Ազաները աղէկ թաղիր կը լսին, մէկ քանի օրէն ալ առ խաղը վրաները կելլէ: Զաւալը աղաները սաղ ախացքին ծում կը պլունին, իրենքալ ամըշցածներէն տուս պիլէ չին էլլի, սուտ հիւանդ կըլան:

Ո՛ւրտեղ է շինտխ առ ուղ-համուսը:

ԿԱՂԱՆՏ

«Լաւ է Կաղանտ, քանց Վարդուր» հին կալաճի է. ուրտեխէն էլլած է, լիւն է միտքը, տեղով չիկտիմ. թահմինով, պես պելլի է, տիմացը ամառ է, — առ է միտքը բանին:

Ամեն մարդ անհամբեր կապասէ նոր տարիին:

Մեքատ ամառվան արևը լիւն կարժէ՝ — ցորենները, արօտները չիչակները, եմիշները, ամենը արևի դօրքով մէյտան կուգան:

Մեղի ապրուստ տուողը ամառն է:

Առ յուլսով կապրինք մենք, ատոր համար ալ նոր տարին խոնառումով կընդունինք:

Մենք ալ աղայ ժամանակներս, ամեն տօներէն աւելի կը սիրէինք կաղանտը. մեր փորի ցաւը իհարկէ ուրիշ պան էր՝ բռանիք, կաղին, ընկուզ, քեչէպուշնուզ ուտելէն կը կշտանաինք, անկից՝ մեծաներէս, պապաներէս, մամաներէս պախշիշ կըստանաինք, խնծոր՝ վրան բեթաշիք խոթած, խախէ թօփ, տուտուկ, մանուռ-մունտու պաներ, ամա մեղի համար մեծ պան կերևար. կտանէինք պարցերուս տակը կը պահէինք. խոնառումներէս քուներս չի տանէր, հապա սոխախի կալանատոսները, մուզիքանները ազպար կը մանէինք, կանչելէն, չալելէն, խեցածի պէս, առ փենճերէյէն ան փենճերէն կըվազէինք, սէյիր կանէինք:

Կաղանտին իրկունը՝ պապաս, մամաս, կարգած բուրերս, աղբարներս կնիկներով, տուռ-տիրացին մեր տունը թօփ կլային. մինչև կէս գիշեր, հոսէն հոնէն, անցած կնացած պաներու լաֆեր կանէին. կը յիշէին գործի փեռատ տարիները-զարար արածները, յաջող տարիները-վաստակ արածները, շախա կանէին, կը խնտաին:

Մէմալ նայիս պատի սահաթներս 12 կըզարնէր պապաս առջինը — կելլէր տեղէն, կերթար մեծայիս ձեռքը կը պաքնէր «շնորհաւոր նոր տարի մամա». — «ամեն տարի պարով հասնիս պալաս, շատ խնտաս, թոռերուս պապը պաքնիս», անկից ալայ կենճերս ծերերուն ձեռքը կը պաքնէինք:

Մեկ քիչմէն երթալու կլայինք — կեցիք կեցիք կը կանչեր մամաս: Մեմը կաղանտիս, խմորիս համը նայեցէք, կասէր չինի-չինի կպերէր, կը շարէր սառլին վրան՝ ծալծաւներ, կաթաներ, սամսաներ, սոխրացով պերեհի, կաղանտ, չոր եմիշէ խոշաֆ՝ մենք

ալ կնստէինք համը նայելու՝ տակը կը ցըէինք: Եղաւ
կնաց. հեմ աժան, հեմ թաժան. ամենին տունն ալ
սա էր. գենկինին ալ, աղքատին ալ: Աստ սոյ զահի-
րեներ՝ մեռդ, սոխ, չոր եմիշ Ռաստով ետումալլէն
առած կլային, կը պահէին:

Քիւլ կապրէին առաջ, ամա սիրտերը հանդիսա
էր. պազարի խասիկէթ չի քար. բեռէուչօդ ինչ է՝
չիկաէին:

Քիչին քիչը կօքտէր:

Ամա շինախ, շատը շատին չօգտիլ:

Մէմը բռօպ արա. շինախման լաղօտներուն տալ
բռանիք, քէչեպուշնուդ — ֆըռլաթմիշ կանին, տահա
վրատալ կը խնտան:

Նացա աչքը պացվիլ է, սորվիլին աղէկ պանի.
նաքա տեսիլին 100 մանէթնոց եօլքաներ — վրան կախ-
ված՝ Էյնեմի, Ապուքոսովի, չէշիթ-չէշիթ քառոսպե-
սներով քանֆեթներ, թանկնոց իկուռքաներ:

Քէչէպուշնուդ. չէ տահա ինչ:

Նացա պուկէն հասարակ շօքօլտանի քանֆեթը
պիլէ վար չէրթալ:

Կալապեթու չուզիս:

Ինչ կը ցանիս, ան կը հնծիս:

Խապահաթը պապաներուն, մամաներուն է, ինչ
օրինակ կը տեսնին որ:

Իրենքալ իրենց պապաներուն կերած պաները
չին ուտիլ, նոր տարի վազուչապ անելու տունը չին
հատիլ առաջվան պէս:

Հապա հալաւները. իստ մեր կնիմարդոց ու աղ-
չիկներուն հալաւները, հեռի հարկինքէ. Հալախին
ասիմը — ետնշմիշ չիմ լալ:

Բլաթինները պիւրիւնճիկէ, կոնակները, սիրտերը

պաց, մնացած պաներն ալ տակէն կերեալ, հա, մօանի
է, տեսօք պան է, աչքի կլարնէ, շանսօնեթքայի,
պալեթնի քթթուսայի կը վայլի. բայց հայ կնիմարդ,
աղչիկի վայելուչ չէ. — ամօթ է: Մեր էրիմարդիքնալ
օրինաւոր ֆուստ տառցիլին — սօգիլի, ֆուք հա-
ղած, պըլըխները խոթմա արած, մազերը տիւզ սան-
տած, ծթած — պաշլայիլին երեսալ կնիկներուն հեռ-
տարին մեմը երկուս — քուպ, դեադու, քապառէ: Աչք
պոյալամիշ կանին հալխին դիմացը, նաքայալ հաւա-
տացին — կնացին: Վերչի տարիները խիստ մօտ է
ПОДЪ НОВЫЙ ГОДЪ ուժին անել քամփանիօվ. աս շիք
է: Շտէ աս շիքը ու մօար չէ որ մեր հալխին եօխ
անողը — քսահինդ եոսուն մանէթ կուտան սալթ ոթօ-
լը գանիմաթ անելու. սահաթը 12-ի ժամանակ — նոր
տարին նես մտածովը ուրախութիւնը քանի կերթայ
կը մեծնա: Մուզիքի ծան, չաթալ-տանակի, չինիի
շամաթա, բութիլքաօյին, չադուտամիշ անիլէն կը
պանան բոսպքաները՝ քօնեաքը, շամբանաքի, լանին-
սքի, սիրտը ինչ կուզէ, օվկիանոս ծով: Կալաճի,
շախա, ամուր ծանով, կամաց — անկաճ անկաճի,
ֆիլոդի սոյ պանալ, ով որին է. խելօք հարբած, կա-
րող է պատահել: Ասպէս կը քշէ մէկ երկու սահաթ.
անկից կնիկները կելին թանց անելու կենճ աղոց
հեռ. երիկներն ալ կերթան տեվեաթքային սեմթը
навѣрняка տարվելու:

Սահաթը 5—6 տուն կը տառնան. մեկալուս օրն
ալ, վիզիթ-միզիդ եղաւ կնաց. ամա ինչ արժից: Սա-
հաթը 10-ի սաղաթիման էրիկը կգարթի. միտքը
կիյնի աս օրը բեռէուչօթ սնեցածը. արալ-թափալ
տեղէն կելլէ կը հաղվի. կը հանէ վարտիքի ճէպէն

բօղմանէն, ստակ չիքայ, մեկհատ եթմիշնոց—անալ ծակ եղածէն մնացիլ է. կմանէ ֆռաքին ճեպը. կը հանէ պուժմանիքը—հոնալ պարապ. միտքը կիյնի տեւեաղքայի տարվածը: Փռացէնթ տալու ստակ չիքայ, միտքի կը պաթի. իտա արալինալ տղաքը տեա- սքին կուլան, մաժա կը կանչին.— կնիկնալ անվոտք անգլոս խօս-խօս քուն կըլա. թանկնոց հալաւները հոս-հոն թապլտած. վեշշիններնալ ստօլին վրան ձգած. իսպէս պան կլայ, աղբար, հապա պանվորները կօղ- նաննը. անկից կանք կառնէ.— կը մօտկնա, չորս քովը կնայի—մէկ քանի կտոր պան բլաթօքին մէջը կը բաթ- թէ. ծոցը կտնէ: Բռացենդին համար կախվելուչիւմ խօմ... պօշ պաներ ին. վերջը վիքուբիդ կանիւմ էզու- կնաց. ոտհաթ նեֆէս կառնէ, մուշտակը կը հագնէ տուս կելլէ. Տղաքը մաղու-մաղու կուլան. կնիկը խոռ- խոռ քուն կլա:

Շթէ քեզի նոր տարի:

ՃՐՀՈՐ ՓՈՐՈՂՆԵՐ

Ազպարիս օրթան, տահա պապայիս ժամանակէն՝ քէօռ ճրհոր ունէինք, վրայի պիլեզիկը ժամանակին փթթիլ էր, ամա տեղը պելլի էր: Պաղչաս ճրեւու, վիրա սախաճիի ստակ տալէն—պէզմիշ էզիլ էի.— տոտժ ժամանակս մեր քաղաքը տահա վօտօվաւոտ չիքար.— «Մրի թեմդցնել տամ, աթի՝ հէմ պախչայիս պէտք քուքայ, հէմալ «վարձք է» կասին: Որին էր, չիզալիմ հարցուցի. «ճրհոր փորողի տեղ կիալիք» տէ- լին:—Մենք քեզի կխրկինք, ասին:

Մէկ սասպալթան մը՝—տուռի փաթաւի, կալաճիի ծան, շամաթայ—այիմ-պէյթմ տեղէս կելլիմ. ճիճաներս նեա կըմանէ: «Ինչ շամաթա է, կհարցունում.—Ճըր- հոր փորողներ էկիլին, կասէ: «Փախ տուր, կասիմ. ո՞վ ասիլ է տացա լուսուժութուն քալու, թող էրթան, վերջը քուքան»: Սըպառկիմ: Մէկ կտորմը քունի կնա- ցածի պէս կլամ—ամա նալէթ սատանայ - շունի հա- չել կուզիս, սզութմա, — հեմ թափ փենճերէյիս տակը: Ելլայ տա պացի փենճերէն, կնայիմ. մէկ—ալլայ մը պալտրպաճախներ ճրհորին քովը կայնիլ ին: Ինծի տեսածներովը մօտկցան:

— Պարի լուս, աղա. ճրհորա թեմդցնել պիտ տաս, էզիլէ:

— Ո՞վ ասաց:

— Առաքել-ան խրկից:

— Ի՞նչ լուսուժութին էկիլիք - քունս եօխ արիք:

— Հապա զենկինը քախցածին հալէն կըհասկը- նայ ինչ. «կուշար քաղցածին մանր կըխրթէ» կա- սինալ:

— Ճանա, ինչ զօւպայ էկիլիք կուլխուս վրան, տահա տոտովանքալ կանիք ես ծեզի տահա պունած չիմ, տուքալ պանելու էկած չիք:

— Սիրտդ թող չելլէ, աղա:

— Է՛յ, ասէք անպէսէնը, ինչպէս պիտ թեմուզ- ցունուք. օրո՞վ պիտ պանիք, չենէ՞ թօփթանքամէ:

— Չէ, աղայ, ան օրով ծեզի ձեռք չի տալ:

— Իմ խասեվէթս, փաժալուստա մի անիք, ծեզի ինչ ձեռք կուտանը ան ասէք:

— Է՛յ ատպէսէնը. 40 մանէթի կը պանինք. 30 Ե՞ւ անպէս կթեմուզցունուք որ, վարը նայիսնը, էրեսըդ մէջը կերենայ. հայլի կանինք:

— 24, տա չեղաւ, 40 մանէթով ես նոր ճրհոր ալ փորել կուտամ:

— Աղա տա մեղի համար մէկ պան է, հինը տահա տիժար է. հանա—հարցուցէք կուղիքնը—թերղի Պապուշինը թեմղցուցիլէինք. մէկ շափաթ 7-ը հողի պանեցանք, տառհալաթ տակը կտանք. առաջվան ճրհորները խորունկին.—էրկուսուսնալ—всё равно, մեղիմէն աժան առնող չիք գտնիլ. մենք ատոր աւատանիլները, մաշինները ունինք:

Ծախս արինք, 25 բ. խալիլ էղան:

Աստուած արժանի անէնը, վաղը համան կողաշլայինք: Է՛յ, աղա, մէկ սիֆոտէ անէիր տա:

— Պանելու բաքնը, ան առէնը կուտամ, ճանչըցած մարդիքս չիք:

Գնացին:

— Մէկալուս օրը կենէ լուսացած—չիլուսացած—տուռի ծան, քիֆիր.—քուչուսս սուսնակ՝ նաքա հայնակ: «Հայ հերերտ անիծած, կէնէ նաքային» ասի: «Էյ էկան-էկան, թող պանին ասի, ես տացա պէտք չիմ»—Քաշեցի եօղանս զուլխուս...: Կնայիմ արթիս նետի տուր կղարնին «кто тамъ» —կհարցունում:—Колодезники—կասէ քուչուսը». Васъ просятъ: Էյ, էլանք տա:

— Նայէ, աղա, էրէկ մեղի սթակ չի հաւատուցիք, էկանք շտէ:

— Էյ էկաք.էկաք. պանեցէք, ես ի՞նչ պէտքիմ ծեղի:

— Ֆիչիի ստակ տաքնը:

— Ի՛նչ ֆիչի:

— Շաէ պոչքայ:

— Շաշխն, հայնակ կտորկեցունուս ի՞նչ է, ֆիչին պոչքայ էղածը ես չիգալիմ ինչ:

— Ֆիչիներս խաւշամիշ էղիլ է. մէքհատ ալ հին կոպչակ պէտք է:

— Կոպչակը ինչ մառաղ է հաղայ:

— 2առիս պիտ անինք հա, մէքատալ տիրեք պէտք է, անկից, նայէ, քիչ մնաց պիտ մսոնայի, 10 կազալ քանաթ:

— Ատ էրէկ տուր չէիք, պարծնցաք՝ աւատանլիններ, թախմներ ունինք, աէյին. ուտե՛խին. գնացէք պաներտ, անհաճի՛ներ:

Մէշերին մէքհատը, պելի էր որ վարպետն էր.— «Աղային ասածը խորթ է լո՞ւս» ասաց—էրէկ ասինք ախո:

Աղա, մեղայ ծեղի, աղքաղ մի անիք, մենքալ իշամիշ էղանք, էկանք ծեղի: Ուրիշ պան կար, անալ փախուցինք:

Կնայիմ տացա ձեռքէն խալսելիք չիքա:

— Է՛յ, ինչքան ստակ պէտք է, ասի:

— Հինգ մանէթ տաքնը—կըլայ, ասին:

— Առէք, ասի, տուր, 5 մանէթ. ամա, իմացած ըլաք, չիխալսած, մէկ կոօշ տահա չիմ տալ:

— Աղէկ, թող ատպէս ըլայ, ասին.—

Ինա տակի տեղին ֆողը չիպեքած, ջուրը չեղած՝ մէկ դայիկ միտաք.—ասին. իրենքալ կծիկ, տըրիլիսնը կաիր. խալիպ էղան. Ատ կար սապախտան սահաթը 5-ին 6-ին: Սահաթը 12 էղաւ—չիքային: «Խափեցին», ասի:

Կնայիմ շամաթայով ազալար մտան—պոչքան ձեռքերը պռնած: Տեղերը 6 հողի էր, որը՝ պոչքան չուվանով կապից, որը՝ տիրեքին վրան կոպչակը անցուց. թախմ է», ասին: Ատ է էղիլ է տացա մաշինը: Անկից մէկ 1/2 սահաթ իրենց մէջը ճէնկ արին, ու

ինչնեւուն: Փլաթոք կուռնա արին, սվ մէջը ինչնեւուն: Կուռնա վարպետին էլլաւ:

Հայ-Որթ-Հոբի Սուրբ. վարպետը մտաւ մէջը:

Մէկ էրկու պոչքայ սաղի—սոյ պան հանեցին. իրերում նեպեթին ինքը վարպետը պոչկային վրան հեծած վէր էլլաւ.— «Ի՛նչ էղաւ»—հարցուցին»:

— Հածէ—տղաք (էրեսին քրտինքը սրվեւէն)— թու ..., օֆ..., ես քու ճրհորիս հէրն, անիծած:

— Ի՞նչ է, ի՛նչ է, հարցուցին:

— Ի՞նչ պիտ ըլայ, մազ մնաց պիտ խըխթվէի. գիտի՞ք, ինա «կազ» կասիննը, իտա սոյ պան կալ մէջը. փոռստը տիմանալու պան չէ:

Անկից պաշայեցին նեպեթով ինչնեւ-էլլեւ - խաղալիք տառցուցին. թեմցուցածներուն քովը հէչ պան չիքարալ: Մէմալ տուա էլլայ—կնայիմ՝ սեռիմիշ էղիլին՝ պառկիլին:

— Ի՛նչ կանիք, հարցուցի. եսլ կանիք, ինչ է:

— Ո՛ր եալնիս, քաթսիսի սապօթ կասիննը՝ իսկ անէ շթէ:

— Մէքատը մէջերէն էլլաւ:

— Աղան, առ պանը առանց ռախիի չիլալ առաց՝ 30 քապիկ առին՝ գնացին:

Էրկու օր պանեցան գայիր տա՝ սապախառնէն մինչև իրկուն չիկիանաք. էսկ շատը—օրը չորս սա՝ հաթ.—չայի կերթային, անկից կերաւուրի... սալթ էրթալ—գալու մէջ էին. մէկին ճերմը պոնիլ էր. մէկալին ոտքը կամ մտիլ էր—պօշ կալաճի, կալաճի կանկատ. էսկ վերջնալ օխթը պօրաը կըքրֆէին:

Իրկուան էր, պախչայիս ծառերը կնայէի, էտեա պտըռվեցայ, կնայիմ—կայնիլին մեր կտուրները:

— Աղան, խալսեցանք, ասին:

— Ճուր էլլաւ, տեղին ֆողին հասաք, ասի:

— Ձէ...

— Է՛յ, անպէսէնը, խալսած չիք տա:

— Հոճա պան է՝ ասին: Առ սոյ պան հէչ տե՝ սած չէինք: Տալը մէկէր քար պանած է էղիլէ:

— Հապա ճուրը:

— Ճուրին սըղընթին, տահա ուժ առած չէ, քարը կպոնէ, ասին. մէկ—էրկու օրէն կելլէ, ասին:

— Ի՛նչ մեղքս պահիմ, հաւատացի, հայ բրիստոնային—պիտի խափի՞ն, ինչ. հանեցի մնացած 20 ը. տուի:

— Էրկու օր չէ՝ մէկ շաքաթալ անցաւ.—ճուրին համալ չիմացանք, էրեսնալ չիտեսանք:

Աղալարս մէկ հատ ռուս ռապոչի կըպանէր, պատմեցի. «Я самъ посмотрю» ասաց, հանից կօշիկները. պաճախ-սաճախ, պատի քարերէն պոնըվիլէն մտաւ մէջը, անպէսալ կէնէ վեր էլլաւ:

Баринъ, вы никогда не добудетесь воды, тамъ навалено камня—пропасть.

Մէկալում օրը, հեանալ մէքատ մարթ առած մէկ օրվան մէջ պանեցան, նացապէս հինգ, անքամաւելի պան հանեցին—քալ կուզիս, խայիշ—խոփխայ, էրկաթէ—ցիպառքայ—մէկ էրկու հարուր վետույալ աղառ ճուր պարպեցին: Էրկու բուպլի տուի, 30 ը. на чайкъ. շնորհակալութիւնալ ստացայ: Մինչև այժմալ ճուր կայ:

«Աղան, մէկէր տալը քար պոնած է էղիլէ»:

ՔԻՐԵՄԻԹ՝ՃԻ ՅԵԼԻՆ

Տունիս թէփէյի բիրեմիթը բանի տարի է փոխված չէր, արթիս կոտլուտիլ էր, տեղ-տեղալ խուռտա էղիլ էր, անպէս որ թաթաւի առեն կըկաթկըթէր,

սաղանախի ասիսներ՝ շառլը-շառլը կվազէր—լեկէն կը տընէինք. խրկեցի ծան տուի քերեմիթճի Յըլլին:

Մէկալում օրը, կնայիմ՝ Յըլլին, հեանալ էրկու հատ մարդ—մէկը իրեն պէս ճռգած-ճռնապէտ, մէկալնալ մազալը—կայնիլին ազպարիս օրթան ճեռքերը էտեը դրած, չուպուխները պերանները, պիւրիւմ-պիւրիւմ մուխը հանելէն, աչքերնալ տունին թէփէն տնկած՝ պսա լափը: Դուս էլլայ:

— Բարե, աղա, ծան տուվիլլիս...

— Հա...

— (Լուսթին): Եօխլամայ պիտ անիք, չէնէ՞ նորէն շարել պիտ տաք:

— Զիկտիմ, դուք ի՞նչ կասիք, որը աղէկէ:

— Հէպէթ նորէն շարել տաքնը աղէկէ:

— Է՛յ քանի՞ հատ քերեմիթ կերթայ, նորէն ա-նելու ըլլամնը:

Պաշայեցին իրենց մէջ խորհուրդ անելու: Մէկը ասաց 5,000, մէկալը 7,000. ծար չելան, խեղքերը չիկտրից...

Վերջը-վերջը ես միտքէս տրի նոր անել:

— Քանի՞ պիտ առնիք հազարէն շարելչէք:

Քեզիմէն աւելի՞ պիտ առնինք ինչ:

— Է՛յ կէնէ-կէնէ:

— Զորս ուսպլի:

— Ասոր կինը պելլիէու, ճանս. 2 բ. 2½, էնկ շատը իրեք բ., «իրեք կուտամ», ասի:

Սուս էղան:

Էտե ի՞նչ կասիք տղաք—Յըլլին տառցաւ առխա-տաշներուն. աղան իրեք մանեթէն աւելի չի տալ, խայլիլք.—Մազալըն, որը սիւնի պէս կայնած էր—թոթվեցաւ լիւն պերանէն հանից, ծաղէկը կօշիկին տապանին թափից, անկից տունին բովը մէկ բռուկ

արաւ. «չէ տահա ինչ, վարպետ խեցիլիս ինչ» ասաց. «մէմը տունին վրան նայէ տայ. հէմ տունը պացըու է, հեմ թէփէնալ թիք. մերտեհնով պանել չի լալ, ա-տոր օմհւզ կը տիմանա, սքելէ պէտք է խորթել, ան ալ ասպէս թաթաւ հաւայի, թայդախ կլայ, մարլամ, տգմիշ կլաս. կիյնիս, ոտքտալ կը կոտուիս»:

Վարիսա թէփէն քերեմիթ վարտուող հանողներ: Անկից, ճանս, լուզու էլլաւ ճռնապետը:

— Հէպէթ, ասաց, պարակ ճինի ծանով—շոռ-պաճին մեր հալէն կը հասկնս ինչ—ըողաթինք տէյին եսսիր չինք խոմ. ասպէս հաւայի չամուռ շաղուելը շախմայէ ինչ, ոտքըտալ փռասթուտիթ կանիս. հանա սուաճի Մերկիանը կիւղէն—վերիէ, աղէկ չէ, սըզիի հանդըպիլ է, ատպէս պաղ հաւայի պանիլ էր, մեռ-նիմը պալաշաղաս ո՞վ պիտ պահէ:

Ասալ պելլի էր, որ չամուռ շաղուողն էր: Մէկ խօսքով քարուպատեր հանեցին: Անկից կենէ սուս էղան: Փիրէս էլլայ:

— Հածէ Յըլլի, վարպետը տոնիս, չէնէ՞ նաքա, տուն ինչ սուս կեցիլիս. ես քեզի ծան տուիլիմ. նա-ցա հեռ քործ չունիմ: Յըլլին ճըլի-մըլի աչքերը վար արաւ, քիթին տակէնալ մէկ պսնմը մամշից—չիլսեցի —անկից առխատաշներուն մօտկցաւ, նաքաեալ «հայ-տա էրթանք», ասին, Յըլլին փէշէն քաշեցին, պըռ-պըռալէն ազպարէն դուս էլլան:

Եսալ դուռը փակեցի, նես մտայ:—Զարեկ սա-հաթ անցած-չանցած, կնայիմ՝ մահլայլէն տուոխն չախ-մային ծանը էլլաւ—անկից—նեսի դուռը ճը՛ռ արաւ, պացուեցաւ:

— Ո՞վ է, ասի:

— Աղայ, ես իմ.—կնայիմ Յըլլին, սուտ մեռուկ էղած կայնիլ է:

— Ի՞նչ կուզիս.
 — Մէկ հատ իրեքնոց...
 — Ի՞, առ կուլիսուս կալի շարական կարգա-
 ցիք, զնացիք ու, կենէ ինչո՞ւ էկար:
 — Տղոցը խօսք անցուցի, ասաց կամացուկ:
 — Պաշլայեցէք, անկից կուտամ, առջիկէ ստակ
 չիմ տալ, պէլլի է, որ պիտ խմիք:
 — Աստուած մի արտայե, ես քանի տարի է
 պերանս պուտը չիմ առնիլ, չէքի խմել: Տղոցը մա-
 խառնիչ պիտ անիմ, որ վաղը պաշլայինք. առանց
 ատոր չիլալ. անկից, ինքսալ սքուլի կնելու պիտ էր-
 թամ: Ախ, աղա, մեր բիրաճի ծէփը խաղախի
 շքաթուռին չի լմանիլ, մէկ օր առաջ պիտ անիս, որ
 նստի, ամուրնայ:
 Տուի մէկ հատ իրեքնոց տա:
 — Է՛յ, եփ պիտ պաշլայիք, ասի.
 — Վաղը:
 Գնացին:
 Ո՛ր վաղնիս, անիսէ մէկալուս օրնալ չեկաւ, շա-
 բաթ անցաւ, ես միտքէսալ հանիլէի տացա քալուն,
 «խափեցին», ասի: Կնայիմ մէկ սապաթմանմը, խայ-
 խայտան էրեցան. «էկանք», ասին—Պարօվ էկաք,
 ասի—ամա Յըլլին հետերը չիքար—ուտե՛նէ վար-
 պեաներտ, հարցուցի:
 — Նա շինտի քուքայ, սքուլի էտէ կնացիլէ:
 Իտա լաֆին վրան էինք, Յըլլին էրեցաւ, ինքնալ
 քիչմը բէֆը:
 — Աս տարի, աղբար, ինչ հոճայ տարի է, սքու-
 լին պիլէ թանախէ—պաղար-ոհատ քալեցի - չիկտանը
 — լայլաճ Ռաստով պիտ էրթցվի, գիալիս, Կարապետ...
 Անկից մէկ քիչմը հեռուցան, պաշլայեցին իրենց
 մէջը փափսալու:

— Ի՞նչ է կենէ, հարցուցի:
 — Հէ՛չ, պան չիքա, ասին.—աղա, մերաեվեն-
 ներա ուտե՛ն է:
 — Առանն է, կնացէք առէք:
 — Տախտակալ պէտք սքելէյի համար:
 — Անալ հոն է, կուտան:
 — Անկից, աղա, մէկ քանի հատ կամ, մէկ կտոր
 ալ չուվան:
 — Գուշուռին հարցուցէք:
 — Աղա, քիրեմիթ առիք, անկից քիրաճալ
 պէտք է:
 — Հազիր է, հազիր. դուք իտա սքուլլին եփ
 պիտ առնիք, ան առէք:
 Ասածս սուտ չի լսողս էղան. մտան առանը,
 հանեցին մերաենը, տրին պատին վրան, էլլան տու-
 նին թէրէն—մէկ թող-թոփրախ հանեցին—Արարիչ
 Աստուած, ետքի աշխարք: Մահլայի անցնող մարդիքը
 ալիմ-պէյիմ էղան, ազպարի հաւերը պատէպատ փա-
 խան—իրենքալ թողին մէջը մատալա էղան: Մէկ սա-
 հաթ քշից զայիր տա պանածները—կնայիմ ծան, շա-
 մաթայ թաթրեցաւ—իրենքալ տունին թէփէն եան
 էլիլլին, մէկը փափիոոս, մէկալը լիւէ կը քաշին ու
 կը թուքնուն.—
 — Հանձէ, Կարապետ, կասէ մէկը մէկալին. նա-
 յէ՛ ծովի անթի էրեսը, Պաթայսքիին ժամը կերեա,
 ինանալ, սոլիտ, ֆառղին կերթա՛մ Տելի Ծերոնին
 Կոիցըոյին խութուն է ալլահալէմ, հերու քիրեմիթ
 շարիլ էինք նը՞: Մարլամ, օրինաւոր ինա խաղեզին
 տեղը փօնօռամի ցուցուցած պաներուն կմանի:
 — Հանձէ, փորըտ կուշտ է ալլահալէմ պօշ լաֆ
 կանիս, հայտա, ել, էրթանք տաճիկին խառչենին պան
 ուտելու, ես քաղցածիմ. կըլսի՛ս:

— Լսածս կըլտիմ, ամա ինչո՞վ պահս պիտ ուտիս, ստակ ունի՞ս ինչ:

— Կասինք վարպետին կը կտնէ, տա:

— Նա ալ չունի, էրէկ սկուռիին ստակնալ խմբցո՞ւ:

Անկից ինչան վար, քիչմը թափվեցան, մտան առանը.— եսալ գնացի էաններէն:

Կը նայիմ— Յըլին կըլտը կախած, թիթիղ էրեսով, չորս բովը չնայելէն— սքուռի բուրձուկ կտաշէ, մէկալօնքալ սեռըմիշ էղած— պառկիլին:

— Ի՞նչ կանիք, աղաք, հարցուցի:

— Հէշ, անպէս, սալխնլամիշ կլանք:

— Խիստ քիչ պանեցա՞քու:

— Արեւի խղղընին տիժար է, ասին:

Կնացի նես: Մէկ տասը մինութ անցաւ ետ չէ, կընայիմ փենճերէյէն. մեր կտուճները կօշիկները կոնակը դարկած, առաստիկներնայ ձեռքերը պոնած— կայնիլին աղպարը— մէկ խայեր Յըլին թիթմիշ կանին,— նայալ վերա ընթմիշ կլայ իմ սէմթս քալու, ամա պելլի է, որ չի համարձակիլ, կանգ կառնէ: Ե՛յ, պելլի պան էր— կենէ ստակէր սկզեցածները, մեղըըցայ, ծան տուի Յըլին— մէկ իրեքնոց տահա տուի:

Աչքտ սիրիմ, աղա, առաց, մէմալ արթիւ խալսինքնը կառնուներ— տուրիկ տալէն կնացին:

Ալլայ պանելու պաները իրեք օրվան պան էր— իրեք շաբաթ քըշից. առջի օրը պանեցան էնկ շատը՝ 3 տահաթ— թէփէյին կէսը աւտարմայ արին, սքուռի բուրձուք խորթեցին: Էրկուսում օրը՝ սքուռի մանտոնեցին, քիրաճ շաղուեցին, մէքտա մարթու մէկ օրվան անելու պան էր: Իրեքում օրը՝ չեկան. «ծեռքերս կտորմը քործ կար, վերչացնելու կնացիլէինք», ասին: 2օրսում օրը էկան՝ «Նախշուան թոպան չի

կտանք», ասին, «Ս. Խաչէ խուրթուը պիտ էրթցվի», մահանայ արին. կենէ իրեք մանէթ զարկին՝ կնացին: Հինկում օրը՝ մէկ հատալ հետերը ուսա կնիմարթ պերին, չամուռնալ նարա շաղվել տուին, իրենքալ առեն-առեն մառուշքային հետ էրեշմիշ ըլալէն, չամուռն վրան կտոր-կտոր թոպան թափելէն ման էկան. անկից՝ մէկ հատը մէշերէն սղամիշ էղաւ— պալար պաճախ էղած մտաւ, չամուռ շաղուողս էղաւ, անալ հաղար սիթեմով. շտէ՝ «հողը քարոտ է, ոտքս քերթեցի», շտէ՝ «թոպանը փուշոտ է, ոտքս ծակեցի». արուն քրտինք պաթած մէշէն էլլաւ...

Արեւ տահա մար մտած չէր. «ասօրվան կօգտէ պանածներս, ասին, վաղը կիրակի է, պազարէն պան պիտ առնինք», ասին, մէկ հատ 5-ոց տահա առին՝ կնացին: Էրկուշաթի էկան, թէփէյէն մէկալ կէսնալ պաշայեցին քակելու: «Տղաք, ասի՛ մէկ կէսը մէմը շարեցէք, անկից մէկալ կէսը կըպանաք, թաթաւ քանը, ալլայ տուներս կվաղի դիան կլայ»:

— Չէ, տահա ինչ, աղա, թաթաւ չի քալ:

— Ե՛յ, ի՞նչ տեղէն կիրիք.

— Լուսնինկայի զօրութինէն պելլի է— ծարերը վեր է:

Անկից... «եօռուխ չէ մերտէվէնը ան սէմթ տանել, ասին, տախտակին պօյը կարճ է»... Նոմայ պօշ մահանաներ հանեցին, ինչ է, կէս սահաթ աւելի պիտ պանէին, իշմիշ էղան: Կենէ՛ մէկ օր քուքային՝ մէկ օր չէ. կէս օր կպանէին՝ կէս օր կպառկէին: Անքան արին որ, մէկ մեծ սաղանախ էկաւ. կտանք կուներս, աղէկ սոյէն թըշվեցանք: Ստակնալ առնելէն, առնելէն վրայ անցուցին, կէնէ հաղարին 4 ը. հասցուցին. շարածներնալ ասինքն քիթերուն պերաններուն կլմանէր. ծոռ-մոռ, իսկը Յըլին շաշի աչքերուն պէս:

Մէկ քանի տարիէն կենէ պէտք էր տունիս թէ-
փէի քերեմիթը փոխիլ, ասել է քի՛ օրս կենէ Յըլիին
ընկիլ էր, ծան տամ, չխտամ... ատ խտեմիթին մէջն
էի ու մէմալ իմացայ որ՝ Յըլին տուն շատ ապրիս
էղիլ է: Մեղայ-մեղայ ինչ մեղքս պահիմ՝ խոսնաւում
էղայ. մէկ լեռ մը կիտիսքի վրայէս ինջաւ... Համան
ծան տամ բոյիլչիք Շիպային ու տունիս թէփէն
էրկաթ անիմ:

ՍՈՒՐԲ ԽԱՉ ՈՒՒՏ

Մէկ տարիմը, ես տահա տղայ էի, պէգէր
հիւընդցիլէի, մեռնելէ խալսեցայ: Մամաս, մեծաս
քիշեր-ցորեկ բոլս անքուն կանցունէին, սապախդան
այ ժամէ ժամ կըբալէին մօմ վառելէն, ալօթք ա-
նելէն:

Աստուած տար, աղէկ ըլլայինը-ուխտ արիլ էին,
ամառը եայան, պօպիկ սաքով Սուրբ Խաչ էրթալու:

Ես աղէկ էղայ. ամառն ալ էկաւ ամա, թաթա-
ւէն խալսելիք չիբար:

Մերոնք զօռերէն վիրայ օրացուց կընայէին:
Լուսինը նորանարնը — սէգաէ հաւանալ պիտ փոխվէր:
Սմա նէ խայիր: Աստուծու կամքներ կէնէ ամպ, կէնէ
կոռում-կածակ: Էրկինքը պատռածի պէս պան էր,
թաթալը գիշեր ցորեկ անթաթում բուբար, սէլնալ
ծովի պէս կըվազէր: Ուտեխ կերթաս:

Մայիսի կէսերը կըլար:

Հավան պաշլայից կամաց-կամաց փոխվելու, էր-
կինքը թեմգցաւ, արև-արեբակ պացվեցաւ: Պախչա-
ներուս մէջը արօտը թաշմիշ կըլար, կանանչը ամէն

տեղ փրովլէր: Մէյլայի ծառերուն վըրան չիշակը
ճիւփ-ճերմակ էր, փուք ընկածի պէս պան էր: Նանէի
աշեափրախի հօտը քիթտ կը ճիւքէր, վարդի կօճա-
ներնալ իլինքցիլ էին, պիւլպիւլն ալ մէջը նըստած կը
զուրուցէր, ծանը աշխարք պոնած, ճընկըլտաթմիշ
անելէն:

Շաբաթ օր էր: Մերոնք մեծ հազիրվորութիւնի
մէջ էին խուժօր կանէին, անուշեղէններ, ուտելիք-
ներ:

Իրկուան թէմ մօրքուրս ալ տըղոցմով մեղի քի-
շեր պառկելու էկաւ:

Իմացանք որ վաղը, կիրակի, Սուրբ Խաչ ուխտ
պիտ էրթանք:

Իրկուան կանօխկէկ մեղի պառկեցուցին, սա-
պախթան լուսացած-չիլուսացած տեղերէս էլլանք,
մինչև էրեհներս լըվացինք-խալսեցանքնը՝ արապա-
ճիներս աղպարին օրթան պարցերով խալինեցով, պօխ-
չաներով իրլէմիշ էղած մերունք ալ հաքված, — կայ-
նիլէին:

Պապուշան, մեր արապաճին, մեղի հեռվանց սօյ
բուբար. խընամիմա, ասաց մեծայիւ, դուք ճամփայ
ելէք, մենք ալ ծիներս կըճըրինք, կամաց-կամաց
էամեներէզ բուքանք-կըհառնինք:

— Նայէ, Պապուշ, ասաց մեծաս, չուշանաս:
Իրենք ալ պաշմաքինները, չուքինները հանեցին,
եռվքաներուն փէշերը վերցսցին, աէջը փաթթեցին-
ճամփայ էլլան: Մենք ալ էլլանք արապային թէփէն
նըստանք ու խոռնտումներէս տեղ չէր կանէինք, կինչ-
նէյինք, կելլէյինք, կըկանչվըռտէինք: Պապուշան վը-
րաներս քէշ-քէշ նայեցաւ, հայտա կօքաէ խընտաք, ծիք
նըստեք, ճամփայ պիտ էլլինք, ասաց, ինքնալ նըստաւ

փեռէտօքին վըրան, թէթե սօյէն զարկից ծիին խամ-
չին՝ նծօ, չո՛ւ կանչից ու կառուկ-կուռուկ ազպարէն
տուս էլլանք:

Կամաց-կամաց հասանք Առափի օպային:

Եփոր չէլի պաղ-պաղ բամին էրեմներուս փշից.
ծիներըս մէմալ նայիս անկաճները տնկից, պոչը վեր-
ցուց, իւրուշը ավելցուց, արբիլիսնը կըտիր, օրինա-
ւոր ռիսաքի պէս կընաց: Պապուշ աղաներըս ալ քունի
կընացած տեղէն, այմիշ էղաւ, թէլպոփները ժողվից
ու «չիյնիք» տաաց մեզի: Մինչև եօխուշը ասպէս
իւրուշով կընացինք:

Պապուշային բէֆը էկաւ, խելօք հայվանէ նը, ասաց:

Ամառը, մայիս ամսի մէջ, թաթափէն վերջը,
անալ չէլը, սապաթթան կանող, արեւ տահա չընծա-
յած տեսնելու պան էր: Չէլի կանանչ արօտները,
չիչակները, նացա անուշ հօտը, խուշերուն ժըվըռ-
ժըվըռ զուրուցածը, ճըռճըռ պօճիկներուն ծանը,
կարմիր, տեղին, կապուտ խըպըլիկներուն հօսէն հոն
թըռածը... պատմելով հասկըցունելու պան չէ. աչ-
քով պիտ տեսնիս: Խելքերըս թէփէներէս կընաց, կու-
զէինք արապայէն ինչնել, թուշել, վազել տըռտիկ տալ:
Սաղ ճամփան աչքերըս չորս էր՝ հոս խուզիներ, պա-
ռաշներ, ածը առչկէն, կօտօշին վըրան չանկով, չօ-
պանը էտեէն չօխմախը կըռնակը-խաւալ չալելէն: Հոն,
անթին կովեր, պըղոփներ կարծէին, քիչմալ հեռու
ծիներ, խուլիններ կը վազվըռտէին:

Օրթայ օպային քոփէր մերոնց հասանքնը. կայ-
նիլ էին, եալ կանէին:

Մէմալ նայիս օպային էտեէն կըրտիլի պէս կար-
միր պան էրեցաւ, կարմիրը տեղնեցաւ, պաշլայից
վերնալու, չորս քովը լուսը փըռվեցաւ: Արենէր:

Ով էր, չիկտիւմ, մեջերէս, հանա Սուրբ Խաչը
կանչից: Խօրթոր, նայեցանք, արեւին շավիւր վըրան
զարկիլ էր, խաչը ֆառըլ-ֆառըլ կըցօլար: Մեծաս
«մեռնիւմ զօրքին» առաց, չոքից, պաշլայից աղօթը
անելու էրեսը խաչ հանելու:

Մենքալ վըրան նայեցանք, նարա պէս խաչ հա-
նեցինք: Չէլը սուսուռնք ինչաւ, չըթ չէր անէր: Հե-
ռուէն Սուրբ խաչի չանկին ծանը լըսվեցաւ:

— Հայտայ էրթանք, ասին մերոնք, չէնէ պա-
տարազի կուշանանք, ու տապան կոխեցին: Մենքալ,
առած փախածի պէս, վազեցինք, մտանք արօտնե-
րուն մէջը խըպըլիկ պըռնեէն, չիչակներ փետելէն
ու մէմալ նայիս պախչային տուռին քովը կըանըվե-
ցանք, քիչմը նէֆէս առինք, մտանք քովի խամբշըխը,
կըտուցինք չորս-հինգ հատ չաթի խամիշ ծարը փիւս-
քիլներով ու խաղ կանչելէն պախչայով կընացինք:
Մօթին չըհասած, կընայինք Պապուշան ախմացներս
կեկէ:

— Կիտիպերէ լակոտներ, ծիս նայլմ, չէնէ ծեր
էտեէն քալիւմ, կասէ, կընացէք հայտա վէր: Մօթէն
անցանք, մերտեհէն վեր էլլանք, մէկ թազիրմալ
մեծաներէս կերանք:

— Մէմալ ծեղի Սուրբ խաչ պերօղը խե ըլլայ:
Մէկէր միասիլ մերոնք խուլթուռի ճամփով քան, Ս.
Խաչ մեղի չիկըտնին, պատէ պատ փընառոցքի էլլին:
Առաջուան մարդիքը խիտ վախկօտ էին, շինալիս ատ-
պէս պանէր չիքան: Տղաքը ուզեհան սաղ օրն ալ տուն
թողչիքան: Որն էր ատոր աղէկը՝ առաջ տղոցը խիտ
պուճուկ կըմեծցունէին, շինալիս վըա անցած հա-
մարցալ, էրկուսին վըանալ ած քալէ:

Ժամը ծըփմածըփ մարդ էր, մէկէր ատ օրը խու-

Թուռցիներուն չօքնէր էղիլ է: Զօքէն վերջը մատաղ կար: Մատաղին տեղը պալատան խալկիները, տակը կըրակը չաթմիշ արած ֆըխը՝ ա-ֆըխը՝ ա կէփէին:

Էղիազար աղան տոռը էնկ վարպետն էր. արունքը քըրտինը պաթած, վիրայ խալկիները կը խառնէր ու մօակըցողներուն վըրաները կը կտնէր «հեռու, հեռու կընացէք փաթլամիշ միլաք. մատաղը թախըմ չարած ծեղի չիմ ուտեցունուլ»:

Մէկ քիչմէն մատաղը հաղիր էղաւ, մեղի ալ համեցէք արին: Շարվեցանք վարը, տիմացները՝ փատէ քուշերով պուլլուր տպուր պերին, թէքնէյով ալ մատաղը:

Մէկ պայի մատաղին տակէն մըտան, վրայէն էլլան, ալլայը թալամիշ արին-կերան: Մնաց կլտխները:

— Էյ, նայինք, ասին, կլտխները որին փայ պիտի յայտա, կըտոհիճներ, մէյտան ելէք: Ամենը թոփ էղան, ձեռք ձեռքի պըռնեցին, կլորման կայնեցան:

Էնկ առաջ էկաւ կեղացի Ապինը, ձեռքը մէջքին տըրից, կայնեցաւ:

— Ով կայ, թողքայ նայիմ, ասաց պէպէտէմիշ ըլլալէն: Սօսունի պէս տղայէր կարմիր թուշերով, սև պուշուխով:

— Մառթինը, Մառթինը կանչից հալխը:

— Կարճուկը, ասաց Ապինը խընտալէն:

Անկից կայնեցան տիմաց տիմաց, ծալեցին կապաներուն թևերը:

Էկան կօտի կօտի,
Առնըվեցան ձեռք ձեռքի,
Թընտաց տակը կետինը,
Հալա էլլան թողերը:

Ապինը փաթթըվեցաւ
Ու մէջքէն խալմիշ արաւ,
Մառթինը մէկէն պըռնից,
Ջըկից, վերուց ու թապից:

Աս որ տեսան, ամենը մէկ ծանի պաշլայեցին կանչելու ու չափ դարնելու:

«Աֆֆէրիմ, Մառթին»:

Կլտխները Մառթինին տուին:

Զուռնաճի Պատաննալ հոտ էր, պաշլայից քօռօղլույին հաւան, ռախինալ հաղիր, կըտոհիճները խմել ու խաղալէն սիւրիւսով չեղամիշ եղան:

Մենքալ կընացինք շիտակ Մառլսուռն, ձեռքերը՝ էրէսներըս լուացինք, մէմէկ աման պաղ շուր խըմեցինք: Էյ, տահա անելու պան չունէինք, իրկուան մըթնիմ չիմըթնիմ ճամփայ էլլանք—քիչմէն լուսնինկանալ էլլաւ, հեռուէն հատոհիճ հատոհիճ տաուլ զուռնային ծանը կը լսվէր:

Պապուշան սաղ ճամփան լաֆ անելէն կերթար, զուռնային ծանը լսվեցաւնը—մեկէն մարեցաւ: Անկից «ճֆ-օֆ, տիւնեայ-տիւնեայ», ասաց, էֆքեարլամիշ էղած, մէկէր միասիլ՝ կէնճուլթը շատ ատ սօյ քէֆեր արած մարդ է էղիլ է:

Օրթա օպան անցանք, զուռնայի ծաննալ թաթուեցաւ, մենքալ արդըրիս սուս էինք, քուններըս կըտանէր: Պապուշային ծաննալ չիքար, մէմալ նայիս շանթ արաւ, խամշիով ուժոքին կորայ ծիին գարկից, պէլի էր օր սիրտի էրէցքէն էքէն ծիէն հանից:

Անկից, անկից գայիր քուն էղիլինք, գէրէ մեծաս «հայտայ ելէք» ասացնը կընայիմ տուններուս տիմամացը կայնիլինք:

ՕՀԱՆԱՅԻՆ ԽԱՋՆԱՆ

Առաջվան տարիները խիստ ատեթ կար, մեր հայրենի մէջ մարդիկ կային—Քիւլիի օպան, Առափի օպան, ատեն-ատեն խաղնա փորելու կելլէյին:

Գիշեր ցորեկ, գործերը թապլած, ատուր էտէն չափաւամիշ կլային: Ամա պօշ:

Մէկ օր մալ պան կտածները էղած չէր:

Պատմածներէն, մտիկ անխնը, իբր թէ՛ փարչով օսկի էլլածը էղիլ է: սիլահ-սալուլթ, թուրխամայ, տահա ատ սոյ սատանոց պաներ:

Ով գիտէ, խորթ է մի, սուտ է մի, պերնէ պերան լսած կասին շտէ, ատուր տեղով տեսնողը չիքա: Շինախալ, տահա ան ժամանակներէն մնացած, մեկ քանի թէքինտի մարդիկ կան, հոս-հոն կաղտուկ կը փորփրին, իրենց՝ ումեկները, վերջի յոյսերը ատուլ տրած կապրին:

Ատուց մէկնալ մեր Օհանան էր, մեզի հեռուանց սոյ կուգար. մեծ պապայիս, չիկալիմ մեծ մամալիս սեմթէն կնքահար սանահարութիւն ունէյինը—թանին թանին թանթանան:

Վրա անցած անհաջող մարդ էր, ինչ պանի ձեռք կը զարնէր թէոս կերթար. սապանճի էր—ցորեն կը ցանէր. ցորենը ետ չիփսնէր, ետ բոռմուկը կուտէր: Խոտ կը զարներ՝ ետ թաթաւը կը թրչէր, ետ կրակ կիյնէր. կերէր: Արապաճիութիւն անելու կելլէր, ետ ծին ջապան կելլէր, ետ կը սատկէր. կով կը կնէլ խսրո կելլէր-կաթ չիտար: Ծերքին չեպեր մարդ էր. մեմալ նայիս տոօկ կը խորթէր—գործս գեշ չէ կատէր, —եա կողչակը կը կողնային եա կեչի սօլախը. ամեն պանէ վաղ կուգար, տաւուլդունա չալելու

կելլէր, ատ պանինալ վարպէտ էր, անալ փերսըզը, առած շապաշը փաշինքայի չօքտէր, եա զուռնան կը կօտէյին, եա տաւուլը կը պատուէյին. սաղ կեանքը, սալթը իտա չափաւանքին մէջն էր:

Թահմին չանիք քի Օհանան խասեմէթի կը պաթէր, կը կուտարէր, ամենին, «Տէրս ամպես կամեցաւ» — կասէր ու էկեր մեմեկ ատեն գլխուն եկած փորձանքները պատմած իքենը՝ պերնեն ախ-ախ էլլէնը, զխի կալաճին կը փակեր, ճեպէն կը հանէր թիւղինի քեսան, կիլինքցունէր չուպուխը, կը վառէր, պիւրիմ-պիւրիմ մուխ ելածնալ անէ, էրեսը կիւնտար, շախաներ կանէր, իսա տեսմք, կասեր՝ քաշածսալ անէ կը թեթեւամ, ամեն պան կը մոռնամ, թեք թիւղինս պօլ ըլայ, ինծի ուրիշ պան պետք չէ: Ատ չեշիդ մարդ էր, նարա չիկիտցողը, վրան նայերնը կը վախենար, մաղմիւրիք ալայը ալային խառնված—ճեմը տակէն աչքին: պեպեճիկները կերևար. օրինաւոր մեքամ խոնճոլոգ. ամա ինքը սամուշքօտ, իվաշ մարդ էր, ճանճի վրա կիսել կը վախենար. կաղանտի, տօնի, զատիկ տուներս կուգարնը, անխարերին բաշվէլէն, ոտքին ծարին վրան քալելէն ներս կմտնէր, որ ներս մտածը ֆառդին չերթայինք:

Աղքատ էր, ամա կըռտ չէր, տաքարուն մարդ էր, իրեն կը սիրվեցունէր: Խմանալ չէր—ամա՛ «Օհանա, ռախի ինչպէս իս» ասէիրնը. չէ չասէր, էրկուսումը լցածիս կը սպասէր—«Տահա կուզիս, օհանա» ասէիրնը—«խմածս էմացամուր», կասէր, «խտանալ կաւաթ կը լայ,—ախբար, թէմիդ օյմախ է ու» —կը քաշէր կինին կավաթը, լից, կասէր. մէկ էրկու կաւաթալ ատով կը զարնէր, իսկոյն կը ճուտորէր, թիւքի կելլէր, «Զօրքիս մեռնիմ, կասէր,

ռախիւին պէս պան կա որ, ախռ իսա ռախիւն չիլար-
նը, ես չօխթան հոգիս թեալիս արած պիտ ըլայինը»:

Ինչպէս, հարցուցածովդ,— «պատմած չիմ ինչ»
կասէր. բիշմը իշկիլլամիշ եղած աչքիտ մէջը կնա-
յէր, դերէ տասնուամ պատմածն էր— չէ, պատմէ-պատ-
մէ կասէյի մէկ կաւաթ քիթին տահա ռախի, մէկ
հատալ սիկառի կուտայի— կառնէր կը խմէր, կը վա-
ռէր, պիւրիմ-պիւրիմ մուխը հանելէն, քէֆլեմիշ էղած,
կը պաշայէր պատմելու:

— Ան տարին, դռեվօկէն վերջներ. ցաներս ան-
ճախ կալսեցինք խալսեցանք, ծմեռնալ օրհնածը վրա
հասաւ ժամանակէն առաջ. պարիններս հէմ փեռատ
էր, հէմ պերեքէթ չունէր, կին տուողալ չիգար: Ամա
տուռ չունէյինք պոնելու. Պարտքերս պիտ արվէր,
ծմեռվան զահրիէ պիտ հաղիրվէր, Վերջը-վերջը եօխ
կինով ծախեցինք խալսեցանք— ամա ինչ ֆայտա ճե-
պերս պան չի մնաց: Տուսը տահա ծմեռ էր, կա-
ղանտը պիլէ էկած չէր— պալաչաղայով ուտելէն-
ուտելէն զահրէններուսալ տակէն մտանք վրայէն
ելլանք. պան չի մնաց: Ծունը եկաւ թէփէններուս:

Ինծիպէս զիկիրդներ ս. Խաչին խութուռը տա-
հա շատ կային, թօի կլայինք ամեն օր Ծատուրային
խանութը. կալաճի-կալաճի, կենէ քաղցած փորով պա-
րապ ճեպով տուն կերթայինք: Մէկօրմը, չիկալիմ ով էր
մեջերէս, խաղնա փորելու լաֆ պացից— Օհանան տեղը
կիտէ, ասին. — էյ կիտցածս կիտէյի, փորելինք: Պատ-
մեցի, տղաքը հաւեպլեմիշ եղան, մէկ քանի օրալ աս
լաֆովը էլլեմիշ եղանք, ամա ինչ ֆայտա. — քաղցած
փորով, պատուած հալաւով, ծմեռին էնկ օրթան, ինչ-
պէս կերթաս Առաբի, Օրթա օպան. հասկցանք չի-
լալու պան եղածը: Ատկիցալ վաղ եկանք: Մնացիլէր
մուրալ, ես կողութին անել. ասուրալ պաշարըը

չունէյինք. քիպիրներուսալ չուտեցունէյինք:

Մէկ օրմը ան աերիճէյին հասա որ, թիղինսալ
վճարեցաւ, աս տեղը շտէ, ես ալայ մալայ կտուկե-
ցա. կլոխ կախած, թիշլմէյի պաթած էլլիլիմ տուն
կերթամ— մէկ ալաճախաղայի, շունի ծան, ուվուլդի.
հասա աղալորս— կնայիմ ինչ կնայիս, եզիս մէկ հատը
ընկիլ է մեկէր— շուններուն, խառղաններուն «էղիլ է կեր»
թափիլին վրան— հայվանիս. պատս խածնելը, կցելը.
չը տիմացա հայելու, աչքս մութ կոխած նես մտայ,
նեսալ մտանը— հաւատա որ, խաչս վկայ, սայախըլէս
երեսըս կը տառցունէյի, նա ճամբաս կնայէր, ես
պարապ ծեռքով տուն կուքայի, հապա տղաքս. հացաեալ
սս քօշան ան քօշան քուքուգուկ եղած, կծկտած, փառ-
ցած քաղցած— տեսանը՝ սիրտս մաղիլ-մաղիլ էղաւ:

Ամեն օր տուն կուգայինք, վերջի ատենները
զօռէս կլոխ կը զարնէյի պարճին, քունի կերթայի.
կիտունայի: Ամա աս օրը պառկեցա, քունս չի տա-
րաւ, սողիս սօլիս, կոնկի վրայ ման էկայ, տուրսը
մթնեցաւ, կենէ զարթուն իմ, միտքիս մեջէն սալթ
դէշ պանէր կանցնի— պոնել չիմ կարնալ— մեռնիմ
խալսիմ, ասի, քակեցի մեջքիս կոտին, առանը պիտ
երթայի, պիտ կախվէյի, իտա միտքին մեջն էի: Աս-
տուածամօր տիմացի խանտիլին լուսը (շաբաթ իր-
կուն էր կը վառէր խանտիլը)— ճամտօլապին վրան
զարկիլ էր— տուսի ֆուրդունանալ կալկաղան կտուած
ամպէս կիչէր, տուն, տուռ, էրթիք ամեն պան կը
ժաշկըտէր: Աչքիս կերեա աճեր կասիմ, կնայիմ ճամ-
տօլապի մամայիս կանաչ շիշային մէջը մէկ պանմը
կերերա... աճեր եալնշիմ ասի. չէ... ֆառղին կնացի,
ֆիթիլըս առաւ ինչ եղածը— հռշման տեղէս ելլածս,
զիտ տօլապը պացածս, շիշան առած պոնածս, պուլ-
պուլան պերանս տարածս, պարպածս մէկ եղաւ:

Օհան աղան տաքցաւ, տեղէն էլլաւ կայնեցաւ—
հանա առաւ, առաջ—խաւովի տրաւ ստօլի վրայի
պոլթիքան, տրից պոլթիքան պերանը կոլթ-կոլթ
տականց խմից,—օֆ, առաջ, սիրտիւ երեցը գնաց,
մարմինիս մէջը սինտիրմիշ էղաւ։—Պապօ, Օհանա,
ասի, էտե, անկից։—Անկից նորէն քաշեցի պարծը
գլխուս, խորունկ քունի կնացի, մեմալ մեկտուում օրը,
կիրակի լուսուհանկին գարթեցաւ անխարերն խուն-
տում եղաւ որ սաղ մնացածիս, արտուսուներս պոնել
չիմ կընալ, մեր ս. խաչի չոռխախի ջուրին պէս թաշ-
միշ ըլալէն կը բխար։

Կանգ առաւ.—մեռնիմ գորքին, ինչպէ՞ս չառիմ,
իսա ռախին չիլարնը կախված պիտ լայինը։

Հոշման տեղէն էլլաւ—գլխի կնացի ժամ, 7 ծունկ
աղօթք արի ս. խաչ պապային տիմացը, ճեպս քաբիկ
պիլէ չիքար, որ մոմ վառէի։ Տուն ողորմիս ինծի,
ասի, էլլաւ տուրս, կնայիմ մեր գիւղիւղները ինծի
կը նային—հայտա երթանք ասին, խաւովի տրին
խողգուխէս, հայտա կենէ Ծատուրայիս խանութը.—
մտանք, կնայիմ, նոմայ մարդ, օրդաներնալ Փիլոսին
Սարգիսը, գլխի ռախինալ տիմացը շարած. օյ քէֆի
մայիլ, ճանայ մարդ էր հա...
— Աստուած օրհնէ, գերեզմանը, լուս ինչնի
վրան։

— Պարեմ Օհան, առաջ

— Աստուծուպարին, Սարգիսն, ասի.

— Անպեսէնը տուն տեղը կիտիս, առաջ.

Ճլդ, ճլդ վրան կնայիմ, ինչ կասէ իսա մարդը
տէյին։

— Պանչիհասկցա, ասի.

— Ի՞նչ սուտ մեռուկ կլաս, առաջ.

— խաղնային տեղը բեզի համար կիտէ կասինու։

— Պէլլի է որ ատուր կալաճին տրիլին. տըմ-
տըմ առաւ։ Գիտցածս կիտիմ, ասի, ամա ասել իրա-
ւունք չունիմ, գէրէ սատանոց պան է։

— Սիմ-սիմ-Սիմավոն պէտքը չէ, առաջ, հանից
ճեպէն մէկ բաշքա ստալ—խարճը իմա,—խաղնան
կանիքնը կիտակէս, առեք առաջ։ Պուզ կտրեցա, քանի
ամիս է ստակի երէս տեսած չէինք։

— Զիկտիմ, ասի, չորս քովս նայեցա, կնայիմ
մեր աղօցը աչքերը կցոլայ—տղաք խայլիլի տսի.
խայլիլինք կանչեցին մէկ պերան։

20 ը. ընկաւ փայերս. մենք մեր խաղնան կտանք,
ստուոսը Սարգիս ալին։

Ատօրը մախարիչ խմեցինք։

Մեկտուում օրը թախմ էղանք, գնացինք, պաշլա-
յեցինք պանելու։

Կետինը պաղած, քարի պէս պան էր. լօմերս
զօռի կուգար, հայ-հայ կը կօռուէր—տմա խայրէթ-
ներս կիտէր, հախէն եկանք, երկու կաղ խորկ-
ցանք, անկից կետինը կախօղցաւ։

Մէկ շաբաթ կլար գայիլ տա պանածներս,—
մեկօրմը—կետինին տակէն անկաճներուս ծաներ
պաշլայվեցաւ լավելու. կանք առինք, պանել դադոն-
ցանք, հալերս փեռատ էր, բէշ վախեցանք։ Հէջէ
մեղիմէն աղէկներն էին. մեր մէջը Եղիազար աղան
կարթացող էր—գիտիք ի՞նչ է, տղաք, առաջ—ատուր
խայիլ անելու աղօթքը կայ, հէմ առ աղօթքը ճէմը
կարգացող Աւագատուրը կիտէ—վաղը երթամ ես իսա
աղօթքը առնիմ, անկից կը պաշլայինք—հէ, Օհան,
ի՞նչ կասիս, առաջ։

— Մէկ խառչ սատեղէն անդին չիմ երթալ ասի,
միտքս եկաւ պոպայէս լսած աղօթքներս. նա, Աս-
տուած ողորմէ հողին, կասէր քի—Հայր մերկինքէն

աղէկ աղօթք չիք տէյին—ասածով ամեն չար կը խաբանի—աս աղօթքը ես կ'իտիմ ասի.—ծարէ ծար քաղեցի, ի՞նչ ծան, ի՞նչ ճշտում, ամեն պան վերջացաւ. խաչակնքեցինք երեսներս, փաթափադ պաշտօնեցինք պանելու:—Մեմալ նայիս լոմս մեքսա պանի զարնվեցաւ, ամպէս մէկ երթմիշ էղաւ ուր, ալայ իւրդմիշ էղանք, թառս արինք դադրեցանք, պապանծեցանք—«նալեթ չար սատանա» ասաց, Եղիազարան, առջինը պացից պերանը—գիտի՞ք, ի՞նչ է, աղանք, իտա պանը, հէշ չէ, խաղնային տուռնէ:

Անկից ես—պիպեղեմիշ ըլալէն, ինչպէ՞սիք, ասի տեղը կ'ասծիս:

Մէկէն ալայնալ պացվեցան ճուտորեցան: Աֆերիմ Օհանաին. հայտա մախառիշ, ասին: Ըսոֆով ռախիներս անպակաս էր—Սարգիս աղան քաղաքէն կը խրկէր. պոնեցինք պողաղէն, պասա խմելը. տաքցանք, կրակ կտոեցանք, վախերս կնաց: Ի՞նչ սատանայ, ի՞նչ մեղիմենաղէկ, ի՞նչ ճին, ի՞նչ ճինի պալադիմացներս կելլէր:

Առինք ձերքերս, քիւրէք, լոմ, պել, խաղալ խընտալէն, աժտեհար կարած պաշլայեցինք պանել. փորեցինք, ճիւղաեցինք, բալաս-բալաս ախտարկիւնտեր արինք օրթայ օպան ինքերս ինծի մոռցած, իտապանին մէջն էյինք. մէմալ նայիս, արարիշ Աստուած, մէկ ֆուրգունա, մէկ ալեկոծում էլաւ, չորս քովը փուք-պօրան. գնտանը կոխից, ոտքերուս տակի հողը պաշլայից պմիշ ըլալ, ուռլամիշ, ախտարմիշ ըլալ. մենքալ, լեղապատառ տառհալադ մէջէն ելանք. կնայինք՝ տիմացներս յունտա փոս պացվիլ է քովանց կայնիլինք, սախո-սախո կաողանք, մօտկնալ կը վախնանք. Մէջերէս էնկ ուժովը, էնկ անվախը, կաւա-

թինալ խոշորը զարնողը էփուշքանէր—կապեցէք մէջքէս, ես կ'իտիմ, ասաց: Անպէսալ արինք կապեցինք, ապուլ տուինք: Ես ասիմ մէկ սահաթ, տուն ասա երկու—ծան չիք, չուանը կը ձղինք կը քաշինք—մարդ չիք—մէմալ ձղեցինք՝—քաշեցինք, մէկ ծանառ պան վեր էլլաւ.—ծունը գլխներս.—ծեր, չոր, մեծ, սուլուր միւրիքով փուքի պէս, սավան փաթափած պաշլայից էտեառանց, էտեառանց-Ախսային տէրէյին սնորով էրթալ, մեղիալ մատով-մատով ծան կուտայ, մեմալ նայիս աշքերուս ախմացը խայպ եղաւ, ուռուֆներս պացվեցաւ, լեզուներս կապվեցաւ, պան սակ կուզինք՝ չինք կարնալ, կանչել կուզինք չինք կարնալ, պաղեցանք, պուգ կտրեցանք, մնացինք:

Օհանան թաղուեցաւ, հանից լիւն, իլինքցուց, պիւրիմ-պիւրմ պաշլայից մուխը ապուլ տալ:

— Օհանա, էտե իտա մարդը ուրտելս կնաց.

— Նայէ, ի՞նչ կասէ՝ ասաց, ինքնալ պաշլայից բուքս խնտալ. իտա պանը հիշ մարդ կլա:

— Հապա ի՞նչ է:

— Մեղիմէն աղէկն է տա:

— Էյ ասպէս թող ըլա. քու թահմինովա ուրտելս կնաց կէնէ-կէնէ:

— Օհանան բիշմը միտքի պաթեցաւ, ու քիշմեն... պելլիմը չէ՝ Գիւլլի օպան տա. խաղնային պօլը հոնէ խո, հոսի օսկիով պօշքաներնալ պել է ուր հոն կ'ուրեցին, տակը ախո լաղմ կայ. շինտիս արիլիսնը կտիր, հոս պան չիքա:

— Էյ էփուշքան ի՞նչ եղաւ հապա:

— Իտա ընկածը, ընկած եղաւ, փառչաքեսէք եղիլ էր. այնմիշ չեղած տուն տարինք:

— Օհանա, կալաճին մեր մէջը. տուն խիստ տեսօք պատմեցիր, մենքալ լսեցինք էկլեմիշ եղանք.

շնորհակալութիւն. ամա ատ ալայը աչքերուտ երեցիլ է, եա պէլի է որ խմիչքը վրա անցուցիլէք, փութիւն տակը մնացիլիք, էրած տեսիլիք:

— Խառնաղըսըն մեմալ քեզի պան պատմողին, մարդու թէրահաւատ կանիք. տեղէն էլլաւ, կտակը առաւ, արթիւ կէս գիշեր էր: Լուսաւորիչի սահաթը կնայիմ 12 կը դարնէ:

— Օհանա շնորհաւոր Նոր-Տարի:

— Ամեն տարի պարով հասնինք:

— Աս տարիալ խազնա փորելու միտք չունի՞ս առի:

— Տասը մանէթ տուր, կըտնիմը կէսը քեզի կպերիմ, ասաց:

— Տասը մանէթը տուի ատ ամեն տարվան ատէթ էր. նայէ ասի, Փիլոսին Սարգիսին օյլինին չի պերիս:

Ձէ, չէ, ատ դիաց միտմիտ էղիւր ասելէն տուր՞ էլլաւ:

Ամա իմ ասածս էլլաւ. դաւալը Օհանան ատ տարինալ դուք շատ ապրիք եղաւ:

Խազնային լաֆնալ վերջացաւ:

ՄԱՐԻԱՍ ՓԻՔԱՆ ԵՒ ԽԱՉԱՐՈՍ-ԱՆ

(Չին Նախ)

— Կուպեռնաթուտ ասած պանդ դուք գիտիք ինչ սոյ պան էղածը:

— Ինչպէս չէ:

— Ձէ, կըհասկնա՞ք ինչ սոյ խոշոր պան էղածը:

— Կը հասկնանք, կը հասկնանք, ճանա:

— Ձէ, դուք մէմը աղէկ միտք արէք, կուպեռնաթուտ տունդ ապետի գանը՝ շախա պան չէ, գիտիք:

— Հէլալէտ շախա պան չէ, կիտինք:

— Է՛ն ճամը աղէկ հասկցիք ու անկաճներուդ օլ արէք:

Շբանալէն կըքալէր իրեն զալին մէջը, մէմը մէկին, մէմը մէկալին կըմօտկնար ու կը հարցնէր Մարիամ փիքային էրիկը՝ Խազարոս-ան:

Պատմածս պապունց տարուան անցած-կնացած ճին նախ է:

Խազարոս-ան ան ժամանակուայ գէնկին աղաներէն մէկն էր. էրիկ-կնիկ էին, անդաւակ, պալապան տուն-տեղ, ձի, արապայ, պանուր, խզմէթքեար, իրենք ալ տուռերը բաց հարկաւոր մարդիկ էին:

Ալ քաղաքներս մէկ մեծ մարդ եկաւ, եպիսկոպոս, կաթողիկոս, հայտա տացա տունը կինջեցունէին:

Տարին-տաներկու ամիս ատ տաղտաղային մէջն էին:

Խազարոս-ան կէնճ ժամանակը, ասածներէն, մեծ քաղաքներ կնացած-եկած, շատ փամէշշիկներու հետ նստած-ելլած, չուաններ կտրտած մարդ էղիլ է: Աղէկ ուտել խմել, թէմիդ հազնուել կըսիրէր, ծերացիլէր, ամա՛ կենէ ճըռդ-ճըռդ կօշիկը ոտքը, անկման եախան ու փոթ կալուստիկը վիզը կըքալէր. իսկ Մարիամ-Փիքան ասիանը՝ Նախշիանի մէջ էնիկ իվանի մօտնիցա կնիմարդն էր. հալաւին էնիկ աղէկ, էնիկ խասը, էնիկ մոտնին առջինը նա կըհազնէր, տեքուդէ, շէյֆուլ, պիւրինճիկէ, պառխթէ կոօ-կոօէ փլաթի, տակեն բուխուլին, ոտքը աղլաս պաղինքա, կլոխը պուրլիով շի-

նիոն: Պալի մէջ ասիւնը՝ մէք հատ էր, չկանուելիք փամբուշքա, ամեն դանցերը կիտէր. քատուիլ, մա-
զուռքա, էքոսէս, բոքա... անպէսալ վարպետ կըլիս-
դար, որ խըպըլիկի պէս կը թռչէր:

Քաւալեռներնալ ծեռքէ-ծեռք կը բաշէին:

Պատ-պատ նստած եանկաներնալ կը պոսպա-
սէին. որը՝ կասէր երեսը քսած է, որը՝ ունքը կու-
պուցած է: Ե՛յ, ըլանը՝ կըլայ, գէրէ արթիւ տարիքը
առած էր:

Ամա էրիկը թող խուստուրմիշ չանէր վրան՝ սիր-
տին ուզածը կանէր: «Մեր Մայրամը սոսաց» — վեր-
ջացաւ, պիտի կատարուէր:

Պատմած օրս պարեկենտանքին կիրակին էր. պլի-
նի ծան տուած է եղել է Սաղարոս-ային տունը: Զի-
կտիմ ուրտեսէն էկած չինովնիքի սօյ մարդ պուռմալը
պլիսով, օմուզին վրան էփուլէթներով, ցոլուն-փոլուն
հալաւով — պելլիէ որ հանած-վարած, եարամաղին մէկն
էր, Սաղարոս աղային ասածովը՝ կուպեռնաթոռ էր:
Զինները մէջը օպայ ելած պլինիով, պիւրիմ-պիւրիմ
պուհերը ելեկէն կըտանէին, կըպերէին: Մարիամ
փիքանալ մէմը դուրս, մէմը ներս վաղելէն համեցէք
կանէր ամենին, «Իմ եփածս է» ասելէն:

Սաղարոս աղային սեղանը՝ շէն, մաղաղիկ՝ կի-
նինալ պու. միսափրները կերան-խմեցին, քէֆլեմիշ
եղան, շէնցան. իտտ արալըխը մէյտան պերին սալ-
ֆեղով փաթթած շամբան. ամեն մարդ տեղերէն վեր-
ցան, լցին բաժակները, կենացները սկսուեցան: Սա-
ղարոս աղային կենացը...

— Ուռն:

Պարպեցին, կենէ լցրին կաւաթները...

Մայրամ փիքային կենացը... կուպեռնաթոռին
կենացը... տրիլիս նը — կտիր... չիքային: Փնտռոցը՝

եղան . վար-վեր... էրկուսնալ խայպ եղիլ էին... Սայ-
խայտան մէմալ նայիս էրեցան: կուպեռնաթոռը՝ երե-
մերը, քու-հարբած, Մայրամ փիքանալ կարմրած,
բրտնած, ունքին մէքատնալ ընկած: Երիշ մարդիք
շախայով խոլթուխէն մտան Մարիամ փիքային հայ-
լին տիմաց առին տարին...

— Ի՛հ, խե իմ սոսա՝ նայիսնը — իսա ի՛նչ է...
ծեղի համար կրակին տիմաց կոյնեցայ, կածկոնեցայ,
ուռքալ խանծեցի խալսեցայ:

Հարբած-խելօք չորս բովը կայնած՝ որը խնտաց,
որը հաւատաց, որնալ սուտ չըկիտիմ, սուտ չիտե-
սնող եղաւ: Մայրամ-փիքային սուր փակեցին, նորէն
շէնութիւնը շարունակեցին, Մայրամ-փիքային ու կու-
պեռնաթոռին կենացը մէկտեղ խմեցին... Անկիցալ 5
ճուղ շանտաններով, չիրախները վրան վառած, մին-
չև մահլան կուպեռնաթոռին ճամփեցին:

Սաղարոս աղային քէֆին քէֆ չի հասներ. շա-
խա պան է՝ — կուպեռնաթոռը տունը ապետի եկիլ
էր:

Աչքը պուշ, անկաճը խուլ շատ ֆառիսին չի կնաց
ուրիշ պաներու, միայն կուպեռնաթոռին Մայրամ
փիքային կովածը սիրտին կնաց խիստ մախքուլ: Կե-
նէ զալին մէջ շփանալէն, ուրախ-ուրախ կըբալէր,
մէմը մէկին, մէմը մէկալին կը տառնար, կուպեռ-
նաթոռին լաֆը կը պանար:

Սաղարոս-ան ալ, Մայրամ-փիքան ալ շատ տա-
րուան մեռած մարդիք ին. նացա զիտցողներուն իզն
ալ, թողն ալ մնացած չէ. բայց նացա անունը, նա-
ցա լաֆը տտէն-ատէն մէյտան կենէ կելլէ, գերէ ինչ

էին, ինչ չէին, իրենց ունիւմ-չունիւմը յետ մահուան քաղաքին պախշեցին:

— —

Սապոռնի սոխախը, ռուսի ժամին տիմացը, ուր տեխ շինտիս ուբուանէնը, ատ նացա տունն է: Ասոր տախտոէն քաղաքիս վարժատուն երթող հայ տղոց համար տէֆտէրներ, քերքեր, զանազան պէտք պաներ կը գնուին:

Պեւի պան է, որ ատպէս միամիտ, մարդասէր, բարի մարդիք անդի աշխարք արքայութիւն ընկան: Բայց ի՞նչ ֆայտա, էնկ սիրած պաները անտեղ չի բան—կուպենաթու, եպիսկոպոս, կաթողիկոս:

ՊԱՍ ԶԱՆՈՂ ՄԵԼՔՈՆ ԱՆ

Պալապան, իրեմէն մեծ քոնդու-պասը կոնակը, մէկ ծեռքը կէս կաղնոց փատէ ֆէնէս, մէկալ ծեռքնալ հաստ փուշոտ տայախը—Մեքընն ան ամեն օր իրկվան—մթնիմ չի մթնիմ—տունէն ճամբայ կեւէր, կատրիննից եա հասնիք չալելու:

Մեքընն ան Մազոտին բառթիւն մէջը—պաս չալող էր:

Նս ինծի կիացածէս վերի է տարա կը տեսնէի: մէկ չէ, էրկու չէ, ամեն օր, տարին տասվերկու ամիս, ատ պանին մէջն էր:

Ինքը կարճուկունտ, գլոխը վար կախած, կարմիր-ճերմակ թուշերով, պույուխը սև ու տեղին, ատեն-ատեն ալ կանանչ կըզարնէր, պէլլի է որ ներկած կլար, գէրէ որ՝ տարիքը 70-ի մօտիկ էր: Սուսփուս իվաշ փիսիկի պէս մարդ էր:

Ճամբան մեր մահլայէն էր, ամեն ռասա եկածիս կալաճիի կը պոնվէինք:

— Ետե, Մեքընն ա, ինչպէս է պանը՝ բէֆրտ, հալտ:

— Պանը պանէն անցիլ է,—կասէր,—որ բէֆն իս պալամ. խայտաքի մարդ ինք: Պապայիտ հարսնիքին Պաուպոյին բառթիւն մէջը չալիլ իմ:

Պերանն էր ասածը, անիսէ, ծերացիլիս ասէյիլը՝ սուտ չիլսող կլար. հազ չանէր:

— Ան զարար չունի. իտապէս ծանտո պան՝ հէմ կտանիս հէմ կը պերիս, տահա ուժդ վրադ է, բեղի ալ խասէվէթ, հապա թուշիտ ալը. Մեքընն ա, տուն տահա մեղիպէս կէնճերուն պասդմիշ կանիս: Օրի-հաւոր դռեղեաք իս սև:

Մեքընն աղային երեսը կը խնտար, խառշ-խառշ կլար. կը շփանար...

— Շնորհակալութիւն — պերանտ օրհնած, ամա...

— Ի՞նչ ամա է կենէ:

— Աման անէ որ, առաջվանը չինք. ի՞նչ ֆայտա թուշիս ալը... Վրաս նայող չիքայ—բիտնքօ էլլանք: Տուն կենճ իս քու անկաճիտ ջուրի ծան կուգայ:

— Որքն նայած կուգիս, կասէյի: Դիշմը գիտիս տակէն խնտալեն:

— Կիտի պերէ շան լակոտ, չի հասկցանը կոյեա. տառտը քեզի. տուն ալ ինծի պէս ծերանաս, կասէր,—ետեը չինայած կերթար:

Աս Մեքընն ային կնացածն էր: Մէմէկ ատեն ալ Մեքընն ային դառցածը պէտք էր տեսնել: Գիշերը 3-ին 4-ին, տահա ուշ ալ՝ լուսու: Կէնէ կոնակը քոնդու պասը. ծեռքը ֆէնէսը, մէջն ալ չիւրախ վառած, ինքնալ քօս հարբած, երեր-երեր սալամիշ ըլա-

լէն: — Աղլի-իւաշ մարդուն ճանչնալ չիլար. մեքամ
աժաէհար, կանչ, ճինչ, բիֆիւր. հարտալ. . մարտալ...
պարապ սոխաններուն մէջ՝ ծանր երգմիշ կլար: Մէ-
մալ նայիս կերթար-կերթար թառս կանէր, կը կայ-
նէր. ծանին ուժոքին կորա «ЛОВИ ЛОВИ» կը կանչէր:
Զայիւր աչքին շուքի պէս պաներ կերկային. անկիցալ
իրեն տունին կը մօտկնար, կը պաշլայէր «բուչու-
բուչու» կանչել. մահլայի շուներնալ արթիս սորվիւ
էին, խառավուլամիշ կանէին, սիւրբիյով դիմաց կը
վազէին: Մէկին հաց, մէկին օսկոռի կտոր ճեպէն կը
հանէր, դիմացները կը ցքէր: Կասախնիցի ջրգնան
ճէպն էր:

Մեքոն ան, ինչպէս աղամօրդի, ունէր իրեն
թուլութիւնները. խիստ մօտիկ էր խմիչքի. անկից
աչքը տուրսն էր—քէշ ատէթ ունէր. հարբած խելօք
դիրացիներուն տունը կմանէր, տարա-հարա սայ-
եալիւն-եանդախլամիշ կլար. зато երկու պանի
խիստ մուխայեթէր. մէմը սէլամէթ պահիւլէ 40
տարի քօնդուպար, մէմալ հիշ կերած չէ պասը-պաս
ուտելը աւուր կարճութիւն է կասէր. մեռնելէ ալ
խիստ կը վախենար:

Մեքոն ային շատ ժամանակ է տեսած չէի, մէկ
օր մը մահլային տուրը կայնիլ իմ. Զատիկի երկու-
սուս շաբաթն էր, սուրբ Թորոսի չանկը զարկին.
մեռելի չանկ էր. յայտնի, հատուճ ճնկաաղմիշ ա-
նելէն կըլսվէր: Երբ չէնէ ատ ժամի չանկի զար-
նվածքը, առաւօտ ու իրկվան ժամի, պատարաքի
եղիլ է, սալթ եաղնի չանկ զարկածի կըլմանէր.—
զայիւր աս անգամին հանդարտ աղէկ հաւա եղածէն
էր. խորթ որ, թուրը երեկի հաւա էր. ինչ քամի,

ինչ թող, ինչ արեւ խղմիշ կանէր. սուսունը, ծան չի
լսվէր. գիտիսքի թաղաւի էր: Իսպէս աղէկ հաւայի ալ
մարդ կը մեռնի, ասի. անկից՝ Մեքոն ան միտքէս
անցաւ. կը նայիմ՝ խառ ժամանակը Հաճիպապիւն
Մեքեկեան ան կանցնի: Նարա տիրացիներ:

— Պարե Մեքեկեան ան:

— Ասածու պարին:

— Ո՞վ է մեռնողը:

Պասչի Մեքոնը:

Հէ, ասի... պերանս պաց մնաց... շաշմիշ եղայ
ինծի մալիմ եղածին:

— Զէնէ մի ախացքին պասը կերաւ, ասի: Պե-
րանիս եկաւ:

Մեքեկեան ան քիշմը խուլ էր:

— Հա, հա, հապա, ասաց, լուզուն պերանին
մէջը լոլմելէն, պուռնութիւն ալ անգաղըրում քէթին
մէջը քսելէն ու վոնքաալէն: Բարկենտանքին կի-
րակին, հարբած տուն տառցած ատենը պուզլավու-
լին վրան դայմիշ կլայ, կիյնի, պասը խուռտու-խաշ
կլայ. ինքն ալ ատ օրէն վերի է պալնից պառկած է:

— Ինչ պիտ անիս, մարդուն էճէլն էր—Փառք
գոհանամք Տէրօջը. կեանք տուողն ալ նա է—առ-
նողն ալ:

Էն ճամբ վերջը-վերջը քոնդու պասը Մեքոն ային
կլոխը կերաւ:

ԽՈՒԹ-ՍՈՒՋԻՆ ՊԱՐՈՆԸ

Շատ տարի է ատ մարդուն չէր տեսնէինք մեր
քաղաքին մէջը:

Սաղ էր, մեռած չէր ամա՛ ռւրաեղ էր, ի՞նչ կանէր-պէլլի չէր:

Պարտք չի տալ, փախիլ է, պօղստովիլ է—կա-սէին:

Պէքիւմ խորթ էր, պէքիւմ սուտ, պէքիւմ տուշմանի կալաճի էր:

Ես լսածս կասիմ:

Հալխին պերանը պոնել կըլոյ ի՞նչ. կասին շի՛ն: Կասին, կը պանդասին, անկից կը դադարին:

Անոր կէտը կայ:

Անպէս ալ էղաւ: Ասին, ասին, դադուեցան, վաղ էկան. կար մը չիքար մը անուշնալ մոռցան:

Էնճամը, ճանրմ-ճանրմ մարդը խայիպ էղաւ:

Անցեալները կաղէթ կը կարգամ. աչքիս կերեայ, կասիմ. «Приазовский Край»-ին առջի երեսը, պա-լապան ոտաքայի մէջ առած, տպած է՝ «Խուլթսու-զով Պարոն սըանչալսը Մօնթէ-Քաուլօ գիօռեա, ա չօմ»... ֆէլան ֆեշմիքեան:

Ուրաեղ էղածը, մեռածը իմացանք, բայց...

Մօնթէ-Քաուլօ և Պարոնա...

Խիստ զարմացայ:

Էրկինք կետինէ հեռու պան հօշի գալու պան:

Խնատու մէկ թիաց: Մէկալ թիացալ, միտք անխնը, ցաւելու մեղքընալու, լալու պան:

Ձալալը ժարդ, անբաղդ մարդ:

Եթմիշ տարեկան գաս, սաղ սէլամէթ տալիս. սուն, տեղ, զործ, օղլուշախ, սօյ-սօփ, բարեկամներ ունենաս, ժամիդ հաւատիդ մօտիկ ըլսա՛ ամէն ատ պաներէն զըրկըլիս ու յանկարծակի, թահմին չարաճ տեղէդ---գանուխ...

Անալ ուտելիս:

Մօնթէ-Քաուլօ... թուղթ, ուղեթքա խաղացողնե-րուն պունը:

Օտար երկիր, օտար քաղաք, օտար մարդիք, օտար լեզու: Ինչ տուն նացա կըհասկընաս, ինչ նա-քա քեզի: Կարելի՞ պան է, հայ ադամորդու, Նախ-շըվանին մէջը մեծցած, սորված, անալ ծերութը, ալըշմիշ էղած սաղալթան կանոխ ժամ երթալու, ժամէն պաղար, անկից խանութ, տիմանալ ատ նոր կեանքին:

Ձալալը, քաշածը գիտէ: Սաղ չէ որ՝ հարցու-նուս: Հէպէթ ըզ կոռեա պիտ մեռնէր:

Անբաղդութիւն, խաթէ ամէն մարդու կարող է պատահել կապրիս-կապրիս, չիկոխ մաղուան գլխուդ դալիքը: Մէմալ նայիս, խանութդ կըակ կիյնի-կերի, գող կը մօնէ, փութաշէրներդ մաթաթ կանին, քովդ նոր խանութ կը բացուի, գործդ փեռադ կերթայ— կը պուլպուրնայ:

Ատ մէկհասան ալ նարա գուլխուն էկած չէր: Պաղարին մէջը էնկ աղէկ խանութը—նարանն էր. միշտերին մէջը իլինք. գեղացի, տեղացի... օր օրէ կըփրփրէր:

Անպէս է նը, ի՞նչ էղաւ որ անյայտացաւ, Մօնթէ-Քաուլօ գանուեցաւ: Թուղթ խաղացող չէր. քօնչի-նայէն, տամայէն ճոկ ուրիշ պան չիկաէր, անալ ճէմը ախացըին, արև արեգակ հալա ըլարնը, խա-նութին տառապանին վրան նստած, տիրացինին հեռ սամա կը խաղար—պօղայէն ետ էրկու փառ չայէն— ատ էնկ ուղառեաթցը էղածն էր:

Ինքն ալ միշտ խուռտուտ էրեա, քէֆը տեղը ժարդ էր: Խորթ է բիշմը պարծնալ կըսիրէր, բիշ-

մալ մարդու վրայ խնտալ ատէթ ունէր: Ճէմը: Էյ
ատ պակասութիւնը ով չունի որ:

Հապա որ քամին տարա հոն քըշից, որ ֆուլ-
թունան, սաղաղանը, պօռանը: Չէնէ մի ճամբան,
տուն գընացած իքենը սատանայի հարսնիքի ոստի
էկաւ, հալալաթմիշ էղաւ էրկինքին պուլութը, ան-
կից վար ինկաւ խութսուզը Մօնթէ-Քաուօ...

Կամըչէքէք...

Կըտիք... Ո՞վ է մեղաւորը:

ՄԱՔԱՌ ՄԱՆՈՒԼԻՉԸ

Իշվական մարդ էր.

Ս. Նաչի պախչան էրթողները, ամենը նարա
բերանք էին:

Ձենիհաթը.—

Գիացած օրերէս վերի է—պախչայի պուֆեթը
կըբոնէր.

— Պուֆեթչիք էր.

Ամա ֆասօնը՝ թէմիզ մեքամ կուպեոնաթոռ սաս
քինազ Կակառին:

Ամպէս իրեն կը պոնէր.

— Փառաւորեալ պուքամպար, մեծ փոր, կնտած
բալվածք, հրամայական ծան.

— Լաքէյներուն վրան կանչած իքենը—ծակէ-
ծակ կըմոնէին:

— Լէպպէյի-Սուլթան, պախչան մտածովդ՝ դի-
մացդ կըզանըվէր.

— Քաղաքավարի գլոխ կըզարնէր, բարե կու-
տար, առողջութիւնդ կը հաբցունէր:

— Ամենքին իւրը առիլ էր, ամենին առքը դի-
տէր.

— Ձիւկիրտիէկ մարդոց—«ուխտերդ ընդունա-
կան» կասէր, շատ երես չի տար, զըխի ժամին ճամ-
բան կըցուցունէր: «Գնացէք, չէնէ կուշանաք»:

— Ձենկին, պօլ ստակ խարճող մարդոց հա-
մար, հըռըշման սաօլ բանալ կուտար, — վրան սալֆեթ,
չինի, չաթալ-դանակ, վազով չիչակներ կըփռէր, կը-
շարէր, ասպէս-անպէս կասէր, կընստեցունէր.

— Կը պաշլայէր դալի շարական կարդալու գլոխ-
ներուն. չէշիդ—չէշիդ ուտելիքներու, խմելիքներու
անուններ տալ.

— «Ասօր պազարէն մեքամ սաղ ասեթուա առի
որ—թըփը՛ն—թըփը՛ն խաղալէն, տանհալաթ արա-
պան դըրինք: Անկից երեւի բառաչայեմքի պառաշքա
ունիմ. երեւի սալեանքա, բեպապ կարելի է պատ-
րասաել—կըհրամայիք».

— Անկից լեզու կեւէր, սուտ-խորթ կասէր,
մարդոց հաւեսը կըբերէր, շտահները կըբանար: Ի՛լա-
բի ադ օրը հաւան ալ ադէկ ըլար—խիստ քեֆը վրան
կըլար—պօնքուռաթ.

Աստուած մի արասցէ՛ երկինքէն ամպը կախ-
ված, թաթաւն ալ կաթիմ—չի կաթիմ, — օրն ալ կի-
րակի, ծախսի օր, պախչան մարդ չկայ—նա փիրէն
կեւէր, քիթէն ճանճ իյնէնը—բառսուն կառը կըլար.
Բովը մի մօտկընալ:

— Քառսուն տարի ադ բանին մէջը եօլա կեր-
թար, ֆայտայի երես տեսած չէր ու ճեմը նարա
ֆայտան ան եղաւ, որ երկու բան ադէկ սորվիլ էր,
հասկըցել էր.

— Նա հէմ ադէկ կասթուանոմ էր, հէմ ադէկ
ասթուանոմ էր:

— Կաթնաճուղի էր, մեմը որ՝ — պուկին խիստ մօտիկ էր. պաղարէն բերած էնիկ համով բաներուն համը նայելէն, մէմէկ ատեն տակը կը ձգէր, անկից տակուցքն ալ՝ վարպետ սօյէն միշտ երկնեւուն կուտեցունէր.

— «Ասոր, աղբարս տիշըս չօղտեցաւ. խառըան՝ քուռափաթքայի տեղ, թողալնալ՝ փեռեփեռքայի տեղ ուտեցուցինք, թեք եղբ աղէկ ըլայ ու պօղկէկ ատուր համը գիտցողը սօլ է. էնիկ առաջ բօնեաբէն կառուկը, ոսմին ալ բռնուկը քիթերուն կուտաս — հարբած խելօք սօլ որին է, հալվայի տեղ կերթալ տահա շնորհակալ ալ կըլան.

— Ասթուանօմ էր — դօռը գիտէր, նարա գործին յաջողութիւնը հաւայէն կախեալ էր.

— Ամս, թաթաւ, մուրթ գիշեր, քամի թող — զարար էր:

— Արեւ, արեգակ, լսանինկայ գիշեր — վաստակ էր:

— Կուզիս — չուզիս՝ աչքը երկինք նըստած էր.

— Նա բերանք էր ամպերը որ սեմթէն էկած գնացածը. քամին որ սեմթէն փըշածը, նիզովքայ էր վեռխափոյ է, լուսինին քառորդը երբ փոխվելուն:

— Ո՛րտեղ կը մնայ քու ասթուանօմը:

Մաքառ Մանուկիչը գործէն ջոկ, ուրիշ սիրած բաներ ալ ունէր.

— Խիստ հաւէս էր խուշի: Հոս պիւլ-պիւլ, հոն քանառէյքա, սախախուշի, կաճաներով կախած կըլար:

— Ամենին երբ թիւքի էլլելուն, բուրդ փոխելուն՝ բերանք էր:

— Ամա նարա էնիկ սիրած խուշը — գիշերվան խըպըլիկն էր:

— Ամեն ամառ՝ պախչան կը վաճովը՝ տեսօքէն տեսօքը, կուռեփանէն կուռեփանը կը բռնէր, քովը աղլեամա սօյէն կը պահէր — էնիկէն ճէյի համար:

— Էնիկէն ճէյով, էկլեմիշով՝ ամառէն ձմեռ կելէր, ձմեռէն ալ ամառ:

—

— Օրերը, ամիսները, տարիները զըվը՛ն, զըվը՛ն անցան. Մաքառ Մանուկիչը ծերացաւ, տկարացաւ... Խուշ, խըպըլիկ՝ բովէն թռան, փախան, աչքէ տես, բերնէ կարօտ մնաց: Ամա կենէ՛ խըպըլիկի կալածի բանայիւրնը՝ կը ճօլտօրէր, խօռօղամիշ կըլար.. Ամա, նէ ֆայտայ, էճէլը մօտ կըցիլ էր:

Անցեալները՝ երկինքը ամպոտ, թաթաւ, չամուռ հաւա էր. իսկ և իսկ Մաքառ Մանուկիչին հազ չարած հաւան.

— Կուտաւորիչին շանգը ճընկըլտաթմիշ կանէր. հանգուցեալի շանգ էր:

— Ո՞վ է մեռնողը, հարցուցին՝

— Մաքառ Մանուկիչն է, չամին.

— Ամենը զարմացան, մէկ խուճուռմը էղան, զիտիքի նա մեռնելու մարդ չէր. նարա արած շախմատները, պատմած ային-օյին սուտերը յիշեցին:

— Իսկ ես միտքի պաթեցայ. հիշ չէ, ասի, իդա մարդը մէկ քանի տարի տահա կապրէր. նա խասեփեթէն մեռաւ. ախռ էկած ամառ, Ս. Խաչին պախչան մուղիք չալելու իրաւունք տալու չին — ադ նարա համար մահ էր:

— Ինչ և իցէ՛ նայալ. ամենիս պէս, մահկանացու էր, մեռաւ: Աստուած ողորմէ հոգին: Անքան — որ՝ Սուրբ Խաչին պախչան էքսիդ մնաց: Ադ զիտիմ:

ԿԱՆԱՆՈՒ ՄԱՐԴ

(Տէր Բախալեանին պատմածը)

Նոր տահա ժամէն տուն դառցիլ էի, խալաթս պապուճա, թայխատ հագած, ահաթլամիշ եղած սեքիին վրան, իրիցկինս բովրս, սամալարնալ ֆըխըռֆըխըռ էփեկէն ստուրին վրան, ճըռ արաւ, հայաթին դուռը բացվեցաւ. կնայիմ մեր կառավարութեան սրօթը. ի՛նչ .. դա հոս, իմ տունս ինչ բան ունի առաջնորդ, կառավարութիւն, վարդապետ, տէրաւոր, տիրացու.— ես դացա էրեսը տեսնել չուզիմք.— հանձն ինչ կուզիս, ասի...

— Տէր պայ, էստէտ խրկեցին, իսա մինութիւն թող դայ, ասին, հարկաւոր դործ կայ, չեկած չլայ ասին, ձեզի կսպասին...:

Հայ անաս... էրթամ չերթամ,— բիշմը կանգ առի,— գնա, կուգամ, ասի: Մէկ ստաբան չայ պերան էրեկէն տառ հալաթ խմեցի, անկից հագայ կօշիկս, վերարկուս, առի բաւադանալ դուռին քօշայէն, տապան կոխեցի, էլիլիմ կերթամ-կերթամ համա, ճամբան միաքիս մէջէն գէշ բաներ կանցնինք... չէնէ մի՞, կասիմ, կենէ փիլսոս պիտ առնին, ամա за что? про что? խապահաթ արած չիմ ու. ինչկիցէ, աղպէս զիւշիմէյով, եկայ հասայ կառավարութիւն:

Առ հասարակ մեր սեւագլուխները ինձի չին սիրիլ, էրեսներուն շիտակ ասողնիմք, ադոր համար խիտտ հոշիլս էկաւ, ես ներս մտած-չիմտած, տեղերէն էլլան, կայնեցան. պստա համեցէքը, հոս նըտէք, հոն նստէք, պաղեցայ, փախի:

Է՛յ նստանք տա:

Սուսունը, ծան չիքա...

— Տէր հայր, վարդապետը պաշլայից, գիտէ՞ք՝ ինչ է... կենէ ծան չիկայ. ու շարունակից.— ձեզի ծան տուիլինք բանտ խրկելու համար...

Մէկէն մէկ սեփեմիշ էղայ, աչքս մութ կոխից, անկաճներս պաշլաից ճընկըլտաթմիշ անել. վայ ասի միտքէս, ասալ էկաւ գլխուս, վարիսա Սեան պիտ խրկին: Էղենը կուզիմ հարցունել՝ թուքս պողաղիս մէջը չորցաւ, կալածի անել չիմ կրնալ, պապանձումն Զաքարիայի. պաղած կընայիմ, կընայիմ վարդապետը մեքստ թուղթ հանից ստուրին վրայէն և սկսից:

Սնդիրը սորա մէջն է՝ մենք այսօր ստացանք բանտի կառավարութիւնէն ОТХОШЕН-ի. այսօր երեկոյեան, լուսաղէմին նիոգին որդուն պիտ կախ տան, հարկաւոր է խոստովանահայր—գիտիմ որ դուք՝ դուք չէք հրաժարուիլ:

— Հէ՛ ասի. չիք հրաժարուիլ որս է, ատոր լաֆը կլա որ՝—չէքի խոստովանցունել,—կըկախիմ ալ կըթաղիմ ալ:

Ինքս մէմը ահաթ նեֆէս առի, խոլայ խալսածիս. կնայիմ չորս քովնալ տէրաւորներ՝ կուծուն, պառիշնան, տէր չիգտիմը,— ուրախ, քըռ-քըռ կինտան. էլլայ տեղէս վարդապետին ցտեսութիւն ասի, մեր վախկոտ ճունապետներուն վրան ալ գէշ-գէշ նայեցայ, հայտա գէպի տուն:

Տունը իրիցկինիս մէքատ բան չասի, գէշ սոյէն պիտ վախենան: Իրկվան առջի գիշերվանէ պառկեցայ, աղեկ բունէս կշտացայ, սապախդան, տահա աղօթարանը չի պացված, սահաթը 3 եւ 4 կըլար տեղէս, էլլայ, խաչ ու աւետարան խոթութիւն դարկի, կամացուկ մարդ չիմացած դուրս էլլայ. խառա-

ւուլին ապստղրեցի տունը մուխայիթ ըլալու, հարցուն-
նունը հոգեարք խոստովանեցնելու գնաց ասան, ասի:

— Աղեկ տերպայ ասաց:

Ինչայ պաղար, կնայիմ ըլուպին գիմացը, ճեմը
մեկհատ քունձոտ ձիով արապաճի կայնիլ է:

— Հաճէ հայիս չէնէ ուս:

— Հայիմ, հայ:

— Գուլխուտ վայ, ասի, նստայ արապան, քշէ:

— Որ սեմթը՝ սողի՞, սոլի՞:

— Ինչ ան, ինչ մեկալը, շիտակ Ռաստով՝ վաթ-
արով:

Արապաճին պարապեցաւ, ծնւծնւ վրաս նայ-
եցաւ:

— Ի՞նչ կնայիս ասի:

— Աճեպ ետինը լսեցի ասաց:

— Ետինը չիս, հայտա քշէ, քշէ:

Պան խամչին, պան խամչին, ձինալ ո՞ր, թէմիդ
փորձանք, մեմը մէկ, մէմը մէկալ թուղուառին վրան
կհանէ:

Դունալ մութ, թաթոսին ֆենեռներն ալ ժա-
մանակէ սուաջ անցուցիլէին:

Եկանք հասանք աղլի պալապան պատերով, տե-
ղին տունին տիմացը, շտէ հափսանան:

Տահա դուսը լուսանամ-չիլուսանամի վրայէր՝ շուքի
պէս էր, ես ալ ինչայ արապայէն:

Չասալօյներնալ, թիվներնը ձեռքերը թառս
արին գիմացս կայնեցան:

— Стой кто идетъ?

— Армянскій священникъ, доложите, ասի:

Գնացին դուռին ծակին մէկ բանմը մամշեցին,
չաթուռ չութուռ դուռը բացվեցաւ пожалуйте ասին:

Մտանք:

Մէքատ գէշ տեղ էր, աղաճա, հոտած, ինչ կայ-
նելու, ինչ նստելու տեղ:

Կնայիմ, մէկ հատալ ուս տէրտէր կայնիլ է,
վերա կորինձ-կուտայ, էրեսը կը խաչակնքէ:

— что батюшка, ասի:

— Страшно ասաց. էշաֆութը կցուցունէ մա-
տով:

Կնայիմ աղպէս սղռաշնի պանալ չիքայ. մէկ հաա
փատէ տիրեր, վերէն ալ չուլան կախած. ինա մենք
սղայ ժամանակներս չըղի ու սախայ պոնելու հա-
մար կխորդէինքնը—ատոր շտէ քիչմը հաստը:

— Ничего ասի համան մէկ ստու բերել տու-
վի. վրան խաչը տւետարանը թախմ արի: Մէկ հատալ
կնայիմ սղայի փարչի պէս պան պերին մէջը սչոթով
մեկեր միտսիլ աս ալ տացա մասլամանն է եղլի է,
մեղայ մեղայ, տկամայ մարդ կմեղանչէ:

Անկից ճանս մէկ էրկու մինութէն, տանք տոնը
տուռի, խօլտէմիրներու ծաներ էլլան. մէկ քիչմէն
ղինձիլլամիշ եղած, էրկու հողի նեսէն դուրս հանե-
ցին. մէկը ութի, էրկուս պոյով-ուս էր. մէկալը սե-
վուլիկ—հայ էր—Ենոքին փիճը. պարեմ պան ըլլայ.
լակոտ, ինքնալ կայնիլ է էքիւ-էքիւ կուլայ:

Մօտկցայ:

— Հաճէ ինչ կուլաս ասի. միվախնալ չիս տես-
նիլ. ես հոսիմ. Տէր Մինաս Փախալեանին չիս ճան-
չնալ: Չոքէ, ասի:

— Չոքից:

— Խաչ հանէ էրեստ ասի:

— Հանից: Պաշայեցի մեղան, արալխտայ աղեկ
սոյէն թաղիր ալ արի:

— Ճունապետ, ինչո՞ւ հայերուն անունը կաճուիս

ասի, տահա ուրիշ պահեր ալ, փառաւորապէս խոսարկանցուցի:

Հայնակ էր խոստ առածս. հասկցող չիքար. КОНЧИЛЪ ասի. կնայիմ ուստ տէրաէրը տահա չափալամիշ կլայ:

Էյ թող խալսի, ու մէկտեղ կելլինք, ասի քիչմը քլսաս արի. խե իմ ասա, պէտք էր որ...

Մէկ հրաշալի մահվանական ծան էլլավ որ — լեզիս պատուած էտես նայեցայ, ինչ կնայիս...

Փալաչը շուն պոնածի պէս, Ենոքին որդուն խափմիշ արած, շապիկը գլխը անցուցածը, չուլան նալ վիզէն եանաշմիշ արածը մէկ եղաւ...

Սասանածէս աչքէրս փակեցի:

Մէմալ կնայիմ, աղան վերը արախ սալլամիշ կլլայ:

Շատ մեռել թաղիլ էի, շատ գէշ պահեր տեսիլ էի, բայց այս տեսարանը մինչև այժմըս աչքիս արմացէն անթին չերթալ:

Իտա արալընալ *смотрясь*-ը աւուճս մէկ պանմը կըխոթէ. մէկէր միասիլ ժամուցէ էզիլ է:

Որ սե անտենին ժամուցնիս — не надо կանչեցի վրան, ինքսալ սերսեմ, մերսեմ-ուռունա-սուռունա զուրս էլլայ:

Քեզքէ Սեան խրկիլ էին, ասկից աղէկ է:

ԽՐՏՈՒՆԻՔԻ ԿՐՏՐԻՃԸ

Քսան հինկ տարի է Նախշվանէն էլլածներս պապայիս մեռածը մէկ տարի կլար զայիւր աս — ու նիմ չուռնիմներս ծախեցինք, ծախծխեցինք. կեչմի էղանք չունամօռի կեղ:

Ես, աղաս, մամաս էնկ առաջ շատ նեղութիւններ քաշեցինք, համա վերջը՝ գործերս սրայի ձգեցինք: — Խանութ. ապրանք, տունտեղ, էփփէյի քաբի-թալի տէր-էղանք: Սրայի մարդ էինք կեղին մէջը:

Մամայիս մուրաար Նախշվան գալ էր, էրթանք տակէն՝ կնիմարգուն պերանը մազ կփանէր — Մենք դէմ չէինք, տմա աղայիս հետ անխարերէն գործին կըպիլէինք որ, պաժնվելու ժամանակ չիզանէինք — պուրզի գործ կուզիս, սիբքայ, օշխար, սքոբչինայ, որ մէկը ասիմ, ծարը ճօթը չիգար, օր օրէ կփրփրէինք: Ատպէսով ասօրվան վազվան ձգելէն՝ մամայիս ցանկութիւնը չիկատարվեցաւ, — մէկ օրմալ խեղճը հիւնոցաւ, ընկաւ մեռաւ: Աստուած ողորմի հոգուն, աս օրվան հասածներուս ոտքով գլխով մենք մամաներուսինք պարտական. էյ ասինք թէ մենքալ մամայիս խյմէթը կիտէինք, սիրտը չի ցաւցունէինք. ճէմը՝ մեծ աղբարս, աղաս, քաղաչքայի վրայ կարգվեցանք, մամայիս սիրտը քիչմը կոտուեցաւ. ամա պերան չիպացից, վրայէն պիլի չարաւ, նեսիթիէն կը քաշէր. սիրտը տօղ էր, չըլա թէ ինծի հետալ աղպէս մէկ պանմը պատահի. դէրէ ամեն տարի, խըտուէլէզի ժամանակը կիօտկնարնը Նախշվան ճամբելու կելլէր — հազիր խըտուելէզ է, գնա, պալաս, մէքաս սիրտիս հաւնածը հնարէ — սօսուն հայ աղջիկ առ, աչքս փակիմ մեռնիմնը, ոահատ կը մեռնիմ, կիտիմ որ տունս նայող, կառավարող կլայ:

Աս տարի կնայիմ՝ աղաս — հածէ Մաքառ, կասէ, մինչև երբ ատպէս պայղուշի պէս պիտ կենաս, հանա ես ալ գաւակ չուռնիմ, որին պիտ ցքինք կարոտութիւններս, սօյ-սօի պիլէ չուռնիք — տլան թալանի պիտի էրթա, մեղք չէ: — Կոտ Նախշվան — Զատիլ

օրեր է մէկ քանի օրէնալ խտուելէդ է... Հասկցար խօմ, ի՞նչ ասել ուզեցածս:

— Աղայիս ասածը, անխաբերին սիրտիս աղէկ էկաւոր, մամայիս ասածնալ միտքս ընկաւ, ինչ մեղքս պահիմ, զաֆա անել չիկըցայ՝ արտասունքներս պլար-պլար պաշայեցին աչքերէս վազել. փաթ արի, աղայիս տիմացը հորեցի— օրն է ասի, թող մամայիս ու բոլ ցանկութիւնդ կատարվի. վաղը ճամբայ կելլիմ: Անպէս ալ արի: Ձատկի իրեքում օրն էր Ռաստով էկանը: — Վահագալէն իզվողչիք նստայ. շիտակ կատարի-նից կնացի: Յսուռն կոճակներով մարդիք զիմացս էլլան, ճամատանս, վէշշիներս առին, վեր ելանք մեր-տեհնէն, մտանք նոմեռ:

Է՛յ էկանք համա, — շինտիս օր ծարէն պաշայինք — աս ոչխար կնել չէ. միտքի պաթեցայ. պաշայեցի վօլթայ անել. փափիռօսին զօռ տալ. քալեցի-քալեցի, քաշեցի-քաշեցի, յոգնեցայ — կնայիմ՝ զիմացս ալ մէկ հատ մարդ կայնիլ է. մէկեր միտսիլ, տիմացս հայլի է՝ մէջի մարդնալ ես իմ. Ո՞վ նայիլ է սաքան տարի հայլի. գլխի քերելու մազ սանտաբուլ ժամանակ ունա-ցիլինքոր: Կնայիմոր, ի՞նչ կնայիս. մազիս միւրիքիս մէջը իլինք ճերմակ՝ ուռուֆս պոցվեցաւ: Ես ինծի տահա կտուճ կիտէյինք. համան պերպեր խանութ վազիմ — պերպեր խանութն ալ ինչած կապիւնիցիս տակն էր. մտանը՝ մէկէն աճեղ եայնչ չիմ ասի. — հայլի, մեռմեռ սթօլներ, եալարդ աթոռներ — թեմիդ հեքիաթի մէջի սարայներուն կլմանէր. քիչ մնաց պիտ փախչէյի պերեքէթ վերսին մէկ հատ ճերմակ փէշ-դմալով մարդ զիմացս էլլաւ:

— Пожалуйте! ասաց. նստանք.

— Ճերմակ սափանը վիզս փաթթից:

— Побрить прикажете?

— Да — ասի.

— Պաշայից քերիկամիշ անել երեսըս, անկից թրաշ արաւ.

— Пудры положить — հարցուց.

— Կլոխով արի. ինչ էղածը չիկտէյի.

— Մեկ կակող մակող պան պաշայից երեսըս քսել — հայլին նայեցա — թեմիդ պարկենտանքի ճամալ:

— Шипцы положить на усы? ասուր ալ խա-միլ էղայ, ամա էղէնը չիկտէյի. կնայիմ պուհերը էլլելէն մէքամ մաշա պերից, պըլսնեքուս ծարը մէջը տուաւ, պուռմիշ արաւ. հասկցանք.

— Голову помочить? — Пожалуй, ասի.

— Одеколономъ или вижителиномъ.

— Водиколонъ ասի, կիտէյի: Մէկ, հատ փուշ-տուկի պէս պան տուաւ, պաշայից կլօխս երեսըս ցրքաւ. քէշ չէր ասֆեթիթցը էղա — անկից սրբից երեսըս, սանտուից մազս, պըլսիս վրան ալ գեթին-եաղիի պէս մէկ պան քսից, ГОТОВСЬ — ասաց — էլլայ տեղէս, հայլին նայեցա, ничего — օրինաւոր կենճցա: Կաւաւ մէքատ մարդ. անուշներ կասէ կնայիմ մեր ցորենի Коммиссионеръ-ը Շլթրպերեքովը: Մաքառ Ջախառիշ պարե էկիլիս կասէ, օ աղէկ ռաստ էկանք ասի. որ ռաստնիս спеціально էտեէտ էկայ, աղատ թելեկոամ զարկիլ էր վսթռէչաթ անիմ տէյին. վակ-զալի ուշացա, կասողինից հարցուցի, հոս եղածա իմա-ցայ էկայ:

— Ինչպէ՞սիք, առնղջիք.

— Շնորհակալ իմ, աղբարս.

— Լաֆով էլլանք սօխախ.

— Էրթանք նոմեռ, ասի, ես տահա չայ խմած չիմ:

— Ֆիլիբովին քանտիդեոր երթանք ասաց, զնա-

ցինք՝ թեմից տեսօր տեղ. պերին բոֆին, չայը հետը
նումայ պուլօջքաներ. քաղցածէի կերա ամա, քուտա
մամայիս էփած սուխալաճիին ու փոսթիւրին տիմացը:

Մէմը մէկը, մէմը մէկալը պաշայից մօտկնալու
Շլթրպերերովին, նայեալ ինծի անուէնս կուտար կալա-
րեկամացունէր: Նստան զաքամբանի, տաքերէն կլոթը
զիւ հագված, ուզնի նովսաներու կալաճիներ կանէյին,
կասէյին, կըմնտային ես ալ մտիկ կանէյի: Ան չէ ամայ,
ասաց մէկը, արի Մաքառ Զախառիչ, քեզի սթոսալաօվաթ
ոնինք: Անկից թիւքի էլլաւ, փրփրեցաւ ման պերից,
ման պերից, էնկ վերջն ալ, գիտիք ի՞նչ է, ասաց,
կարբված մարդը իրաւունք չունի սթոսալաօվաթայ
չիլալ:

էյ անպէտէնը ես տահա կարգված չիմ կարգվե-
լու էկիլիմ ասի, ի՞նչ կասիք, очень приятно, պարի
սահաթի, պարի պսակի արժանանաք. անպէտէնը ТЪМЪ
лучше մենք 10,000 հազարի ձեղի սթոսալաօվաթ կա-
նինք, փօլիսը նշանվածիա ձեռքը կուտանք, ատկից
աղէկ պաշիւիշ կլաւոր, էղաւ կնաց. անկից մեկալը
լուզու էլլաւ. Մաքառ Զախառիչ, իմ ձեռքս մէկ հատ
աղէկ տախօանի տուն կայ Ռաստօվին մէջը, արի քե-
զի ծախիմ, ճէմը 3000 ը. ստակ պէտք է, վեռնր/
ապեզփեշենի է գնեցէք, կուզիքնը էրթանք ցուցու-
նում: Պէլլի էր որ երկուսն ալ գիկիրթ էին, հանթ/
հանթ կանէին ստակ վաստկելու, ինծիալ գոյիր էլ-
պայի տեղ արիլէյին. ալահալեմ լաֆերս տահա էր-
կան պիտ քշէր: Շլթրպերերովը, տեղէն էլլաւ եսալ
նարա էտեէն:

Սահաթը 5-ի ժամանակ Շլթրպերերովը էկաւ
էտեէս, նստանք թոսովայ խոտելէզ կնացինք:

Տղայ ժամանակս շատ էղիլիմ, միտքս է: Թօփ

թօփ կայնած, վիզերը օսկի կախած, գեղացի կնի-
մարդիք գեղացիներուն եամպաշի պըռնված կուռաշ
էկածը, մատաղի թալախան. սիւրիյով քալած աղչիկ-
ները, կարիճներն ալ չորս քովը կայնած. ատունք
մէկն ալ չի տեսայ: Խաղախ մառուշքայ, հարբած
մարդիք, աղքատ, մանառ սղաք, արալխտա իտա խա-
լապալըխին մէջը, ախտարմիշ տըած թեքնէյի Ֆասօ-
նով շէտը, հագված գզված կնիմարդիք, աղջիկներ,
էրեաները ուրիշ, կալաճիներն ալ ուսնակ. առկանի,
տաւուլի ծան, կանչ, ճինչ: Քամենտ, քաշելի առաջ
ալ կար, ամա շինտի խիտո նօմայէր. մեքատ հայի
դիփարըով մարդ չիտեսայ:

— Իսա ի՞նչ է, հայ չիքայ ինչ է ասի. կնայիմ
Ֆիլիբովի քանդիթեռի բարեկամներս. մենք հայ չի՞նք
ասին. ա բարե Ասծուպարին: Իսա ժամանակը իրկ-
վան չանկ պաշայեցին զարնելու, վաղուց է ես լսած
չէի հայի ժամի չանկի ծան, սիրտս շուվ արաւ, էրեսըս
խաշ հանեցի, տղայ ժամանակս միտքս ընկաւ, առա-
ջվան խոտելէզը տիմացս եկաւ:

Ես, կասպատայ, ժամ կերդամ, ասի — մտանք
ժամ: Մտածովս մէկ հատ կերոն կնեցի, սուրբ Գէորդ
պապային տիմացը վառեցի, պաշայեցի սրտանց ա-
ղօթք անել: Տէրաէրներուն հայնակ կարդացածը, տի-
րացուներուն երգածը, անկաճիս անուշ էկաւ. թեկ-
քէլի չէր մամայիս ասածը — ժամերէս կարոտիմ տէ-
յին. մարդուս իրեն հաւատին, իրեն ազգին պէս աղէկ
պան չիլալ էղիլ է մէկէր... չորս քովս կնայիմ ամենն
ալ հայ էյին՝ սե աչք ունըով հայ աղջիկներ, կնի-
մարդիք. սիրտս ֆառախլամիշ էղաւ... մեղաւորս,
տեղէս չիժաշկտած մինչև վերջը կեցա:

Տուս էլլանք. կէնէ խոռնվեցան հեթանոսք, հայը,
ուռսը պելլի չէր կնայիմ, մէկ հատ աչքերուս մէջը

նայել-խնամատարէն կնիմարդ մօտկցաւ: Շլթրպէրէ-
քովը, Մաքսա Ջախաուիչ, բարեկամացիք — կնիմարդս
է, ասաց, ճանս, բեռթիք կնիմարդ էր — լեզվանի. ձեր
աղբարը ամէն էկածին մեզի կուգայ, դուք ալ հոսէն
համեցէք մեզի չայի, կը սպասինք. — մարդ նայէ՝ չի-
պերած չիլաս — պարեւ կեցիք. կնաց: — Հայտա, կաս-
փատա էրթանք մեզի ու քիչմը շէնուլթին անինք,
ասաց, Շլթրպէրէքովը, ֆօլթայով ճամբայ էլանք:

— Աս ֆէլանին տունն է, աս քլուպն է, աս
բամիթնիքն է, ինձի կցուցունէին՝ ես ալ պերանա
պաց կնայէի. միթէ մի իսա մեր Նախիջևանն է. Աս-
տուած վկայ, Լուսաուորիչը չիտեանէյինը՝ չի ճան-
չնայի: Սօխախներուն, պեղեստենին, արաստանին
իզը թողը մնացած չէր — նացա տեղը վարժատուններ
տեսայ — պախչաններ — ամէն սօխախը մաստավոյ,
թուամվայ, էլեքթուիչեպվայ. Փառիժ կտախնը իսա
սոյ պան է, ճէմը աչքի կը զարնէ իսա սօխախի,
ամեն ապուղիտ չասավոյի պէս կայնած սօխները,
կեղէն էկած ալ ըլամը, չի հաւնեցայ:

Հասանք Շլթրպէրէքին տունը, մասնք նես, սա-
մաւարը սթոլին վրան թախըմ էր:

Նանկան տիմացներս էլաւ, ուրախ, ուրախ հրամե-
ցէք արաւ, նստանք. հօսէն-հօսէն լաֆ, շախա-խորաթա,
չայ խմեցինք: — Էտե, Մաքսա Ջախաուիչ, խտուելէզէն աղ-
ջիկ հնարեցիք — ասաց, քիթին տակէն քիչմը խնտալէն:
Իմեսս ձեր վրան է, ասի. Ստակով կուզիք չէնէ...
Ես մամայիս էսիթը կատարելու էկիլիմ, ինձի խելօք,
տուն կառավարող կնիկ պէաք է: Անպէսէնը, հաքա,
ասաց — Շլթրպէրէքովը քրոջդ — Մանեային անինք իսա
պանը, զնա քառզեքան պէր: Պերին նայեցայ, քէշ չէր,
քրոջը կը լմանէր, չորս քովէն ալ կովեցին-էտեէն
խրիեցին, տունը չէր: Վաղվան ձգեցինք:

կնացինք կասդինին. մէկ քանի ձեռք իննաչք
ման պերինք, — Խնչ է, ասին, — ատ օյինը խաղացիլ
իմ, մեր կեղն ալ կար. պաշլայեցինք. օյինը ինձի
կըրուցէր, ամա — առխատաշներուս ճէպը ստակ չի-
զար — պօռի ման պերին: Մէկ սէմթէն Շլթրպէրէքը
փունճին զօռ կուտար, եանկաս ալ էտեէս առջէս
ման կուգար, խելքս տարին զլոխէս տարածալ տուի
տահա ճեպէսալ 100 մանէթը կնաց:

Էփփէյի քէֆլէմիշ էղիլ էյինք, սահաթնալ արթի
10-ը կլար. կօքտէ ասի, տեղերէս էլանք:

Ես, կասպատա, տարեցի — ասաց ակենթը. հայ-
տա սուրբ խաչ էրթանք, угощение мое:

Լուսնինկայ, տեսօք զիշեր էր, էրկու ժիվէյնիք
տունը. Շլթրպէրէքովը տունը մնաց, չուգաց: Ես
պուտուշչի քէնի փիքայիս հետ ծիք նստանք քովէ-
քով. поѣхали. սալ ճամբան ճիլվէ անեղէն, հասած-
ներս չիմացանք:

Սոլթուխ խոլթուխի մտած, պախչայի մուլ ալէյ-
ներու մեշէն, պաղկէկ քամին էրեսիտ փշեղէն, հե-
ռուէնալ մուզիքին ծանը, ինքտալ քիչմը քէֆլի, աս
քէֆին քէֆ կը հասնի: Ի՞նչ կտաիք: Ռօթօնտին մօտ-
կցանքը, սթօլը արթի թախմ էր — առխատաշներսալ
նստիլ էյին. Աս ինչի՞ ուշացար: Իզվողչիքներս փէ-
ռատէր, ասի: Մէմալ նայիս՝ մէքատ հաստ, ճերմակ
պուրամպարներով մարդ մօտկցաւ:

— Պարով էկիլիք ասաց: — Իմ վրասալ նայեցաւ:

— Քիսպեգներս ճանչ կը չպերիմ ճանս համա, ով
էղածներս չիգտիմ. — դուք ինձի ինչ տեղէն պիտ
կիանաք, — ես Պելախօքայէն իմ. հոս տուչի անգամ-
նիմ. — Լաղապներս:

— Պելախօքայէն է:

— Աս սոյ հայի լաղապ տուչի լսածս է — Պելա:

կօռքայէն ես ճերմակ օճախին Քառք Զախառնչին կի-
տիմ, քէֆի մայիլ մարդ է, ամէն էկածին հոս, մեզի
էփփէյի ստակ կը ցքէ:

— Շտէ՛ ես ալ նարա աղբարնիմ:

— Հապա լաղապներա ուրիշէ ու. մէկէ, Պելօ-
տիմառ-ճերմակ օճախ առել է խախօյնակ: Պիտ ճար-
դվէյինք խնտալէն ամենքսալ:

Սթոլին վրան չեղած պանը չիքար՝ չիլիմ, խիար
տիլիմ-տիլիմ, խայվար, պենիր, գինի, ռախի՝—կե-
րանք, խմեցինք, խնաացինք խաղացինք, շապաշ
տուինք. քենիբիքսա քիշմը անհանդիստ էր, վիրա
երթանք, կուշանանք, կասէր: Սչօթ ուղացինք: Ակեն-
դը ձեռքը ձէպը խոթից—տուողս էղաւ—ես չի թո-
ղուցի. ձէմը՝ 25 մանեթի պան էր, БОГЪ СЪ НИМИ,
եառաւ. տղաքին:

Էլլանք տեղերէս լաքէյները՝ վառած չիրտխներով
շանտանը ձեռքերը քովերէս, փառնոսով գինին առ-
ջներէս—չալելէն չալելէն մեզի մինչև վառաթան
ճամբեցին: Աղբար, քէֆս—նոր տահա խուռմիշ էղիլ
էր, սիրտս հէշ երթալ չուղէր—քենիբիքսա ֆառղին
կնաց, կօկդէ—կօկդէ, ասաց, մնացածնալ վաղը նշան-
տուքիդ կանխ: Մէկ հատ հինգնոց լաքէյներուն
տուի. նրստանք արապան գէպի ետ նախշվան:

— Իմ բնութքս գէշէ, ալ խմելը քիշ մը չափը
անցուցի, պաքվորելու կելիմ. քենիբիքայիս սաղ
ճամբան պաքի պաքածիս խառար. ես կիտէյի քի մեր
հայ կնիմարդիքը սուրբին, նամուս ունին. մէկեր
ոռս կնիմարդոցնալ փեռեօտ կուտան, էրկան չա-
նինք, ինչ և իցէ. սէլամեթ տուն հասցուցինք: СПО-
КОЙНОЙ НОЧИ—ասի նայալ դիմացը—ВЕСЕЛЫЙ НОЧИ
չասէ: Սահաթը 1-էր, բարեկամներս ինձի ճամբելու
էլլան, կառուլ—կուռուլ կնացինք: Ռաստով հասած

չի հասած—մէկ հատ պալապան լուս ճառակ տունի
տիմացէ անցանք:

Աս ինչ է, հարցուցի—Մանան է տա, ասին:

— Ասոր վերջի օրդ է, հածէ վաղը պիտ նշանվիս,
մէմը ասալ տեսած էղիր: Հարբած-խելօք, թէնթէն-
մէնթէն նէս մտանք: Նէսը տահա լուս էր, կրակ տ-
ռած կը վառէր. ժամ ասիս—ժամ չէր՝ թեաղա ալ
չէր. հօմայ սթոլներ, չորս քովը կնիմարդ, էրիմարդ
մուզիք, խաղի ծան—կալածիլի շուռվիթի. նստելու
տեղ չիկտանք: Մէկ հատ կարմիր, խաշած էրեսով
մարդ գիմացներս էլլաւ, —համեցեք կը խնդրեմ—
քապլինեթը արձակ է: Պօնկօլօշի պիտ կնացինք մտանք:
—կէնէ հոսալ սթօլ պացվեցաւ՝ կինիներ, զաքուսքա-
ներ. սիրտս պէհէզիր էր, խմելալ չուղէյի քունս ալ
կը տանէր: Մեմալ նայիս մէկ տուռէն, մէկալ տու-
ռէն ֆոթ-ֆոթ խալիկի պէս տղջիկներ նէս մտան—
այլինմիշ էղայ, պացւեցայ. հահա, հիհի. բաթ-բաթ
նոր կինիներ բացվեցան, քառսպքայով բանֆէթներ—
ամէնն ալ անուշ, համով պաներ էին, МОРЕ ПО КО-
ЛЪНО—կերանք խմեցինք, քօռացանք տեղէս էլելու
չիկարցա, ամէն պան չորս քովս ման կուգար. տահա
պան միաքս չէ:

Զարթեցա՝ կնայիմ, նոմեռիս մէջնիմ, հալափով
պառկածիմ. ինչպէ՞ս էկելիմ, ո՞վ պերիլ է, միաքս չէ:

Գլոխս ծանոռ, աչքիս քովալ գէշ կը կսկծի—
էլլայ տեղէս նայեցայ հայլին, ինչ կնայիս. պալապան
քառթոֆիլի մեծութիւնով ուռեցը—հէմ կապուտկած.
հէշ չիկտիմ գարկիլին, պանի գարնվիլիմ—գալիքը
էկիլ է գլխուս:

Չերքս ձեպս խոթեցի—փոռթմանէս հանեցի—
տիպիտիդ. 200 մանէթ կար, էյ ատ միաքս է, Շլթր-
պէրէքովին տունը թուղթի տարվեցա 100 մանէթ,

ուժինի 25 մանէթ, բարեկամներուս մէկը փոխ առաւ 25 մանէթ, քենիբիքասալ — շապաշ տուած իքենս մի թապալիլ ստակա, ասաց — շախալով բաշից ձեռքէս մէկ պան մը առաւ, իզվողչիք պան, туда — сюда էղաւինաց: Պուժմոժնիքս միտքս ընկաւ, նայեցա ծոցս չիքար: Ես ինչքանալ բէֆիլ ըլամնը — ինքս ինծի մուխայիթիմ. առ օրնալ, պէլլի է, որ այախչէշմէն էր թողս էղիլիմ — ծոցէս հանիլիմ — կօշիկիս խօնճին մէջը տրիլիմ. վար էղայ — կնայիմ մէջն է. առի պացի — կնայիմ հարուր մանէթ պակաս է, ատուր տեղը մէկ հատ ձերմակ թուզթ, վրան զրած՝ получено задатка от Макара Захарича Бёлодымарова за страхованіе жизни 100 р. հայ ան... երբ խառ օյինը խաղաց զլիսուս տկենթը — միտքս չէ. նու մալատեց, պաշարուկ բիճեր:

Իսա ժամանակը տուռը զարկին. МОЖНО ВОЙТИ — МОЖНО, ձերքս մէկաթ թուզթ տվին — նայեցա՝ ոչօթ էր Մառսէն 250 մանէթ սալթը շամբանսքի քանֆեթ, պատէմ ֆուրդի: Կուժու — կուժու հանեցինք տվինք. անորալ շնորհակալութին որ ատտեղը քուտիդ ունինք. — կէնէ զարկին տուռը — զարբիքա Շլթրպէրէքովէն, «Ասօր ձեզի կիրակուրի կսպասինք, Մանեան մեր տունն է. համեցէք»:

Զապալը Շլթրպէրէքով, ռահաթ բուն էղիլ է մէկ հատ պան չիկտէ. ինչ իրեն կլոխը կօտօշ փանածը, ինչ իմ ճակատիս քառթոֆիլը: Ատպէս ուռած ճակատով — խեւիմ ինչ նշանակելու էրթամ, ատպէս կնիմարդու քրոջ խեւիմ ինչ — առնիմ. հապա Մանեանալ քուրոջը էլլէնը. աչքըս լնւս — մեր կլոխն ալ կօտօշ պիտ բսնի — չուզիմ: — Համան եաթախ տուրախս ժողվեցի — տիթ պապան վարդալ:

Զաւալը մամայիս ցանկութիւնը չիկատարվեցաւ:

— — —

Հերվոն խտուէլէզ եկածս նշանուելու, գլխուս չէշիդ, չէշիդ խաթէնիւր էկածը միտքերս պիտ ըլայ: Անկից վերիէ մէկ տարի անցաւ — կէնէ պարկեն տանքին մնացած կանանչ կոռելի պէս կեցիլինք:

Տահա կարգված չիմ՝ լէվէնա իմ:

Աս ծմեռ աղտասալ մեռաւ, այլախ մեյնակ մնացի:

Տուն տեղ, պալապան աղպար, ամպարներ — մէջը իլինք պարիով, թաշմիշ ըլալէն:

Հարցուր որին համար է. ես ալ մեռնիմը տէր չիքա ու, թալափուրի պիտ երգա ու. զիշեր ցորեկ ատոր միտքը կանէլի:

Աստուած ողորմէ մամայիս հոգուն: Խեյօք կնիմարթ էր, ամէն ասած պաները կամաց — կամաց կելլին — թեէքելիէր խաղախ կնիմարդ հազ չարածը:

Հանա՝ աղբարս առիլ էր. վայ բաշածին, Զի պերած պանը չիմնաց գլխուն հարբել կուզիս, բաշ գալ. — վերջը վերջը մարդը առ տրաւ, հեռսէն փաթլափիշ էղաւ, չի տիմացաւ, ցաւի հանապեցաւ, մեռաւ. իմ կլիսուս գալունալ ատ է:

Չէ... կամաց կուտիս...

Արի աս տարի ալ, մէկ չամուռմը պատին զարնինք — պեթիմ Աստուած կը յաջողի... սայախը կը գանիմ:

Աղբիլի 23-ին խտուէլէզ էղածը միտքըս էր:

Հայր, որդի, հոգին սուրբ, ասի, կէնէ ճամատանս կապեցի, ճամբայ ելլայ:

Շիտակ կնացի կէնէ ան կոտախինցը:

Ճամբան քուն եղած չէյի բեշ քունս կը տանէր. զարկի կլոխս պարձին քուն էղայ:

Զարթեցանը կնայիմ իրիկվան է, հազվեցա էլլայ տուրս:

Վուրդայով Ստատովոյը պաշայեցի քալելու. սոխա-
լը ծրվիմա ծրվի մարդ էր. կը բալէյին կալաճի, շա-
լա տնեւէն, խնտալէն:

Ես մէջերը մեքատ էի—տնտէր տնտիրական —
պահտալ մէկ պան, վրաս հայոդ, տեսնող չիքար:

Սիւրտս կոտորուեցաւ:
Մէկէր կատինալ, մարդս մարդով է տէյին, խորթ
պան է:

Միտքս ընկան հերվան բարեկամներս, հեշոմասա
խովունց ուստ քայի, ասի: Իտա ժամանակը թափ
Ֆիլիբոլին քանթիդեոլին տիմացն էի: Արի մանիմ
ասի. պէքիմ մէկիմը կտեսնուիմ—кстати փորս ալ
քաղցած է—պան կուտիմ:

Ներս մտնելու արժանի չեղայ—Մաքառ Զախտ-
ովիչ—անկաճիս լավեցաւ. ետնչ չիմ աճէփ, ասի:

Պալտովեցայ ծան էկած սէմթը. կնայիմ. հերվան
պարեկամներս տեղերէն թռան, տիմաց էկան. չափու
չափու պաքվարեցանք. անկից խովթուխս մտան—կնա-
ցինք ստոլին քովը նստանք:

— Հածէ, ասաց մէկը մէկալին, էտե ինչպէս էր
ասածս. անկից տառցաւ ինծի:

— Շինտի քու կալաճիտ կանէինք: Յիշեցինք
հերու հոս ուստ էկածներս. խրտուէլէզ կնացածներս.
Ս. Խաչի քէֆը, Մառսի օյինը. հոճա պան, մեզի մա-
լիմ էղիլ էր քու զալուտ:

— Վը տեսնիս, իտա մարդը աս տարի ալ կու-
կայ—արժանի չեղայ ասելու. կնայիմ, ոչքիս կերեալ
տուն ներս կը մտնիս.

Տահա ինչպէս հարցունունք,—

— Ничего.

— Ան չէ ամա Շլթրպերեքովը աշխարք կա:
Էղածը կա ամա...

— Ի՞նչ ամա...

Քըռ-քըռ պաշայեցին խնտալու.

— Չիմ հասկնալ, ասի. էյ վաղը կերթանք կհաս-
կնաս ասին—էրես էրեսի հայեցան, կէնէ խնտացին:

Քեշ քաղցած էի—աս տեղը քեպապ կայ ասի.
չատ տտենէ կերած չիմ:

— Քեպապ կուղիանը Սամսոնին մաղաղին եր-
թանք ասին—եղանք տեղերէս: Շատ հեռու չէր. մէկ
կանիպաշին հասանք:

Կերանք խմեցինք, կալաճիով—պանով աս տե-
ղը իրեք սահաթ ժամանակ անցուցինք. աս անգամին
ստակը հոս ինծի տալ չի թողցուցին իրենք տուին.—
Չէ Մաքառ Զախտովիչ, մեզի խորթ օրինանաւոր պան
չիկիտցողի տեղ մի տնիլ: Տուն հերու պատիւ արիւր
—աս տարի ալ նեպեթը մերն է: Վաղը սահաթը 4-ին
էտեւա կուգանք Շլթրին «աման» ցուցունելու:

— Խօրթ ի՞նչ պան է. չասիք:

— Համբերութիւն ունեցիր, վաղը կիմանաս:

— Էյ, կէնէ կէնէ:

— Շլթրպերեքին կլոխը կօտօշ էլլի է:

— Ինչպէս, ի՞նչ կասիք, երբ:

— Ե՞րբ պիտ լա, թամամ 9 ամիսէն քուկուդ
էրթալէզ վերջը մարդուն կլոխը կօտօշ փանեցաւ:
Ասին, ու խնտալէն քալիւեցան քովէս, ես ալ էկա իմ
նոմեոս, ամա օրինաւոր պան հասկըցած չէի: Վերջը
մէկ քիչմէն ֆիթիլիս առաւ ինչ էղածը: Վարիսա ..
ամա չէ... неужели... շան լակոտները էրէշ աղաքին.
վրաս խաղացին, կիտին:

Ամա ով կիտնա, աղբար, խաթէ կարող է պա-
պահել, ուստի *неровенъ часъ* կասէ:

Մէկալում օրը տեղէն էլլայ, ոահաթարդ էի, հա-
ման թոսամվայ հաստ—վըզ Նախշվան Շլթրպէրէքսվին:
Սահաթը 10 կըլար զայիւր, զվանօք տուր—տուրը
պացին, նէս մտա... Բնէ տեանիմը աղէկ է՝ քէնի-
փիքեաս հաստած պէշիկ կօրէ: Նիւ-եփ ճուրը կուլթէս
վար լցին, կիտիաքի, ոտքերս թուլացան, ինչ ասելուս
կիտէի, ինչ անելուս. նէ խնտայի, նէ լայի. ապանօս
բար կըտուեցայ: Պէրէքէթ վէրսին իտա ժամանակը
տուրը պացուեցաւ մէկ հատ թմուխ, ստիած հաւ-
կիթի պէս էրեսով, կոկամ կոկամ աչքերով, ինքնալ
խուհուտում խուհուտում աղջիկ մտաւ:

— Մանեա, Մաքառ Զախառիչն է, բարեկամա-
ցիք. ինծիալ բուրս է, ասաց քիթին տակէն խնտալէն
ու ինքը տուս էլլաւ:

Իտա տեղը պացուեցայ, ոահաթ նէֆէս առի:
Շատ ուրախ իմ ասի: Նստանք: Նիշէփօս... կալաճի
վարպէտ աղջիկ, ճանո: Զը գիտցած պանն ալ չիքար,
քանի կնաց ճոշմիշ էղաւ, սախախուշի պէս պաշլայից
զրուցել, ուրախ մնաց քէնի փիքեաս: Աս հէմ վար-
ժուած էր, հէմ տեսօք, հէմ թաժա. ամէն խնտայա-
ծին մտանիհարները վարդ պացվածի կը լմանէր. թու-
շերն ալ ալտերահի կը կտուէր:

Մէմալ հայիս խանճըխը ինչ ասէնը աղէկ է: Աս
ատրի ալ խըտուէլէզ պիտ էրթաք, կասէ: Մսիւր էր
արածը, կէշ ամըշցայ,—անկաճ բօքէս թէք կարմրե-
ցա. ամա կալաճիի տակ չի մնացի:

— Տուք էրթաքնը, ես ալ կերթամ, ասի: Սուս
չի լսողս էղաւ, մէկէն տեղէն թըռաւ, խնտալէն փա-
խաւ: Աճէփ պէտք բան չէր ասածս, ասի, քէսթ ընկայ:

կը հայիւմ՝ քէնիփիքաս էկաւ. ճանո, հիշ ան կնիմար-
ղը չէր, զավախ՝ էրէսին կուշը տեղնած, հալաւը
վրան թուլ, համա կալաճի անել պաշլայից նը կէնէ
ան բեռթիկ կինմարդն էր:

— Աչքերդ լուս, գաւակներդ ապրած կենայ,
ասի: Նայալ—ուխտերդ ընդունական, պարի պսակի
արժանանաք, պսակվելու էկիլիք, ասաց.—Աղբօրդ
թիացալ դուք շատ ապրիք:

— Սիրականդ շատ ապրի, ասի, մէկ հատ աղ-
բար ունէի անալ մեռաւ. իրքսալ քիչ մնաց պիտ լայի:

— Խիստ փուխ սիրտ ունիք. մօտիլըցաւ քովս,
աչքիս մէջը շիտակ հայելէն, կամացկէկ անկաճիս
ասաց՝ ես բու օրդուդ անունը՝ աղբօրդ անունը արի
—հայիւք ճակատը ինչ պիտ կրիս: Սուս չը հասկը-
ցող էղա, աչքերս խոլոր մոլոր արի:

Ամա սիրտիս չուանը կտուեցաւ, պատասխան չի
կտայ տալու. պապանծեցաւ:

Իտա ժամանակը տուրի ծան էլլաւ, հայալ հա-
ման կալաճին փոխից: Ինչպէս վարպետն էր...

— Իտա հերվան արածա, ինչ հով պան էր ճանո:
Մենք ալայ մալայ հաղիւր էղիլ էինք—մէմալ հայիս՝
լսեցինք փախիլ է տէյին. ճառիդ էղանք, հալխին պե-
րանը ընկանք:

Ես թէմիդ պոնիկցայ. խափխանը ընկած մուկի
կլմանէի: Հապա, տեղով էր. «Միտանիլ անօրէն կը
կանիս երկնաւորէն»:

Վերջապէս ուժ մեկ արի, պերանո պացի, լեզու
էլլայ: Կիտիս ինչ է, քէնիփիքա, ասի:

— Անցուկը մոռացուկ է. ինչ էղիլ է էղած չէ՝
մոռնանք: Աստուած թող վերջը բարին անէ:

էկեր խստէթա Մանեան է, հերու չեղաւնը առ տարի կառնիմ, իման է:

- Հաւնեցար անպետէնը.
- Չեքի հալիւել, զարնկեցա պիլէ:
- Ամպէսէնը, եղնախա.
- Տունալ քենիբիբաա:

— —

Հանեցի ձեպէս Յ հատ քաթեռնիւրա. հազիր էղիբ, ասի. իրիկվան մատնին կը պերիմ:

Աս անգամին փոշման չեղայ—չի փախայ:

Իրիկվան պէն էր. սոյ-սոյի թօի էղիլէին. եսալ սեւ սեռթուք, մանիշքա պան, թախմ էղած, էկայ մէկ ձեռքս պուքէթ, մեկալը՝ մէկ փաշկա քանֆէթ, հերվան պարեկամներըսալ հետս, ներս մտանք:—Մանեան, քենիբիբաա, լաքէյները չիւրախներով տիմաց-ներս ելան. մուղիքնալ տանկուտամիշ անեկէն մառշ կը չալէր:

Կինին զարուսքան պօլ, սաղ գիշերը կերան, խմեցին, քէֆ արին. կէս կէս կալաթ խմեկէն իմ գլխալ քիչմը էլլաւ—անկից պաշայեցին ГОРЬКО կանչելու—Մանեայիս հետ շտահով պարզորեցանք... հալեցաւ.—ես, պալառ Մանեա, կերթամ—պախտաւոր էղիք, պարի պսակի արժանանաք, ասաց.—Մանեան՝ մեծաս է ասաց—ծերբը պար. հէյ կիտի տունեայ, տենեայ ասաց—ես ախռ մամայիս հետ ճանչվոր էյի: Պէտք էր միտքս ցրել:

Աս աս էր. իստ ժամանակը եօրթա արածի պէս «Послѣдній денечикъ» չի չալին:

Էղաւ տա. արտասուքներս պըլտը-պըլտը պաշայեցին վաղելու. արթիս պիտ պաշայէի էքիւռտաթմիշ

անելու. Մանեան սիրով աչքիս մէջը նայելով. վաղ էկիր չէնէ ես ալ կուլամ, ասաց. հաւան ալ պերէքէթ վերսին քաղաչքայի ման պերին—ձեռքէն պոնեցի հողիս, կը խաղսիս ասի—էլլանք:—Աս թանցին տիմաց соперникъ չունէյի и пошли վար վեր, վեր վար սաղի սօլի, մէկէր Մանեան ալ ինձմէն պակաս չէր—հալիսը անխարերին հաւնեցան որ, հարբածները այնմիշ էղան, այնխները հարբեցան:

Անկից պելլի է որ պէհէղիւր էղիլ իմ—աչքս պացի նը, կնայիմ պաճանախիս տունն իմ:—Աս օրը իրիկվան ես Մանեային հետ մէկտեղ ժամ կնացինք. կէնէ կերօն կնեցի, Ս. Դէսրգ պապային տիմացը վառեցի: Մէկ քանի օրէն կնացի իմ տեղս: Համբարձումէն վերջը հարսնիքս է: Մամայիս մուրառը պիտ կատարուի:

ԻՆՉՈՒ ՄԵՌՈՒՅԻՆ

(Պատկեր)

Թօփալ Տալիթը սոխախին քօշան նստած, սապախդմանէն մինչև իրկուն, սէփէթը տիմացը—կիւլեալանի, ծմերուկի կուտ կըծախէր:

Ո՛վ չիկտէր նարա. տղա, պանվոր, ամեննալ—նարա միշթերինէրնէին:

Էստուն տարի է նա աս պանին մեջնէր:

Ամառը արևին տաքին էրելէն, թաթաւին-թըրչըվելէն. ծմեռնալ փուքին-պոռանին զրնքտալէն, փատնալէն, չափալ-չափալ կըտանձվէր մէկ փոր հացի համար:

Առաջները կնիկը ետըտըմ կանէր, անօրալ վեր-

չն տարիները տամիա զարկիլէր, անկալ էր, անճախ տունի աշխատանքը կանէր:

Կեցած տունը, ազգաբնի մէջէն, չէքմիշ էրած, ցած թէփէյով—հաւի պուն առա, խողի քիւմէս առա, առ ուր պանէր, ամա մէջը մանէյիլըն՝ թէմիզ, պատերը աշա արած, ճերմկեցուցած, տապանը տեղին քարով զարկած: Մեպիլը հէմ հինէր, հէմ քիշ, տմա կէնէ թօղը սրբած, աթոռներուն վրան էրես քաշած, քամօտին վրան սիւղէնիէ սալֆէզ փրուած, պատին տակը սէքի, վրան տօշակ-եօղանը ծալք արած, սահաթալ ունէյին պատը կախած, հինութ, ճերմակ երեսով, զինճէլ-թօփուղով, պալապան ելլովանով. քոշանալ սուրբ, տիմացը խանալը վառած: Պէլլիէր տաէնով սրայի մարդ էրածները. կըռտ չէյին:

Շաբաթօրէր, մըթնիմ-չիմըթնիմ, Տաւիթին կնիլը էրէրալէն, պառկած տեղէն էլլաւ, տողացած ծեռով լամփը վառից, չայնիքով ճուրը փլեթին վրան տրից. չայ, շաբար, կաւաթ, թիքալ սթօլին վրան շաբից. ինքնալ յոգնած-թալցած, տառապալտ էկաւ փէնճերէյին քովը նստաւ. մանի մանի կտառնար, ծեռքը ամա խելըը տուսնէր—էրկանը կըսպասէր: Աղբատէյին, ծերէյին, տկար, ամա մեկզմեկու վրայ թօղ խոռնարմիշ չանէյին—անպէս սէրօլէյին:

Կէս սահաթ անցաւ չանցաւ, Տաւիթը լինկուլուղ-թօփալլամիշ անելէն ներս մտաւ. սեփեղը տրից մէկ քօշան, տաշախնալ—մեկալ, ինքնալ նստաւ քուրսիին վրան. կնիկը մէկ կաւաթ չայ լցեց, Տաւիթը առաւ, սուս փուս խմից: Տահա ուլմամ, հարցուց կնիկը. կլիս խախցուց—չուզիմ... ասածներ: Ասօր ե՞նչ սուսիս տաաց կնիկը—Ի՞նչ ասիմ, թախէթ կաւոր

քովս կալաճի անելու... ան, ան պէզմիշ էղայ, մեռնէյի խախէյի...

Ի՞նչ պէրանիտ էկածը տաւս կուտաս, տաաց կնիկը չար սահաթ կայ, բարի սահաթ կայ: Տահա պան չիմնաց, մէռնէյի խախէյին ո՞րտէ: Հայտա պառկէ. ան յոգնածէտէ՝ սառալապուռումիշ կանիս: Ինքնալ էլլաւ տեղէն, տօշակ-եօղան հազիր անելու. Տաւիդնալ պաշլայից Աստուածամօր տիմացը տղօթք անելու: Սահաթը խողած ծանով մէկ, էրկուս, իրեք... տաւը զարկից. խտա ժամանակը՝ տուսի տուռը ժաշկիթածի պէս էղաւ, անկից... ոտքի ծան, կալաճի շուվուլթի... էրիկ կնիկ կանգ առին, մեկզմեկի տառցան, պուզ կառած՝ աշք աշքի նայեցան: Արժանի չեղան պերան պանալու, մեմալնայիս, տուռը չաթըռտամիշ անելէն, կունկի վրայ պացվեցաւ... չորսհինքաւ մարդ ներս թափեցան, պողպաններէն պոնեցին, վար կոխեցին, վրաները նստան: Ստակներա, կանչեցին... ծան չելլաւ, մեմալ կանչեցին...

— Չունիք, չիքայ. լավեցաւ:

— Ի՞նչ կնայիք. հագուցէք կլոխներուն, ասին:

Փաթափաթ մէմը մէկի, մէմալ մէկալին կլխուն պալթայով հագուցին, հոգինները հոգացին:—«Ստակին պանը նայինք» ասին, էլլան փնառոցքի... Տունը էրթիքը վար տուին, ախտարկինտեր արին. քամօտ տուալ, սունտուք, տօշակ, եօղան կօտուցին, բակեցին, քրքրեցին, ծակուծուկ չի թողուցին... մեքատ պան չի կտան... փստ մնացին, ձքեցին փախան հաւատ, օրէնք, հար-մար քրֆէլէն. ինչու մեռուցին:

Մնաց սաղ, չիկպած, պատի սահաթը, անկից քօշայի խանալը: Անունքալ՝ սահաթը՝ չիթ-չիթ պանե-

ցաւ, պանեցաւ վերջը-վերջը թաթոեցաւ, խանութինալ
վառեցաւ, վառեցաւ, պլպլաց անցաւ:

Տուար խոռոզները խօսեցին, լուսու չանկերը
դարկին—լուսացաւ:

Ամեն մարդ, քուններէն վարթեցան իրեն գործին
կնացին՝ որը խանութ, որը՝ պաղար: Տաւիղին նը-
տած քօշան պարապէր, կուտ ծախսիս չիբար:

Պ Ա Տ Կ Ե Ր

Վաղապա.

Նօմայ մարդ—թօփ-թօփ, հոս-հոս, կայնած:

Պահը մէմը գլխները կըպըտըտին, հեռուն կը-
նային:

Հանա—գլխնօք, մաշինի ձան, հեռուն մութ
էրեցաւ... թախուտի... անկից փոյեզդը կտաղած գալ-
գաղանի պէս, դեռնին էրեսէն սողալէն, էկաւ — հա-
սաւ, թառս արաւ կայնեցաւ — ձանը մարեցաւ:

Կայնած մարդիկ մէկէն ի մէկ սեպեմիշ էղան—
նէֆէս առին, մէկ ապութ առաջ էկան:

Որի՞ն կըսպասէին.

Մեծ մարդ, հեռաւոր, սոյ-աղգակա՞ն, —պելլի
չէր.

Սուսունք ինչաւ, մէկ մինութ, երկուս, յանկարծ՝
վայվասունք, լաց, դռում լըսուեցաւ:

Վաղօնին մէջէն ծեր մարդ էրեցաւ, թրաշը հա-
սած, մազերը խոռոնուած, աչքերը արասունք:

Ամենը դիմաց վաղեցի, խոլթուլէն մտան, վար
առին:

— Քուրիկս, բարեկամներս, կանչից. — Ես եօխ
էղայ...

Որդիս... որդիս... մէկ հատիկ, չիչակի պէս չի-
դանուելիք որդուս կորուցի:

Խօսք չիգտան նարա ասելու, մխիթարելու, պաշ-
լայեցին ամեննալ մէկ ձանի լալու:

Փայեզդը տեղէն ժաշկըտեցաւ — աքաց, ուժօքին
կորայ, մուխը երկինք բացուցած, ու թռախ — թռախ
անելէն, զնաց — հեռուցաւ:

Մէկ հատ վաղօնը մէյտանը մնաց...

Անբախտ մարդու անբախտ որդուն դադարը
մէջն էր:

Դուռները բացին, դադարը մէյտան հանեցին:
Տէրտէր — տիրացուները ամբիծ ասին:

Հար, մար, սոյ-սոփ, սիրելի բարեկամներ — մեղ-
քըյան, լացին:

Անկից յլթափորը ճամբայ էլլաւ — շիտակ դէպի
գերեզման:

Թաղեցին... չիչակի պէս տղան յաւիտեանս բաժ-
նուեցաւ. կեանքի հէմ շէնութիւնէն, հէմ ցաւ ու
տանջանքէն:

Մնաց խեղճ հարը, սիրտը կսկիծով լցուած,
կսկիծ, որ ճուճուի պէս պիտ կըրծէ առանց անոր
սլ չարքաշ կեանքին վերջի տարիները:

Ինչի՞ համար էր ադ զոհը, որի՞ն պէտք էր նա:

ԱՆՈՒՇ ՄՕՐՔՈՒՐԻՍ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Անուշ մօրքուրիս մեռածը՝ յիսուն տարի կայ—
աւելեքով, դէրէ որ ես ան ատենը 8—9 տարեկան
էի—շինախ վաթսուսն անցիլ իմ: Անկից վերիէ միտ-
քիս քօշայէն պիլէ անցած չէ մօրքուր ունեցածս,

չխառնան մօռցված գնացած պան է։ Նորամէն ետև
անքան մօտիկ մարդիկ թաղեցինք որ՝ պապայիս, մա-
մայիս պիլէ մօռցիլ իմ։

Էրածի պէս կըլիշիմ, փոքր տղայ էի, տուսը նոր
ամառ պացվիլ էր, պախչաներս կանանչելու պաշա-
լիլ էր։ Ես խեցածի պէս, սաղ օրը տուսը ցրած էի՝
խըլլիկներ, ասեղի կողեր, պօճիկներ պոնելու հետէն։

— Մէկ ծառէն կիջնէի, մէկալին վրան կելլէի,
արալխատ կիջնէի ալ—հաճեթս չէր. օրը կանցնէր,
թաթրուս շունէի, մթանը անձախ նետ կուգայի—
անալ մամաս հաղար կանչելէն ետքը։

Մէկ սապախդան մը—կենէ ատպէս՝

— «Հաճէ ուրտեխ կորցվիլիս», մամաս կանչից
— վաղեցի եկայ։ Մամաս աչքը արտասունք, պապա՝
ալ հետը պարապար, հագված կայնիլ էին։

«Մենք պիտ երթանք, տուն նետ կեցիր» տաին՝
— արազան նստան, ելլան գնացին...

Աս օրը մօրքուրս մեռիլ էր։— Թաղում։

— Աղէկ, ասի—մէկ անկաճէս մտաւ մէկալէն
եկաւ։ Ո՛ր նետն իս, որ մօրքուրն իս, խելքս միտքս
խաղալու տուիլ էի։

— Աչքս մուրթ կոխած, կենէ վաղեցի գնացի
պախչան։

— Խելքս միտքս—պոնած խալիկներուն հետ էր,
անկից աչքիս իլիշմիշ եղաւ սվոճկներուն պոնը, որն
որ էնկ պացու ծառին վրան էր,—հով արի ցատկե-
ցայ, մեմալ նայիս, ծառին էնկ թէփէն—պոնին քովը
գտնվեցայ։

— Աս օրօտը չոխտան ես միտքս արիլ էի անե-
լու, մամայէս կըվախենայի—ասօր թաւը ցրեցի՝

նայեցայ մէջը՝ չորս հինգ հատ պտիլիկ պալաներ, տե-
ղին կտուցներով՝ ճրղ ճրղ կանչելէն տիտիկ արիլ էին։
Խոթեցի ձեռքս մէջը, կուգէի պոնել—հանել. կլխուս
վրան մեկալայմը մամաները թափեցան՝ պաշալեցին
մէկ ծանով կանչելու, խանաթներով երեսը քամիլա-
միշ անել,—գիտիսքի կաղաչէին պալաներուն չի
կպչիմ տէին...

Ես քիչ մը կանգ առի։

— Աս օրը՝ չի գտնվելիք մէկ հաւա էր, հան-
դարտ, խաղաղ, գետինը չօփ իյնէր նը—կսուէր, հե-
ռուէն հեռուի ծաները՝ հաւերուն կուտկուտասը, խո-
ռոգներուն խօսածը, շուներուն հաչածը—ամենը մէկ-
տեղ խառնված մեր աղպարը կուգար։

Տօն օր էր՝ Տառիայի մահլայի տաւուլ զուռնա-
յին չալածներէն թէք կը լսուէր։

Ես միտքի պաթիլ էի՝ ծիպիկներուն առնիմ չառ-
նիմ տէին, սիրտս խիստ կուգէր։

Մեմալ նայիս քամի եկաւ, Ս. Նիկողոս ժամին
չանկը լսուեցաւ. ախուր մեռելի չանկ կը զարնէր,
առեն-առեն ալ տէր-տէր—տիրացուի կարգումի ծան
կուգար։

Ես մէկէն սեսքեմիշ եղայ, ֆառղին գնացի ինչ
եղածը—աս մօրքուրիս կըթաղէին։ Մէկէն ի մէկ
ձեռքս քաշեցի—հանեցի պոնկալին մէջէն—ծիպիկ-
ներուն չի կպայ, չառի. առուճիս մէջի խըլլիկներուն
ապուլ տուի։ Նաքա ամենը՝ մէմէկ մէմէկ աչքիս դի-
մացէն թռան գնացին։

Ինքս ալ մէկէն սքլեցայ, տիրեցայ։ Տիմացս եկաւ
Անուշ մօրքուրս. նարա ինչպէս ինծի սիրածը։ Ամեն
անգամ, նարա տունը կնացածիս՝ քանֆեթներով, կար-
միր ներկած կոճերով—ճեպս իլինքցուցածը։

Պողոս, աչքս իլինքցաւ, կուգէի վազել, երթալ տեսնել...

Ծառէն վար ինչնեյուս եղայ—ինչած իքենսար կէսեն վար կըրուեցայ. պաշլայեցի ծանով լալ:

Զաւալը Հաբթա ճիճաներս՝ լեղապատառ աղշա՜նայէն վազից—եկաւ, լողողակից առաւ ներս տարաւ: Հաբթա ճիճաներս, հայ տվառեանին՝ Ասրամովինց մնացած եսիրներէն մէկն էր—բարեկամաբար մեղի պախշած, ինքը իհարկէ ոռւս էր. ամա՜ ինչ ոռւսնակ կալածի գիտէր, ինչ ոռւսի ժամը գիտնալ կուգէր՝ ոռւս ասած պանտալ մահն էր «հառքած խաղախ՝ նեռը» կասէր. մեր տունը մեծցիլ էր—հաւատարիմ, սրտացաւ, մեր տունն ալ մեռաւ.—թաղեցինք, ետեւէն շատ լացինք: Ի՜նչ և իցէ:

Ներսը պելլի է որ ես քունի գնացիլ իմ, բիշմը տաքուծիւն ալ ունեցիլ իմ, գերէ դարթեցայ նը, կը՜նայիմ՝ պապաս, մամաս քովս նստած, Տիգուանս՝ հեքիմս ալ տամարըս կնայէր:

Անկից պապայիս մէկ քովի տարաւ—անկաճին՝ «հածէ, աս պանը խարա հուսմայէ» ասաց. ինքնալ թուղթի վրայ ռեցերթ գրից, գրիս, փախածի պէս գնաց:

Պապայիս, գաւալըին ոռուռֆը բացուեցաւ. ախռ Անուշ մօրքուրս ատ ցաւէն մեռիլ էր:

Պերեքեթ վերսին, իտա ատենը ներս մտաւ մայիս հետ Պօռանին Անուշքան, մեր տունը երթող-եկող հաճիմայ էր:

— Կենէ ինչ պանի մէջ իք ասաց—վրաներդ կնայիմ ռահաթսըդ իք:

Պապաս ալ պատմից Տիգուանովին ասածը - «Զէ տահա հօրս ցաւը» տուաց՝ էկաւ քովս, պաշ մատը

թաց արաւ, ճակատիս վրան խաշ քաշից, պաշլայից քիթին տակէն աղօթք բաղէի, ինքն ալ վիրա կորինճ կուտար, ու բեքիթմիշ կանէր: Անկից ճակատէս բռնից:

— Մեղա քեզ Տէր, տղին ճակատը պաղ պուզ է ու, հուսման՝ տաք կրակ կլա: Սախըն ատ Տիգուանովին ասածին մի հաւատաք, նա ճեմը եարայէ կը՜նային ասածին մի հաւատաք, նա ճեմը եարայէ կը՜նային: Ուրիշ պանէ պեխապէր է: Նորէն կենէ ճակատէս պռնից—մէկէն միտքը պան ընկածի պէս եղաւ:

— Ի՛, հաքա, խե իմ ասա.

— Վայ լուսուս մօրքուրին ախռ մեղքըցաւ տա —մեռելիոխ է.—անկից տառցաւ մամայիս՝—Մայրամ, մէկ պահի աղղարնոց Մողտեսիին խանութը խրկէ քաբիկի բանդեհիր առ, չայի դեպով կուտաս—կանցնի—կերթայ:

Աժա ես, ինչ խարահուսմայ էի, ինչ մեռելիոխ—հիշ պան չունէի—ելլայ տեղէս, պաշլայեցի՝ վազվա՜տել, խաղալ:

Պապաս, մամաս խունտուսներէն ատ օրվան անբաղտութիւնը մոռցան, հաճիմային առին չայի մնացին:

— Էտե՞—հաճիմա, ասաց պապաս, մեմալ էրբ ճամբորդիս Հերուսաղէմ:

— Աստուած արժանի անէնը—մէկ շաբաթէն:

— Նայէ, ի՞նչ կասէ, տտպէս շաւաճի. աս բա՜նիւսն է:

— Հինգուսն է:

— Լեպլեպու, հատ պիտ բերի՞ս խօմ:

— Հելպեդ, ատ չիլանը, ճամբու խարճըս ինչո՞վ հանիմ:

— Անպէսէնը մեղիալ բեր, սասաց պապաս, — հանից մէկ հատ հինգնոց տուածը խոթից:

— Էյ, երթամ, շէն կենաք. Բրիտտոս պապայիս լուս Գերեզմանը դուքալ արժանանաք տեսնելու:

— —

Ատուր մեկալում ամառն էր:

Մէկ սապախթան մը կանոխ, մամաս ինծի զարթեցուց:

— Հայտա, պալաս, էլ:

Ասոր մօրքուրիտ տարին պիտ կատարինք:

Սունտումով թռա, ելլա տեղէս, նստանք խանաթը տուելը, կնացինք Ս. Նիկողոս ժամ. մտանք գերեզմանոց սոյ սօի թօի էզիլ էին:

Մամաս ցուցուց մօրքուրի գերեզմանը՝ մէկ հատ երկանկեկ քար էր—կապուտ զարկած, վրանալ կլոր շառի պէս:

— —

— Մեմալ ատկից վերջը, ինչ գնացիլ իմ, ինչ տեսիլ իմ—ստ ասածս յիսուն տարուան պան է:

Աս տարի քաղաքական դործով պէտք եղաւ Ս. Նիկողոսին գերեզմաննոցը երթալ—քաղաքի քանալի-գացիլ մակիսդալը Ռոստովին հետ միացնելու համար տեղ պէտք էր:

Քարեր, բարեր, քարեր—սլարապ տեղ չիքար անցունելու:

Հարուր տարվան հանգիստ բունէն մարդոց թառ-ժարժ անել մարդու ձեռքին չերթար: Տեղերը թող կենան: Աստուած ողորմի հոգիները:

Յանկարծ հեռուէն մէկ հատ գերեզման աչքիս ծանօթ երեցաւ, գիտիւքի բաւնալ իմ վրաս կնայէր,

մօտկցիլը կասէր. հետի մարդոցմէս քակվեցա, ելլա գնացի տա:

Կնայիմ, ինչ կնայիս: Ճանչցա. միտքս ընկաւ յիսուն տարվան անցած պանը: Անուշ մօրքուրիս գերեզմանն էր: Սեւամէթ կեցած էր: Ճեմը թեմելի մէկ-հատ թուլան փշրվիլ էր:

Հայրմերկինք աթի, նստայ վրան, բարիւոս վառեցի: Միտքս ընկան հին բաներ:

Տղայութիւնս տիմացս եկտու, մամաս, պապաս, մեծաս, մօրքուրս, տայիս, ծառին թէփէն, սվռճիսին պունին քովը հստածս,—սիրտս քեշ արի քիչ մնաց պիտ լայի:

Կնայիմ հետի մարդիկս մօտկցիլին, ինքս ինծի բռնեցի:

Իսկ ստ տեղը մօրքուրիս գերեզմանէն ճոկ, ճեմը պարապ էր. հետիս ինժեներները յարմար գտան մակիստալնի թռուպան հոտէն անցունել:

Ձաւալը մօրքուրս՝ կենճ, անխնտաց մեռիլ էր—ուրիշներուն գերեզմանները հանգիստ պիտ կենան մինչև գալոցն Բրիտտոսի, իսկ քուկտը հիչ չէ՝ մէջ պիտ խաղայ քանալիգացիան պաշլայիննը:

Ամա ո՞վ գիտնայ, իշալահ, հինգ տարի է, բլանն ալ, ստակնալ հագիր է՝ երեսը նիք տեսնիլ: Ձաւալը քանալիգացիա.

Շինտիս ալ գերեզմանին մեջէն պիտ տարուի կտսին—իշկիլ կանիմ՝ ալայ մալայ չիթաղին:

Նիստ նայէ անժամանակը—մինչև Յարութիւն մեռելոց:

Յ Ի Ն Ո Ի Թ Ը

(Տպատրուծին)

Մեր քաղաքին, չեղը Չատու Օպայէն քիչմը վար, Պաղ տէրէին մնորովը, մէկ-երկու հատ խուժուռներ կան—վրան զըշուած տուններ, չէքմիշ էզած թէփէյով առաններ, մէկ քանի հատալ վիշնայի, կոկամի ծառեր—թապըւած, վրան հայող չկայ:

Ամա տեղը՝ խիստ տեսօք, սէֆալը տեղ է. մէմը որ՝ ամառուան էնկ տաքին՝ սալխըն է, ասոր համար ալ պէլի է որ Պաղ տէրէ ասուած է, մէմալ՝ ջըհորի ջուրը անթիքայ բան է, մօտիկ տեղ չկայ ադպէս թէմիդ, պաղ ջուր. խմելէն չիս կըշտանալ, սիրաբղ կըփառաւորուի:

Մեր չելին մէջը իմ էնկ սիրած տեղսէալ դործով չել գնացի՝ արեւին տաքէն յողնութիւն տունելու համար՝ արապաս ման բերել կուտամ ադ տեղը: Արապաճիս ձին թուարմիշ կանէ, արծելու ապուլ կուտայ կանանչ արօտին վրան, որն որ հոտ խիստ պոլ է, ես ալ կնատիմ, ես եսաթամիշ կըլամ—ատ տեղը մէկ քանի հատ հին ժամանակներէ մնացած գերեզմանի քարեր կան—ադոնց վրան: Նաքա ալ ունին իրենց անցեալը, իրենց պատմութիւնը: Ասկից հարուր քառսուն տարի առաջ Խըրմէն մէկ 30 եւ 40 օղուշախ գիտութեամբ-անգիտութեամբ եկիլին ընկիլին ատ տեղը, տեսիլին, որ պէտք բաները կայ՝ ջուր, խամիշ, արոտ—համան խուռմիշ էղիլին-մնացիլին:

Ասածներէն ադ շինարարական ջըհորին տեղը վազած չուխախ եղիլ է, հէմ անքան ջուրը պօլ, որ տէրէին մէջը կայնած եղիլ է, ձուկ կուղիս, կառավիթ—մէջը իլինք, չորս քոփն ալ խամըշըլիսով փաթթուած՝ եղաւ գնաց տա, ադկից ադէկ բան լինչ պէտք է.

ուտելիքը կայ, խմելիքը կայ, վառելիքը կայ, տաւարի արծելու տեղը պօլ, ցան ցանելու տեղը անծար:

Շտէ ադ տեղը էփփէթ տարիներ կեցիլին, աշխարք էկիլին, կարգուիլին, մեռիլին, վերջը տաղմիշ էղիլին, ելիլին. որը քաղաք գնացիլ է, որը գեղ—մնացիլին մէկ երկու-հատ խուժուռներ, որ մինչև այժմս կան, ամա մէջը մարդ չիկայ:

Առաջները, շատ տարի առաջ, մէկ քանի հատ մարդիկ կային: Որը ցան կը ցանէր, որը թուար-ոչխար կը պահէր, ամա երբ քաղաքը տեղերը կառից ու պաշլայից թանգ թանգ թուկով ծախելու՝ ադոնքալ վերջացան:

Ադոնցմէն մէկ հատին խիստ միտքս է՝ Չուպաուի Սերոբ կասէին, տոխսան տարեկան մարդ էր՝ ամա տաւաճի, էրկան պոյով, մեծ պըլըխներով, պոյնուզ քիթով, խապա ձանով. ինձի տեսածովը՝ համան կը մօտկընար. հին բաներ շատ գիտէր. ամա լինչ ֆայտա, հարցմունքիս պատասխան չէր տար, իրեն սիրած բանը, իրեն խելքին փշածը կը պատմէր՝ ձի, հարամի, ուժով մարդու, Խալիպին Պասուկին գիմացը աթըլը խառաւով էղածը, Չասուին հարամիին հրաշքները կըպատմէր:

— Սերոբ պապի, ինչպէս Չասուինէն վախեցած չիս, չել—չելոտան կեցիլիս, կասէի:

— «Ինչ մըսիլը կանիս, իմացար մը.» ինքնալ կը տաքնար, պէպէտէմիշ ըլալէն կասէր՝ «Ադն, ես տասը մարդու գիմաց դրած մարդիմ, ձեռքս մէկհատ փառէ չոխմառով, իմացար մը. Չասուինը, կասիս, հարամէն հալիսը զար-զար կանէին Թայդանին ճամբան, իմացար մը, նա ինձիմէն կը վախենար, կտրիճ եղածս գիտէր: Մէմալ Խալիպին չի կպէր:

— Եյ, քեզիմէն ուժով եղածէդ կվախենար—
Խաղաղին ալ կպած չէ կասիսու, ադ ինչէն է, հապա:

— Ան, իմացար մի, լսած չիք ինչ, վեցհաղար-
եակ գիրքը ճէպը դրած կըբալէր, դուն շախա՞ կանիս,
իմացար մը, վեցհաղարեակին հետ. ամեն կառ-կապ
կը բալէ, թըլըսըմ է:

Պապին մեծ բաւական կմար իրեն բան պատ-
մածէն, ամա պելլի էր, քիչ մը կը փչէր:

Եփփէի տարիներ Սերոբ պապին տեսած չէի,
աչքը չի տեսնիլ, կասէին:

Մէկ տարի մը. չիգտիմ արձակման հինգշաբթին
էր, ոտնալուսնի, ես չէլ էլիլ էի: Աչքիս կերևա՞յ,
կնայիմ Սերոբ պապին օպային թէփէն, տայեախին
թէքմիշ եղած կայնիլ է. Հեռուէն Սուրբ Խաչի ժա-
մին չանկին ձանը կը լսուէր, քամին ան սեմթէն էր:
Պապին աչքը փակ, միաքի պաթած, պելլի է որ չան-
դին ձանը մտիկ կաներ. մօտկըցածս պիլէ չիմացաւ,
անբան խորկըցիլ էր:

— Բարե, Սերոբ պապի, ասի. մարդը մէկէն մէկ
սեսքեմիշ, եղաւ, աչքերը ճմուից, նայեցաւ, ամա չի
ճանչըցաւ:

— Ով իս, ջանս:

— Ֆէլան իմ, ասի, անունս տուի:

— Բարե, բարե, ասաց, էանէնալ աւելցուց.

— Մաշալլան, ասորուան օրս հալիսը ժամ կեր-
թան, դուն չէլ էլիլիս.

— Ժամը ծեր մարդու տեղ է, ասի, դուն ինչի՞
գնացած չիս, ասի.

— Հէյ պալամ, ասաց: Այսուհետե իմ տունալ
հոս է ժամալ չելը ծնիլիմ, չէլը մէծցիլիմ, չէլնալ
պիտ մեռնիմ: Հանա կայնիլիմ Սուրբ Խաչ պապայիս
չանգին ձանը կը լսիմ, աղօթք կանիմ: Աստուած

պապին ամեն տեղ է, կասին, նա հոսէնալ կը լսէ:
Անկից նեպթիէն հառչից: Ա՞ր ժամն իս, ոտք չունիմ
բալելու, ձի չունիմ հեծնելու, ինչպէս երթամ:

Ադ վերջի տեսածըս եղաւ. անցաւ պէքիմ ադկից
ալ 25 տարի:

Չատկի օրերը՝ պարապ օր էր՝ չէլ ելլայ, սաղ
Թեմեռնիքին պօյովը անցայ: Ուրտեղին առաջուան
խուժուռները՝ Շապըշնիքին Մինասին, Խաղիղին Խա-
չերեսին, Մոռպաշին Սակիոսովին ու տահա շատ շա-
տերուն՝ անոնց տէրերուն իզը-թոզը մնացած չէ,
խուժուռներն ալ անցիլին օտարին, էկէր տահա մէկ
բանի հատ կանը, անոնց մէջնալ խառափուլը՝ ուռս է,
առնետաթը՝ Պոկառ. շտէ ադպէս ամեն բան ձեռ-
քերէս կամաց կամաց կերթայ՝ տուներս, տեղերս,
սեփական-խելքերս... կօտարանանք մեզիմին:

Քալելով քալելով եկայ-հասայ կենէ իմ սիրած
տեղս. գերեզմանի քարերը ճեմը տեղն էին, մէկ հատը
աչքիս աւելի երեցաւ, նստայ վրան, պելլի էր որ
Սերոբ պապին գերեզմանն էր:

— Հայ կիտի անձաւոր աշխարք— ասոր կաս
վազը չիքաս. միաքի պաթեցայ թափըլմիշ եղայ...
քունի կնացի մէմալ նայիս ճանկըլ-ճանկըլ ճաներ...
զարթեցայ... ուռս մանտաթիւն չանկին ճաները:
Ադալ առաջ հայի տեղ էր, Չուկայի խուժուռ կասէին,
անուանի եմիշի պախչայով...

Սահաթը վեց էր ելլայ տեղէս, ճամբատ Սուրբ
Խաչին խուժուռն մէջէն էր: Աս տեղը տահա բնա-
կիչները հայերին. անոնց ալ էճելը Բօտկըցիլ է. հո-
ղադործին՝ ինչ ցանելու տեղ ունին, ինչ արծելու.
հոս-հոն որը պատին եաստամիշ եղած, որը կուկուզ
նստած, խոսեթի պաթիլին, մնացիլին:

Ու՛րդ դացա խասեւթը մտիկ պիտ անէ. մեր նոր աղաները, նիստ նայէ. քեմինէ հայ-հայ, քեմինէ վայ վայ:

ԿԱՐՄԻՐ ՎՈՃԻԿ

Ատենով ժամանակով Ադամեւային գրախտը սաածներէն՝ իսկ Հայաստանին տեղն է եղիլ է:

Սուրբ գրոց մէջ ալ, գրվածքի հետապով, թափ ստպէս կելլէ:

Թրախտ սաած պանտ, գիտիք խօս, ինչ սօյ պան է. ծառերուն, չիչակներուն, եմիշներուն՝ էնի ֆիտանովը, կունեւմանը, համովը: Օպաները երկինք հասած—պացո. չոռխախներուն ճուրը—թէմիդ, պաղ. երկինքին կունը փէրիգէյի պէս—կապուտ, աստղերը ցոլունէն ցոլուն. ծառերուն տակը—չուքը սալին. պիլպիլները լուս պարի լուս—կղզւորուցին. հաւան երեւի. քամին ֆըշ-ֆըշ երեւիտ կը փչէ. կեր, խմէ, քալէ, պառկէ, կանանչ խատիֆայի պէս արօտին վրան լվառլամիշ եղիր, անկից ոահաթ, անուշ քունի կնա: Ի՛նչ խամ, ինչ խասեւեթ:

Չաէ ստպէս, թանսխ, թէյֆէ տեղ կապրէր, աս կից շատ տարի առաջ—ատենեկով ժամանակով—հայ աղգր: Ամա Ադամա մեղքէն վերջը—նաքա՛ իհարկէ իվառլամիշ չիլային—աշխատանքով կապրէին՝ վարդի ծառերէն կիւլեաղի կը հանէին—թութի ծառէն—էպուշոււմ, խավողէն կինի կը քամէին, ատունցմով առուտուր կանէին. հողադարձութիւն, գենիհաթ, ատ նացա էնի սիրած, հասկցած գործն էր:

Ադպէս ադպէսով հայերը աշխարքի երեսը յայտ-

նի աղգերէն մէկը տառցիլ էին: Գեղեր, քաղաքներ, սարայներ, վանքեր, թագաւորներ, 3000 կառիճներ, քաջ վարդանը գլոխ կայնած լուսէին:

Ամա ինչ ֆայտա, հայերը քրիստոնեայէին, չորս քովի տիրացիները՝ Տաճիկ, Պարսիկ-մեկալայմը անհաւատ աղգեր:

Հաւատ մահանա, —կեառու էումենի, կասէին:

Ասօր՝ մէկը, վաղը՝ մեկալը, մեկալօր՝—ամենը մէկաեղ, կըթափէին վրաներս, կը թալնէին ունիւմ չունիմներս, կը փախցունէին կնիկ-աղջիկներս. կնա տիւմացի:

Անխտար արին ուր, աղլի Արքայութիւնը դժողը դառցուցին: Դժոխքը խօս սատանան պիլէ չի տիւմանալ:

Անպէս ալ մենք չի տիւմացանք, տանակը—ուկոռներու հասաւ:

Փախչող, փախչողի. ցիրուցան եղանք, պատէ պատ ընկանք. արարած աշխարք փովեցանք:

Մենք ալ, շինտիւման նախիջկանցիներս, սաածներէն՝ Անի քաղաքէն ինք եղիլ է. կործանվելէն վերջը սիւրբիւով կեչմիշ եղիլինք—եկիլինք ընկիլինք խրիմատտին:

Քեօռ հաւին պունը Աստուած կը շինէ կասինը՝ իսկ աստպէս:

Նորէն մենք Արքայութիւն ընկանք—կէնէ ան պաղերը—պախչաները, համով եմիշները, չոռխախները: Վըայէն տահա ճապա՛ Սև ծովը:

Քանի հարուր տարի աս տեղը կենալներէս վեր-

Նը, մենք Խրիմը մերը կ'իտէինք. խորթոր մերին պէ՞ս պան էր,— Բէֆէ, էսքի Խրիմ, Խաբասու, Օրպագար-հայով իլինքցիլ էր։ Վանքեր, ժամեր, հինգ վե-ղեր ունէինք։— Գործերա էր՝ հողագործութիւն, զենի-հաթ, պախչաճութիւն, կային զենկին աղաներալ ասիա հասապով։

Մեզի կաշոյ չի կար, անհանդիստ անողալ. հոնի
Տաճիկներուն հետ մուհապետ կապրէինք, մէմը տե-
ղերս կալիւէինք:

— Միաքերուս քօշայէն անցած չէր, որ տեղե-
րէն պիտ շարժինք. մէկէր միասիկքի ճեղհներս էկիլ
է էղիլ է: Օրին մէկ օրը մեզի մէկնատ եպիսկոպոս
կուգայ, քարոզ կուտա, որ մենք Երաթեռնա Մա-
զունիին դիմինք, որ հա Ագաթի ծովի սէմթերը հոյ
տա: — Խորհուրդ սէհպէդ կանին մեր աղա աղալար-
ները — կուտան իրենց յօժարութիւնը:
Շատ ժամանակ

Շատ ժամանակ կանցնի չէնէ քիչ՝ տեղով չիկ-
տիմ—մեր խնդիրքը կը կատարվի: Մեղի կուտան մեր
գեղալիներուն հետ մէկտեղ 70,000 տեսեթին հող —
բնովելիկ, մեր գաղապտանը, հեպէդ ագ ոլաշխիշին
մենք առջի մեկուկ մեծ խնտում էինք,
— Ամա երբ...

— Ամա երբ եկաւ հասաւ երթալու օրը, երբ մաճառ արապաները ճառլ-ճառլ եկան, տուռերուս տիմացը թառս արին կայնեցան, ուռուֆներս պտցվեցաւ, աչքերս մուծնեցաւ: Ամա նեսեհտէ, ուշ էր, հային խեղճ վերջը կուգայ:

Թապալեցինը ծնած, մեծցած տեղերըս, տուներս,
թէ՛ճեմիլլէթներըս, ծկակ-ծկակ վրան հայեիէն, աչքերս
հաւ մնաց:

Ճամբար ելլանք:

Ուրտեղ էր գնացածներս՝ Թանգուրն չեղը, — ցուրտ,

պաղ երկիրը, ծուներ թէփէնեբուս: Ի՞նչ ճամբան տե-
ղով կիրառէինք, ինչ լեզուէն կը հասկնարինք:

Տառ հալած եկանք հասանք, տեղաւորվեցանք,
էյ շաէ, շունն ալ ծմեռէն տմառ կելլէ:

Առաջին:

Երբոր ամառ կուղարնր, պաղերս պաղչաներս
աչքերուս տխրացէն կտանէին կը պերէին, խանութ
ունէնայինքնը չօխթան պիտ թռչէինք, պիտ երթա-
ինք, ամա մենք ճամբան պիլէ չկտէինք:

Միտքերն է, ամառը, Զատիկի օրերը, կարմիր պոճիկներ մեյաան կելլէին, տղա ժամանակներս կը պոճիկներ, աւուճներու մէջը կը տնէինը, կը խաղապոնէինը, աւուճներու մէջը կը տնէինը, կը խաղապոնէինը ու կը հարցունէինը պոճիկին. «Խրիմին ճամբան ո՞րն է», «Խրիմին ճամբան ո՞րն է»: Ատ խօսքերը հարուր տարիներ առաջ տալած է, միտքը պելլէ պան է՝ սիրտերուն կսկիծը Խրիմէն ելածներուն պոճիկէն ճամբա հարցունելով կը թեթեցունէին:

Տարիները ետև ետևի անցան:

Կէշիմէի խասեկէթ, տունի, պալազադալի խանըր,
կարգիկ, ծնել, մեռնել, ատ խալապալըխին, արալըխը
— Խըլմը կամաց, կամաց մոռցանը, խասխաթի հզանը
տեղերս, մնացինը:

տեղերս, մնացինք:
Առջի տարիները մեզի ապրուստ տուողը, մեր
գլխացած զենիհաթն էր՝ խազիզուծին, խուլմճիու-
ծին, թիքիճիուծին կանէինք. բօստալ, պապուճ, խաթը
կը կարէինք, կապրկէինք:

Անկից զանցան փոխվեցաւ ու խարճերս աւել-
ցաւ, առուտուրի զարնվեցանք—մամուռէն պաշլայե-
ցինք, քանի կնացինք խոշորցուցինք, էնկ առաջ քա-
ղաքին մէջը, անկից գեղեր, եռամունքներ, վիրա գոր-
ծերս կը մեծցունէինք, հետը պարապարալ խարճերս:

— Քիվ կեանքերս վերջացաւ, ֆօռսերս մեծցաւ, պար-
ծանք բան. նեչեւօ, եօլա կերթանք. փանք Աստու-
ծոյ:

Ամա աս տարի—մեր ռահաթ կեանքը, կիտիսքի
անհանգիստ եղաւ—Նախիջևանը մերն էր կիտիսքի.—
շինտիս ձերը չէ կասին:

Հոս կրվածներէս վերի, 140-ում տարին անցաւ.
Թանդուրն չելլ մենք արքայութիւն տառցու-
ցինք, ուրտեխ կմայ քու Խրիմա. շինտիս ծառերուն
աղեկնալ հոս է, ամեն պաննալ. ամենին ազպարը
չոռխախ, ամենին տունը էլեքտուիչեստալա, սոխախ-
ները մաստաւոյ, չամուռ ինչ է՝ չիկտիս: Կիմնաղի-
ներ, գիադոներ, գիրք կարգալու տեղեր, սիրալա ինչ
կուզէ, աս ամենը մենք արինք, ան տեղի տախո-
տովը, որ նոր մեզի հայերուս բախշիլ էր, ողորմած
հոգի Եքաթեռինա թագուհին: Ամա աս ամենը—մեզի
համար չէ մեզիմէն ետե եկողներուն:

Մենք մէկ կաթ ջուր ինք օվկիանոսի մէջը,—
անալ քանի կերթա կը պակսի. մենք վիրա տուներս
կծախինք, տեղերս կը քիչնա իսկ ուրիշները կուզան,
կը գնին, կը շատնան, կը վայելին մեր աշխատանքը:
Ու մեզի ալ տահա գէշ կասին:

Ախնտիի տիմաց քիւրեք բաշել միտք չունի...
Զատիկը եկաւ, ելլան կարմիր պոճիկները մէյ-
տան, նացամէն պիտ հարցվի «Որտե՞ղ կեղէ մեր ճան-
բան»:

Պ Ո Ձ Ո Վ Ա Ս Տ Ղ

(Նալաճի)

Օրդախարէր մարդու տուն, դալը լուս, պատի շանտանները
վառած, թուղթի ստօլներ, բօշայի քօմնաթը տիվան, դի-
մացը կըտր ստուլ. վրան լամբ վառած: Տօնշահաւոր է. մի-
սաֆերները՝ որը նստած չայ կը խմին, կալաճի կանին,
որն ալ՝ կայնած բարիոսս կը քաշին, մտիկ կանին:

Աղակէկ ձաւոյ.—Աս տարի ձմեռ չի պըռնածը
մեզի, խանութպաններուս ամենիս մարը լացից. բոխ-
վոզ ասած պանտ հիչ չիքա, հէմ թաթաւ, հէմ չա-
մուռ, ճամբայ չի կայ. քաղաքի մարդոց տուած վա-
տակը քիչ էր, աս տարի անալ վերջացաւ, առանց
ձմեռվան հալաւի անցուցին, թեօփլի պարին պօմա-
ղէյ, պամպակ, չուլքի .. թօփերը չի բախած կեցիլին.
փլաթեօփի սըռօքները ետե ետե կուգան. սատկ
ունիս չունիս, հարցնող չիկայ. խատիրիանը մի տալ,
վեքսիլդ համան փռօղէստի կիւրկին: Բեռեուչօթի շահ
տալէն մեռանք. պարիին վրան զարկիլիս եղիլ է, ինչ
Ֆայտա. գնողը չի կայ, պառկամաշ ձեռքերս պիտ-
մնայ:

Օրրա ձաւոյ.—Շիտակ է ասածներս աղա, հանա, աս
տարի, ետալ, էլլա բօմուրի սքլատ պացի, վաղօն-վաղօն
—ազպարը պերինք պարպեցինք, չերէն չերէն շարե-
ցինք, շինտիս ալ նստիլինք փուքին, ծմեռին ճամբան
կը նայինք—թաթաւը վիրա կուլէ. շինտիվան քոմուր-
նալ որ՝ рыхлякъ—կէսը թաթրեցաւ: Թէմիզ ասալ
անոր լըմանեցաւ: Մարդուն մէկը մէկ արարիմը կա-
կի խանութ կը պանայ. փիւսիզը, աս տարին՝ աշ-
խարհ ընծայող տղաքը, ամեննալ առանց կլոխի կը
ծնին: (Ամենը կըլնատան):

Մէկը.— Խաբարի խաբարի տարի է:

Օրքս մարդը.— Գործը չիւանը. ալայսալ խաբարի խաբարին սրան կը գրվենք:

Մէկը.— Անձաւոր պան է. зато ասքան թաթաւներէն վերջը՝ ամառը ուռածայ կլայ:

Պատահական մարդ.— Գիտիք, ինչէ՞ կասբատա, ադոր պատճառը. ես անցեալները կաղէթի մէջ կարթացի, որ շուտով, մէքամ մեծ պաշով ասող պիտ ելլէ՝ Комета-է, շաէ ասոր սերբինալինէ՝ հոս թաթաւ, չամուռ, հոն փութ պորան, տար տեղերը ցըրաիլ են. պաղ տեղերը տաքցիլ են: Ուրտեխ դենաշարժ, ուրտեխալ ջըհեղէն էղիլ է: Հանա ալայ Փապիժը ջուր կոխիլ է կասին, էյֆելի պաշնիին ծարը տառնալթ կերեայ:

Անկից, առ պոչով ասողին պոչին երկանութիւնը չափ չունի կասին. էկէր մեր աշխարքին քովէն ասողը ման եկած ատէնը, պոչովը սովուր անէնը... վերջացաւ պաներս արիլիսնը գաիլ... մարդ, տունտեղ, ջուր, ծով, տէրէ-թէփէ, երկինք դեալին. ալայը՝ ալային պիտ խառնվին—մէկ մինութվան մէջը պիտ պըռնկին, էրին ծաղէկ պիտ տառնան:

Մէկը.— Գտանք կուներս: Էճէններս անպէսէնը մօտեցիլ է աս. ետքի աշխարքէ ասինք:

Աղակէկ մարդը.— Զիվին թաղած պօջբայի պէս-ապուլ տուից շաէ: Վաղ էկիք, պօջ պաներին: Ես շիտակս ասիմ, կեանքիս մէջը պոչով ասող տեսիլէի համա, նու ասպէս պոչով սուտ հիշ լսած չէի (որը կըխնտայ, որնալ զարմացած կնայի):

Պատահական մարդը.— Ինծի չիք հաւատարնը. հանա վարժապետին հարցուցէք: Անցած օր կալաճի կանէին: Անկաճովս լսեցի:

Աղակէկ մարդը.— Եսալ իմ աչքովս տեսիլիմ: Թռէ-

վօկին տարին էր. հինգ-վեց տարեկան տղայ կլայի ասօրվան պէս միտքս է: Թափ մեր տունին թէփէյովն էր: Բիշմը խոշորկէկ ասող էր, պոչնալ ցուռն, օրինաւոր մըսըրաւելի կլմանէր—պօյնալ էնկ շատը-մէկ կաղ:

Պիտ էրէ ծաղէկ պիտ տառնայ իմիշ մեր աշխարքը: Զէտահա մառաղ, էնկ շատը մէկհատ տուն էրինը, անալ մեծ պանէ. անալ՝ մեր փաժառնիները կանցունուն, շինտըխ ճուրերս պօլէ:

Վարժապետը.— Ներեցէք պարոններ, պոչով ասողը բամբթա է, որ ամեն ժամանակ չի երեալ մեզ, որովհետեւ մեզանից շատ հեռու ման կուգայ, և կերկնայ միայն այն ժամանակ, երբ մեր երկրին մօտենայ, գիտիք, որ տիեզերքի մէջ միլիօնաւոր ասողեր իրենց ճամբով կը շրջին, քամեթմանալ անոնցմէն մէկն է, որ երեսուն-քառասուն տարին մէկ անգամ կերեայ մեզի. նորա պոչէն ոչ մէկ վնաս մեր երկրին կարող չէ հասնել: Բայց կարող է պատահել, որ պոչով ասողը...

Աղակէկ մարդը.— Աշխարքը տակնը վրա անէ...

Տռնի տերը.— Վաղ էկիք փօթալուսթա, աղա, վարժապետ, пусть երթանք փօթեռանսին պոչէն պոնինը... հայտա ելէք, կրինդրիմ ձեզի:

Աղակէկ մարդը.— (Տեղէն ելելով) հոճայինք, աղբար, հոսինին մենք մեծ խելք հասուցինք՝ երկինքի ասողերը արթըմ վար պիտ առնինք:

(Կայնած):

Անցած օր՝ մէմը թեաթոր տեսնէիք, гала-է, ի՞նչ մահըս է, որին վիտուժմանէ, չիկաիմ. մէմը մեր կնիմարդոց վրան թող նայէիք պուլեանդին, խումաշին մէջը թաթիւրված էին հապա պօջերը.. վիզերը՝ պոչ,

մութիւնները պոչով, փլաթիններուն էթեքը պոչով—
մեղի քանադոնները—մեր պոչով կնիմարդներին, պո-
չով աստղէն վախ չիկայ, Աստուած կը պահէ:

Յանկաւն.—Համեցէք ջանս, սաօլը հազիրէ:
(Կերթան):

Վ Ա Ր Տ Ի Ք

Առանց վարտիք քալելը խիստ ամօթ, ճառիդ
պան է խօս:

Մէկեր մի ասիք՝ վարտիքով քալելը ատկիցալ
ճառիդ պան է էղիլ է:

Հասած կը լաք ախո շինախման մօտը՝ կնիմարդիկ
փլաթի տեղ վարտիք պիտ հագնին: Մեծ քաղաքները
սա մօտը արդի չօրթան է պաշլայվածը: Հոս տահա
հէպէթ հագնող չիքա, ամա լսողացինք՝ վարտիքցու
առնողներ էղիլին սւ մօտնը մասթեռսքոյի վաքազալ
տուիլին:

«Տահա պան չի մնաց, հազար վայ թէփէներուս,
սա էր պակաս»: Էրկու տանաիկին կնիմարդ, ախմաց-
տիմաց նստած, ատոր կալածին կանէին: Մէմալ նա-
յիս, վազելէն, լերթը պատռած, նես մաաւ նացա
թուր՝ Անիչքան, ձեռքը մօտնը ժուռնալ պոչած:

Պապուշքա, ասաց, նայեցէք նոր մօտը, կնիմար-
դիկ—աղջիկներ վարդիք պիտ հագնին, կը հաւնինք:

— Տար պակսեցոր աչքիս առջևէն, կանչից
մէկը.

— Ինչպէս առապել պան է, ասաց մէկալը:
Անիչքան պիտ ճարդըվէր խընտալէն:

— Հաքա, թէմիդ առջևներդ անցիլ է, տահա
պան չի մնաց անելու, կիտիպիլէ խանճիս, չէնէ՞ մի
տունալ միտք ունիս վարտիք հագնելու, աչքս չի
տեսնէ պէքիմ, մեռնիմը անկից աղէկ է:

— Չէ տահա ինչ, ասաց մէկալը. իմ Անիչքա
ստպէս ճառիդ—մասխարա պան չանիլ, պարկենտան-
քի ճամսիլ է ինչ:

Նորէն Անիչքան վազից-էկաւ մեծաներուն քով.

— Նայեցէք մէմը սա ինչպէս չը կը տնըվելիք
վարտիք է, մեծա, խապէս պանը չը հագնել կլայ:

— Հաքա, խե իս, պապաս, խե իս, առջևէ ան-
ցիլ է—ասին էրկուսնալ մէկ պերան, շախայով:

— Չէ պիտ հագնիմ, պիտ հագնիմ շթէ, տուք
ծերացիլիք, մէկ հատ տեղ չիք քալիք, մէկ հատ պան
չիք տեսնիլ, ռահտթ մինտարին վրան նստիլիք դա-
տողութին կանիք: Մէմը ինծի հարցուցէք: Ալլայը
վարտիքով ըլաննը, ես ինչպէս առանց վարտիք քա-
լիմ: Ամօթ չէ՞, վրաս կը խնտան:

— Հէլէ մէմը հազիր. նայէ ես քու գուլխուդ
ինչ կը փաթթիմ:

— Ի՞նչ պիտ անիս.

— Վարտիքդ կլոխդ կանցունում:

— Եսալ տիմացդ կայնեցա կասէ.

— Հաքա, պալաս, սուս—հոգուդ մեղք է, մոռ-
ցմը տօր ստալաթվան հաղորդաւածըդ.

— Հաղորդուեցայ տէյլին.

— Սուս պիտ կենաս:

— Չէ տահա ինչ. ծոււմ պահէ ասիք՝ պահեցի:
Կալածի անելն ալ մեղք է ինչ, տահա պան չի մնաց.
Էկէր մեղքէնը տուքալ մի անիք տա:

— Վայ թէփէիդ, վայ կուլխուդ, սա տարիքը
էկիլ էինք՝ ստպէս կալածիներ լսած չէինք. մեղաւ.—

ուռն էր, թողուեցաւ, աչքերը, երեսը փեշովը սրը-
րկց, անկից ինծի տառցաւ:

— Կերթայի, ի՞նչու չէ. ամա ինքերդալ կըտես-
նիք, ծիս յոգնած է,—կասէ:

— Չենէ՞ հաւան դէշ եղածէն չուզիս,—կասիմ:

— Что вы, баринъ! — կասէ: — Մենք հաւան
փնտռելու ըլանք նը, քաղցած կը մնանք. мы ѣ кор-
милищу жаль.

Անկից բիշմը կանդ առաւ:

— И васъ мы ѣ жаль,—ասաց, զնաց ծիին
զլիւր շփից, հանից վրայէն փռած բաբոնը:

— Նստէք,—ասաց:

Նստայ: Կամաց-կամաց սող ճամբան լափով, կա-
լածի անելէն զնացինք:

Կըպատմէր թէ առաջ խղմեռքարութիւն արիւ է,
անկից 300 մանէթ թոփ արիւ է, ծի, արապա, թախմ
արիւ է. 20 տարի է արապաճութիւն արածը, Նա-
խիջկան տուն գնիւ է. կնիկ, աղջիկ, տղաք ամենքս
ալ կըպանինք, կասէ. կնիկը պազարը կաթմածուն
կըծախէ, աղջիկը լուացքի կըքալէ, որդինալ Աքսայ
զաւոտ կըպանէ, «слава Богу».

Ամպէս շաահով կըպատմէր, որ հաւէսըս կուզար
ու, ի՞նչ մեղքս պահիմ. ցանկացայ խոտ մարդուն
տեղը ըլալ:

Առէք շինութի մեր հայ արապաճիներուն. դացա տղո-
ցը պիտի պետի-հաւա սորվեցնուս, պիտի հագուեցու-
նուս. անկից ձմեռը քոմուր, ամառը ալուր տուր.
ծին սատկինը՝ ծիի ստակ տուր, կենէ կանկաւս կենէ.
բիֆիրէն ջուկ պերնէն ուրիշ պան չիս լսիլ:

Բայց զարմանալու պանալ չէ, զերէ ոռն արա-
պաճին քուչուռէն մէյտան եկիւ է, տուն ունեցած չէ,

տուն գնիւ է. հայը տունը ծախիւ է, արապաճի եղիւ
է, դէպի ետ կնացիւ է:

Վերջապէս հասանք Ռասթով:

— Куда прикажете? — կըհարցունէ:


Տաւնիս սոխախի նումէրը ասի, արթիս մօտկցիւ
էինք եղիւ է: Սուր ման պերից, թառս արաւ կայ-
նեցաւ:

Ինչայ: Կընայիմ—թաթաւը դադուիւ է: Կուննին-
կանալ ամպերուն տակէն ելլիւ էր, լուս-պարի լուս
յորեկի պէս պան էր:

Տուր ժանէթնոց: Спасибо — ասաց:

Առաւ, մտաւ արապան:

— Трогайся, голубчикъ,— ասաց ծիին ու զնաց:
Մերունք պելլի է որ խոտի ստակ ալ չի վա-
տկեցան:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№	Էրես
1. Նոր տարին	1
2. Խուժում	3
3. Տեր Մեղա	10
4. Մարիցան (վարթևորչէք)	17
5. Պարկենտանքին կիրակին	24
6. Կաղանա	26
7. Ճրհոր փորողներ	30
8. Բիրեմիթճի Յլին	35
9. Սուրբ Խաչ ուխտ	42
10. Օհանային խաղան (կաղանտչէք)	48
11. Մայրամիլքան և Խաղարոս-ան (հին նախ)	56
12. Պաս-չալոյ Մելքոն-ան	60
13. Խուժողին պարոնը	63
14. Մաքա Մանուկիչը	66
15. Կախած մարդ (տեր Փախալեանին պատմածը)	70
16. Խոռեկզի կառիճը	74
17. Ինչո՞ւ մեռուցին	91
18. Պատկեր	94
19. Անուշ մորքուրիս քերեղմանը	95
20. Յինուկ	102
21. Կարմիր Պօճիկ	106
22. Պոչով ասաղ	111
23. Վարաիք	114
24. Ժիվէյնիք	116

10

39625